ԹԱՄԱՐԱ ԹՈՎՄԱՍՅԱՆ, ՎԱՆՈՒՀԻ ԲԱՂՄԱՆՅԱՆ,
ԴԱՎԻԹ ՍԱՄՎԵԼՅԱՆ, ՆՇԱՆ ԱԲԱՍՅԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

7

*Դասագրքի բովանդակությունը լրացնող
այլ ուսումնական նյութեր*

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն

Երևան 2023

Բովանդակություն

Մուշեղ Գալշոյան 3

Վիլյամ Սարոյան 23

Ջապել Եսայան 45

Գուրգեն Մահարի 66

ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆ
(1933-1980)

Նա եկավ և լսվեց ու սիրվեց...
Նա եկավ մեզ վերածնելու բարոյապես և զենք ու հայրենիք վստահելու բարոյական մեր ներկայությանը միայն:
Նա գնաց և վշտացրեց: Հիրավի սպասված, հիրավի բախտավոր մարդ:

Հրանտ Մաթևոսյան

- Կենսագրական տեղեկություններ
- Ժամանակակիցները՝ Մուշեղ Գալշոյանի մասին
- «Մամփրե արքան»
- Լրացուցիչ նյութեր

Մուշեղ Գալշոյան արձակագիրը մեր գրականություն բերեց հայրենազրկված հայի կերպարի նոր մեկնաբանություն՝ դառնալով այն գրական ուղու շարունակողը, որի սկզբնաքարը դրել էին Հրաչյա Քոչարն ու Խաչիկ Դաշտենցը: Նա իր հերոսներին Հայաստան էր բերում պապերի ծննդավայր Սասունից: Այդ հերոսները նոր բնօրրանում հաստատված, օրնիբուն աշխատող, Էրգրի կարոտը սրտներում պահած հողուջրի մարդիկ են, որ չեն համակերպվում նոր միջավայրին, նոր հարաբերություններին, իրենց համար խորթ մարդկային պայմանականություններին, միշտ ձգտում են դեպի հայրական ակունքները, դեպի բնականը, մարդկային անխաթար, ազնիվ հարաբերությունները:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ արձակագիր, լրագրող Մուշեղ Գալշոյանը (Մուշեղ Հովեի Մանուկյան) ծնվել է 1933 թ., Թալինի շրջանի Կաթնաղբյուր գյուղում: ԽՍՀՄ գրողների միության անդամ էր 1969 թ.-ից: Գալշոյանը նրա տոհմական ազգանունն էր: Գրողի ծնողները սասունցի փախստականներ էին, որոնք, Արևելյան Հայաստան հասնելով, բնակության վայր ընտրեցին Թալինը:

Մուշեղ Գալշոյանի հոգում ամբարվել էին Սասնա երկրին վերաբերող բոլոր հուշերն ու տեղեկությունները և հետագայում, երբ սկսեց գրել ջարդը վերապրած սասունցիների մասին, թվում էր, թե Սասնա լեռներում հենց ինքն էր եղել նրանց հետ, ապրել նրանց խաղաղ կյանքը, ապա և ջարդի ու տեղահանության մղձավանջը:

1957 թ. Մուշեղ Գալշոյանն ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի այգեգործության ֆակուլտետը: 1969–1971 թթ. մասնակցել է Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի գրական բարձրագույն դասընթացները: 1971–1975 թթ. աշխատել է «Գարուն» ամսագրում: Մ. Գալշոյանի առաջին ստեղծագործությունը լույս է տեսել 1959 թ.:

Բացառիկ են գրողի՝ Էրգրի կարոտն արտահայտող երկերը, այդուհանդերձ նա դարձավ իր հայրենիքի զարթոնքի, նորօրյա կյանքի, բնաշխարհի խենթ երգիչը՝ գովերգելով մայր հողն ու նրա մշակին և հաստատելով բնության ու մարդու անքակտելի կապը:

Լրագրական հոդվածներին զուգընթաց՝ 1983 թ. Մ. Գալշոյանը գրեց իր առաջին վիպակը՝ «Զորի Միրոն»: Սակայն արձակագրին մեծ ճանաչում բերեց «Մարութա սարի ամպերը» պատմվածաշարը (1981 թ.)՝ բաղկացած 20 պատմվածքից: Մ. Գալշոյանի մյուս պատմվածաշարերից են «Ծիրանի ծառը» (1989 թ.), «Պայուսակը» (1988 թ.): Նրա «Բովտուն» վեպը 1973 թ. արժանացել է Հա-

Մուշեղ Գալշոյանի տուն-թանգարանը Կաթնաղբյուր գյուղում

յաստանի գրողների միության առաջին կարգի մրցանակին:

Նրա լավագույն պատմվածքներից է «մարմարե արքան» (1982թ.), որը բազմիցս բեմադրվել է: Պատմվածքի հիման վրա նկարահանվել է ֆիլմ-ներկայացում:

2015 թ. Մուշեղ Գալշոյանի ծննդավայրում՝ Կաթնաղբյուր գյուղում, բացվել է նրա տուն-թանգարանը, որտեղ ներկայացված են գրողի անձնական իրերը, գրքերը, ձեռագրերը, լուսանկարները և այլ իրեր: Թանգարանի տնօրենն արձակագրի դուստրն է՝ Սիրանուշ Գալշոյանը:

Մուշեղ Գալշոյանը մահացել է 1980 թ., Կաթնաղբյուր գյուղում՝ հրացանի պատահական կրակոցից: Նա մի օր դուրս է գալիս որսի և երբ նստում է հանգստանալու՝ զենքն ակամա դնում է գետնին ու հանկարծ հիշում, որ ֆիդայիները զենքը գետնին չեն դնում: Գրողն ուզում է հրացանը դնել ծնկներին, ձգանը դեմ է առնում քարին. Մ. Գալշոյանն ուժգին քաշում է հրացանը, և փամփուշտը մխրճվում է նրա մարմինը:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ՝ ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Քարից բուսած տղաղանդ էր Մուշեղ Գալշոյանը: Քարից բուսած աղբյուր, և նրա ջուրն ուրիշ ջրեն է:

Համո Սահյան

«Սկվազնյաչոկում» նստած էր. սեղանին մոտեցավ մի երիտասարդ գրող, երկու շամպայն դրեց, անմիջապես հավաքվեցին այլ գրողներ, սաստունցիներ՝ Վրեժը Իսրայելյան, Տավրոսը Դաշտենց, Աֆոն... Բոլոր սաստունցիները խոսում էին բարբառով, էս գրողն ասաց. «Կարգին հայերեն խոսեք, ես էլ հասկանամ՝ ինչ եք խոսում»: Մուշեղը վերցրեց էդ երկու շամպայնը, խոթեց նրա գիրկը, ասաց. «Վերցրո՛ւ շամպայնդ ու գնա՛ այստեղից, որովհետև դու ո՛չ գյուղ ունես, ո՛չ քաղաք, ո՛չ էլ բարբառ ունես»:

Ռոլանդ Շառոյան

Շիտակից շիտակ էր, և շիտակությունն էր նրա ստվածը: Մարդկային բնավորության այս հատկանիշը դարձավ նաև նրա ստեղծագործությունների հատկանիշը: Այլ կերպ ասած՝ նա և իր երկերը երկվորյակ եղբայրներ էին: Մուշեղ Գալշոյանը մեզ հասկացրեց, որ պարտվածների կռիվը ավարտված չէ: Նրանք իրենց վարքով ու տեսիլքով վերակերտում են Հայաստանը, սակայն ուրիշ Հայաստան, ո՛չ այն, որ կոչվում էր Սովետական, այլ ուրիշ՝ այն, որ պիտի

դեռ գա, որ պիտի իր կռիվը տա ու իր հաղթանակը շահի, այն Հայաստանը, որի դիմագիծը պիտի կազմի առաքինությունը:

Ղուկաս Սիրունյան

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ո՞ր թվականին և որտեղ է ծնվել Մ. Գալշոյանը:
2. Ինչո՞վ է պայմանավորված նրա մեծ սերը Սասունի նկատմամբ:
3. Ի՞նչ կրթություն է ստացել Մ. Գալշոյանը և ինչո՞ւ է *Մանուկյան* ազգանունը փոխել *Գալշոյան*-ի:
4. Ե՞րբ, ի՞նչ պայմաններում է մահացել գրողը:
5. Որո՞նք են Մ. Գալշոյանի ամենահայտնի ստեղծագործությունները:

ԱՌԱՁԱԳՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ներկայացրու Մ. Գալշոյանի մանկության և պատանեկության այն դրվագները, որ ազդեցություն են թողել նրա ստեղծագործության վրա:
2. Ներկայացրո՛ւ ժամանակակիցների հուշերը գրողի մասին և արտահայտի՛ր դիրքորոշումդ:
3. Պատրաստի՛ր սահիկաշար, որ կարտացոլի Մ. Գալշոյանի կյանքն ու ստեղծագործությունը:
4. Ամբողջացրո՛ւ Մ. Գալշոյանի կերպարը՝ հիմնվելով ժամանակակիցների հուշերի վրա:

ՄԱՄՓՐԵ ԱՐՔԱՆ

(կրճատումներով)

1

Մամփրեն ահագին ժամանակ հետևում էր, թե երրորդ դասարան-ցի թոռնուհին ինչպես է այբուբենը սովորեցնում եղբորը, որպես թե նախապատրաստում է, որ տղան **գալ տարի** այբուբենը սերտած գնա դպրոց: Եվ տես, թե ինչպես է սովորեցնում. շուտասելուկի պես,- ա-բ-գ-դ-ե-զ...,- առանց ինչեցնելու, առանց ներդաշնակելու: Բա Մամփրեի սովորած այբուբենը ա՛յդ էր, այդպե՛ս էր: Վարժապետ տեր Հարությունը նահատակվեց, այբուբենը հո չփոխվե՞ց.....

- Գիրքն **հո՛ս** բեր... Դե բաց ու ինչպես մեջ գրքին է, էդպես գրուցե:

Կարդա՛ հատիկ-հատիկ,- խիստ պահանջեց Մամփրեն,- կարդա՛ մեկիկ-մեկիկ ու մեկիկ-մեկիկ **ցուցամատե**:

Եվ աչքը բաց էջին՝ լարված սպասեց:

- Ա՛յբ -բե՛ն-գի՛մ-դա՛-ե՛չ-զա՛...

- Համբերե,- լարված նայում էր տառերի **շարուկին**:- Գիմ-ից հետո հարկ է, որ էղնի՝ ե՛լ, Հովակի՛մ:

- Այդպիսի բան չկա:

- Լա՛վ նայե:

- Չկա, ա՛յ պապ, չկա: **Չիք**:

- Համբերե՛,- և թոռանը ծնկների արանքում սեղմած, մտածկոտ հայացքը այբբենարանին՝ Մամփրեն շշնջաց,- թե էդպես է, գիրքն է սխալ:

Թոռնուհին քաշում է եղբոր թևից:

- Համբերե,- **հերսոտեց** Մամփրեն և թոռանը պինդ սեղմեց ծնկների արանքը:- Այբուբենը ես կսովորեցնեմ իմ ձգուկին:

***

- Ա՛յբ , բե՛ն, գի՛մ,

Ե՛լ, Հովակի՛մ,

Դա՛, ե՛չ, զա՛,

Լծի՛ր եզան:

Վարժապետ տեր Հարությունը արտասանում էր, և իրենք խմբով կրկնում էին: Տեր Հարությունը հայոց տառերն էր ասեղնագործում ձերմակ պաստառին, հետն էլ արտասանում այբուբենը, և իրենք խմբով կրկնում էին.

- Է՛, ը՛թ, թո՛,

Վե՛ր կաց, Թաթո՛,

Ժե՛, ինի՛, լյո՛ւն,

Կապի՛ր քո շուն:

Տեր Հարությունը մեծ ու ձերմակ պաստառը կախել էր Տիրամոր նկարի կողքին և վառ կարմիրով հյուսում էր տառերը: Հայոց տառերը կարմիր են, բացատրում էր տեր Հարությունը, քանզի սուրբ Մաշտոցը իր սրտից է հանել ի լույս: Եվ կարմիր են, քանզի թրծվել են արդար Արեգակով: Եվ կարմիր են, քանզի սրբազան կռիվների են մասնակից եղել: Եվ ասեղնագործում էր հանդարտիկ, հեռվից ու մոտիկից ուշադիր զննելով, երբեմն այնպես վերացած, որ իրենց թվում էր, թե հայոց տառերը նոր-նոր հորինվում են, և տեր Հարությունն է ստեղծողը: Օրը

մեկ տառ: Եվ օրեր շարունակ իրենք կրկնում, հա կրկնում ու սերտում էին այբուբենը.

– Խե՛, ծա՛, կե՛ն,
Ո՞ւր է Հակեն:
Հո՛, ձա՛, ղա՛տ,
Միհրա՛ն, Միհրդա՛տ:
Ձե՛, մե՛ն, հի՛,
Կգանք հիմի:

Գյուղում բոլորը գիտեին, որ տեր Հարությունը ձերմակ պաստառին կարմիր տառեր է ասեղնագործում և որպես թե ի հիշատակ մշեցի այն ուսուցչի, որին սուլթանը, ասում են, կախաղան է հանել: **Մահապարտ** այդ ուսուցիչն է հայոց այբուբենը հանգավորել այսպես. «Ա՜յր, բե՛ն, գի՛մ, Ե՛լ, Հովակի՛մ»,– ներդաշնակ այնպես, որ երեխաները շուտ սովորեն այբուբենը և բոլորովին չմոռանան.

– Նո՛ւ, շա՛, ո՛,
Պրծի՛, Շավո՛,
Չա՛, պե՛, ջե՛,
Ուշ է, Վաչե՛:
Ռա՛, սե՛, վե՛վ,
Ծագեց արև:
Տյո՛ւն, րե՛, ցո՛,
Մա՛րդ աստծո:

...Իրենք պետք է ամեն օր, չհաշված կիրակի օրերը, ամեն օր արտասանեին, կրկնեին ու սերտեին այբուբենը, և ապա՝ գործն ավարտելուց հետո, վարժապետը տառ առ տառ պետք է սովորեցներ գրերը: Այդպես էին որոշել, բայց եկավ և ասաց. «Պատերազմ է, զավակնե՛րս, և ձեր հայրերին, հարկավ, ասկյար կտանեն: Գնացե՛ք ձեր հայրերի մոտ: Եթե տերը կամենա, նորեն կհավաքվե՛ք, և ձեզ կուսուցանեմ սուրբ Մաշտոցի գրերը: Իսկ այժմ, զավակնե՛րս, վերջին անգամ միասին հնչեցնենք այբուբենն հայոց»: Եվ այբուբենի վերջը այնպե՛ս էին ձգում, այնպե՛ս էին ձգում, առանց պայմանավորվելու բոլոր երեխաները միաշունչ

(և վարժապետն ինքն էլ, վարժապետն էլ) վերջը այնպես էին ձգում... Չէին ուզում, որ այբուբենը վերջանա.

– Վյո՛ւն, փյո՛ւր, քե՛,

Քելե՛, Սրքե՛,

Եվ, օ, ֆե՛,

Օ՜, ինչ զով է:

– Դե՛, զավակնե՛րս, տերն ընդ ձեզ:

Առավոտ էր, բայց գյուղը լուռ էր: Այբուբենին **դաշնած** կանչերը, որ իրեն թվում էր, թե մշեցի վարժապետն իրենց գյուղից, հենց իրենց գյուղից է վերցրել, բարձրաձայն ու բարձրախոս իրենց գյուղացիներից, այդ կանչերը չկային: Այն, ինչ ամեն օր կար, այդ առավոտ չկար, իսկ այն, ինչ չպետք է լիներ, կար. գյուղի շներն էին խառնվել իրար, կտուր-ներին կանգնած, դնչներն ի երկինք՝ կատաղի հաչում էին: Շները ինչ-պես էին հասկացել, որ թուրքաց սուլթանը պատերազմ է հայտարարել ռուսաց ցարին:

Գյուղ հասած լուրը ավետի՞ս էր, թե՞ բոթ... Ավետի՞ս է, թե՞ բոթ...

... Հոր հետ քայլում էին լուռ, **ելվերում էին** իրենց թաղը՝ Վերին... Վերին թաղ, Վերին թաղ և Վերին թաղի վերին տուն... Տան թիկունքին սարալանջն էր, լանջին՝ շաղգամի արտը, և շաղգամի արտն ի վեր՝ Մեհ-րեաղբյուրը: Առավոտյան ինքը Մեհրեաղբյուրի ջուրը կապեց շաղգամի արտին և ապա գնաց այբուբենը սերտելու: Իսկ ահա ջուրը կտրվել էր... Օսմանի լակո՛տ Օսման, աղբյուրի ջուրը էլի նա է կտրել, այդ ճպռոտ լա-կոտը: Որտեղի՞ց հայտնվեցին ու հարամեցին գյուղը: Գյուղը, փողոցը, հողը, ջուրը, աղբյուրը: Էն խեղճ պառավի հիմար որդին ղարիպության գնաց, գնաց հիմարը ու էլ չերևաց, և պառավը մեռավ, և պառավի հի-մար որդու փոխարեն որտեղից որտեղ այդ հարամ Օսմանը հայտնվեց ու տիրացավ տանը: Իր անունը՝ Օսման, լակոտի անունը՝ Օսման, աշ-խարհում էլ ուրիշ անուն չկա: Հայտնվեց, տիրացավ պառավի տանը և ասում է, թե տունը գնել է **գայմագամից**, այսինքն՝ գավառապետից թուղթ ունի: Երեկ-մյուս օր է հայտնվել, բայց գյուղի անունը արդեն աղավաղել-հարմարեցրել է իր լեզվին, իսկ Մեհրեաղբյուրը կնքել է Աթաբունար, որպես թե հին անունը՝ աղբյուրի նախնական անունը, այդ է եղել՝ Աթաբունար: **Սադայելի՛** ծնունդ, այդպիսի բան ինչպե՞ս կարող է լինել. չէ՞ որ աղբյուրը Մհերի անունով է: Առյուծ Մհերի անունով: Աղբ-յուրն իր պատմությունն ունի, Մհերը, ուրեմն, Սասնա տան Մհերը, հենց այստեղ՝ այս սարի վրա է առյուծին հանդիպել, հանդիպել ու դատարկ ձեռոք ճղել է առյուծին, և աստծո հրամանով այդտեղից՝ առյուծին հան-

դիպած ու ճղած տեղից, աղբյուր է բխել: Ա՛յ, այդպես է եղել: Եվ Միերը կնքվել է Առյուծ Միեր, իսկ աղբյուրը՝ Մեհրե: Ա՛յ, այդպես է եղել...

Եվ լցված ու **հերսոտ** քշեց դեպի աղբյուրը... Սուլթանը ռուսաց ցարին պատերազմ է հայտարարել, վարժարանը փակվեց, հորը ուզում են ասկյար տանել, վարժարանը փակվեց, գյուղի շները օրը ցերեկով խառնվել են իրար, վարժարանը փակվեց, դու էլ, Օսմանի ճպռո՛ոտ լակոտ, դու էլ Մամփրեի՛ն ես կռիվ հայտարարել: Հիմա կտեսնենք...

Այո՛, աղբյուրի ջուրը Օսմանն էր կտրել, իրեն հասակակից, ճպռոտ, բայց ցիցքիթ այդ լակոտը: Ջուրը շուռ էր տվել իրենց տան կողմ և նստել էր **ուրթին**:

Եվ հասնելն ու ոտքի տակ առնելը մեկ եղավ... հետո թևից բռնեց-շպրտեց իրենց հարամ տան կողմ և դարձավ ջուրը կապելու: Ծնկեց ուրթի մոտ և...

***

– Օխսա՜ղղղ...– Մամփրեն, թոռանը ծնկների արանքում սեղմած, ձեռքը տարավ գլուխը: Ծոծրակի մոտ այնպես իրական պոռթկաց ցավը, ինչպես, է՜, այն օրը, երբ այդ նենգ լակոտը, այնուամենայնիվ, թիկունքից քարով զարկեց-ջարդեց իր գլուխն ու փախավ: Փախչում էր և ուսն ի ետ քարերի պես շպրտում՝ Աթաբունար... Աթաբունար, որպես թե աղբյուրի անունը Մեհրե չէ, աղբյուրը քոնը չէ...

Մամփրեն ցավով տմբտմբացրեց անցած հուշերին: Օսմա՛ն, դու ճպռոտ լակոտ էիր, բայց դու պարծենալու իրավունք ունես. նենգորեն ջարդեցիր Մամփրեի գլուխը և մնացիր անպատասխան... Կոտորում եղավ, գաղթ եղավ, և Մամփրեն ճար չունեցավ, քեզ ոտքի տակ գցելու հնար չունեցավ: Մարաթուկ վկա, Մամփրեն քեզ այնպես կտրորեր, որ դու այլևս չէիր պղծի աղբյուրի սուրբ անունը: Սուրբ և **տիրակոչ**: Դու **ավարառու** անօրեն ես, բայց իրավունք ունես պարծենալու. աղբյուրի անունը, այնուամենայնիվ, պղծվեց, իսկ Մամփրեն հայոց գրին այդպես էլ անծանոթ մնաց... Տեր Հարությունը հյուսած տառերը դրեց ծոցն ու ելավ Արարատ, գնաց ու կորավ վիհերում ու ձյունների մեջ, և ինքը՝ Մամփրեն, հայոց տառերին անծանոթ մնաց:

Իսկ ե՞րբ սովորեր՝ կոտորումի ժամանա՞կ, գաղթի ճանապարհի՞ն, հետո... հետո՝ պատերազմի դաշտո՞ւմ... Ե՞րբ: Բայց եղավ, այդպիսի մի պատեհություն եղավ, ախր, հայտնվեց, բայց այն էլ ինքը չկարողացավ օգտագործել. իր հիմար բնավորության պատճառով՝ խռովկանության: Այս նոր՝ Քարագլուխ գյուղի սովետականացման առաջին տարիներին

գյուղում անգրագիտության վերացման կայան բացվեց ախր՝ լիկկա-յան: Վարժապետը ջահել, իրենից շատ ջահել մի տղա էր: Եվ հենց առաջին օրը ի՞նչ արեց այդ լղպորը. մատը տնկեց իր կողմ, թե՝ մեկից տասը հաշվիր: Վիրավորվեց, բայց, դե, վարժապետն էր պահանջողը, հաշվենք թե տեր Հարությունը:

– Մեգ, էրգու, իրիք...

– Երկու... երեք,– ուղղեց լիկկայանի վարժապետը:

– Երկու... եր... երեք... չուրս...

– Չորս,– ուղղեց վարժապետը:

– Չուրս... չուր... չորս,– քրտնած տակից դուրս եկավ,– չորս, հինգ, վից...

– Վեց,– ուղղեց վարժապետը:

– Վից:

– Վեց:

– Վի... վից...– և հա փորձեց, վարժապետն էր ստիպում, ու հա անարդյունք, և վիրավորված ու խռով՝ թողեց հեռացավ **լիկկայանից**: Չլիներ այդ անհնազանդ «վիցը» (վեց–վեց–վեց... տես, թե ինչ հանգիստ է պտտում լեզուն, վից կամ վեց, ի՞նչ տարբերություն), չլիներ այն հի-մար վարժապետը, այն ժամանակ Մամփրեն տառերը սովորած կլիներ: Դրանից հետո այլևս ի՞նչ տառ, ի՞նչ գիր... Լավ է դեռ տեր Հարությունի սովորեցրած այբուբենն էլ չի մոռացել, զարմանալի է, որ չի մոռացել. քանի՞ տարի է անցել. վաթսունչո՞րս, վաթսունհի՞նգ, բայց տես, որ հի-շում է.– Ա՜յբ, բե՜ն, գի՜մ, ե՛լ, Հովակի՛մ...– Հա, լիկկայանից հետո այլևս ի՞նչ գիր. մինչև քիչ ու միչ ուշքի եկավ, էլի՛ պատերազմ, և Մամփրեն՝ ճա-կատային, և գիր չիմանալու պատճառով, նամակ չգրելու պատճառով գյուղում լուր էր տարածվել, թե Մամփրեն անհայտ կորած է: Իսկ պա-տերազմից հետո... Խենթություն կլիներ, որ կռվից տուն գալուց հետո Մամփրեն նստեր ու գրերը սովորեր... Եվ այդպես էլ տեր Հարությունի ասած ժամանակը չեկավ: Չեկավ և... բայց... գուցե հիմա՞ է հայոց գիրը սովորելու իր ժամանակը:

– Հըմը թող գիս, ձգո՛ւկ:– Մամփրեն թոռանը հրեց ծնկների արանքից, ոտքի ելավ և սկսեց անհանգիստ քայլել:

«**Մարաթուկ** վկա, սուրբ Մաշտոցի գրերն սովորելու Մամփրեի օրն ու ժամանակը նոր-նոր տեղ է հասե»:

2

Եվ գյուղը դրնգաց. Մամփրեն որոշել է տառաճանաչ դառնալ: Մամփրեն՝ ութսունին մոտ, ութսուն տարի առանց գրի յոլա է գնացել, իսկ ահա որոշել է գրել–կարդալ սովորել:

Ով լսում էր, հանկարծակիի եկած՝ Մամփրեի տան կողմն էր նայում. այնպես, թե տունը հրդեհվել է, հետո տեսնում էր՝ տունը խաղաղ ծխում է, դառնում ծիծաղում էր՝ խելոռել է Մամփրեն:

Իսկ ով մուտք ու ելք ուներ Մամփրեի տունը, գնում տեսնում էր. Մամփրեն՝ խելքը տեղը, շատ լուրջ, շատ զգաստ և շատ գործնական կուրծքն ի վար մեկնված է հատակին, դիմացը՝ այբբենարանը, դիմացը՝ տետրեր, ձեռքին՝ կարմիր մատիտ, և գլխավերևում՝ որպես ուսուցիչ՝ թոռնուհին:

– Ասա՝ ա:

– Ա՜յբ :

– Մեծատառ Ա:

– Սեծտառ Ա:

– Դե գրիր մեծատառ Ա:

– **Ջուխտակ** առվակ կողք կողքի սարից **կիջվարեն**–կթափվեն պստիկ առվակի մեջ, ու առվակները ավելի կլցվեն ու ավելի կբարձրանան, ու աջակողմյան առվակից պստիկ մեկ առվակ ճոթ կտա դեպ աջ ու քչիկ կերթա ու էլի կդառնա իջվար: Էս քեզ մեծատառ Ա: Պատկերն իմ **աչաց** դեմն է...

Յա՜... Հարևանը, ժպիտը դեմքին, անկյունում նստած է: Երբ է հայտնվել: Ինչո՞ւ է եկել և ի՞նչ է ուզում:

– Գրասենյակ չերթա՞նք, Մամփրե՛:

– Չէ՛, ջա՛նմ... Գրասենյակ:

Մամփրեի խելքն էր շատ, որ աշունքվանից գարուն գրասենյակից դուրս չէր գալիս: Պրծա՛վ: Այլևս ոչ մի գրասենյակ: Թող պարապ–սարապները գնան, ծխեն ու դատարկ խոսեն, խոսեն ու ծխեն և խեղդվեն իրենց ծխի մեջ: Մամփրեն կարևոր գործ ունի, նպատակ ունի, Մարաթուկին տված ուխտ ու պայման ունի Մամփրեն, մինչև սուրբ Մաշտոցի գրերը չսովորի, ոտք չի դնի գյուղամեջ: Վերջ: Եվ... և խնդրում է, որ չխանգարեն իրեն: Այդքան բան:

...Եվ կամաց–կամաց ձմռան հետ մոռացան նրան: Թե հարսանիքների ժամանակ կամ տխրության հիշեցին, հիշեցին ժպտալով. ձմեռ է. փոթորիկ է մտել Մամփրեի գլուխը, գարնան հետ դուրս կգա:

3

Եվ գարնան հետ Մամփրեն հայտնվեց գյուղում:

Մամփրեն պատերազմից, կռվի դաշտից էր եկել, Մամփրեն ղարիպությունից էր եկել, Մամփրեն սահմանն անցել-գնացել էր Էրգիր և ահա եկավ: Գյուղի հավաքատեղիում այդպես դիմավորեցին. նրանք, որ նստոտած էին քարերին, ոտքի ելան, նրանք, որ ոտքի էին, ընդառաջ գնացին, ձեռքսեղմում, նույնիսկ ողջագուրություն, և Մամփրեն թև ու թևատակն ազատելու համար թղթերը խցկեց գրպանները: Թղթերը խցկեց գրպանները, **ձեռքվեց** ու կարոտած նստեց իր քարին:

Եվ եղավ իմաստուն մի լռություն:

Գյուղի հավաքատեղիում այդպիսի խորհրդավոր մի լռություն մեկ էլ տարիներ առաջ էր եղել, երբ լուր հասավ, թե ռուս մի տղա, տոհմանունով՝ Գագարին, տիեզերք է թռել՝ դեպի աստված:

Եվ ինչպես այն ժամանակ, հիմա նույնպես լռությունը խախտեց տարեկիցներից ամենաանհոգը՝ Անդարդ Ավեն:

– Է, Մամփրե՛, բարի տեսանք: **Քու չարչարանքն ապաշխարանք**:

Ա՛յ, հենց դա չէր ուզում Մամփրեն: Հայացքը **գարնանագոլ** գետնին՝ Մամփրեն մտածեց. այնուամենայնիվ, լռությունը խախտողը Ավեն չպետք է լիներ. ցավի, ուրախության և խոսքի կշիռը չիմացող Անդարդ Ավեն չպետք է լիներ խորհրդավոր լռության խախտողը:

– Տառերն թամամ սովորեցի՞ր, Մամփրե՛,– Մշեցի Խաչոն, նեղսրտած, ձեռնափայտը դեմ արեց Ավեին:

– Համբերե: Քանց երեխա, ինչո՞ւ կթռվռաս:

Մշեցի Խաչոն, որ Մամփրեին ուսնկից էր, վերականգնեց պահին վայել լռությունը, **քղքաց**,– հասկացրեց, որ մեջ ընկնող-խանգարող չլինի, հարմարվեց իր քարին և ձեռքը հանդարտիկ դրեց Մամփրեի ծնկին:

– Օղորմի քու անուշ ծնողաց, Մամփրե՛: Մարաթուկ վկա, քու արածն, քու արածն, Մամփրե՛, մեծ մարդու արած էր, մեծ բան էր: – Եվ խիստ բարձրացրեց ձեռնափայտն ու շեփ հայացք նետեց Ավեի կողմ:– Ու ամեն մարդու բան չէ: – Օղորմի քու անուշ ծնողաց,– կրկնեց մշեցի Խաչոն և շարունակեց բորբոք ու ներշնչված: Եվ ասաց, թե ճշմարիտ է, որ ինքը աշնանից մինչև այսօր չի գնացել Մամփրեի տուն, Մամփրեին չի երևացել. պարզապես չի կամեցել խանգարել, բայց զոր ու գիշեր մտոք Մամփրեի հետ է եղել և աղոթել է, որ Մամփրեի ուխտը ի կատար ածվի: Ինքն էլ փորձեց, ախր, հոգի ունի տալու և պետք է խոստովանի. ինքն էլ փորձեց սովորել սուրբ Մաշտոցի գրերը: Երբ լուր առավ, թե Մամփ-

րեն այդպիսի սուրբ ուխտ է կապել, ինքն էլ **գոտեպնդվեց**: Բայց որդին խանգարեց, որդին աղջկա ձեռքից այբբենարանը վերցրեց շպրտեց մի կողմ, թե՝ պապիդ իզուր մի՛ չարչարիր...

– Օղորմի քու անուշ մոր, Մամփրե՛, սուրբ Մաշտոցի գրերն ի՞նչ տեսք ունեն և ի՞նչ բնույթ ունեն: Մեկ-երկու նմուշ պատկերե, Մամփրե՛:

Մամփրեն, որ գլուխկախ լսում էր Խաչոյին (փառք Աստծո, ուրեմն գյուղում բոլորը չէ, որ իր արածը ընդունել են խենթություն), հիմա շտկվեց և ձեռքը տարավ գրպանը, որ թերթերից ընտրի գլխատառ գիրը և բացատրի, բայց միտքը փոխեց. գտավ մի կտոր ճիպոտ և ուղիղ մի գիծ քաշեց խոնավ գետնին:

– Էս ի՞նչ է, Խաչո՛:

Մշեցի Խաչոն երկմտեց, իսկ Անդարդ Ավեն ելավ-կանգնեց գծի գլխին և շտապեց.

– Գիծ է: Հիմա ես էլ գծեմ, ու իմ պապի պապն էլ գա ու գծե:

– Համբերե,– Խաչոն ձեռնափայտով քշեց Ավեին:– Նստի՛ր քու տեղն ու մեր արևն մի՛ ծրարե:

– Հաշվենք, թե առու է, Խաչո՛: Առվակ:– Մամփրեն գիծը խորացրեց:– Առվակ է ու ոչ թե դաշտի առվակ, սարից իջվարող առվակ է՝ շիտակ ու բարակ ու զուլալ: Մեկ ուրիշ նմանատիպ առվակ կողքն ի հետ կիջվարե՝ շիտակ ու բարակ ու զուլալ:– Եվ զուգահեռ գծեց:– Ու էս ջուխտակ զուլալ առվակներն սարից կիջվարեն ու կհանդիպեն ու կմիանան մեկ ավելի պստիկ առվակի՝ լանջն ի հետ գնացող: Էս է:– Մամփրեն ճիպոտով զուգահեռ առվակները միացրեց:– Միացա՞ն... թե միացան, թե առվակներն զարկվան իրար, ուրեմն ջուրն կշատանա, ուրեմն առվակներն կլցվեն ափեափ, ուրեմն հարկ է, որ մի տեղից ջուրն **ճոթ** տա... էս է: Ուրեմն ճոթ կտա, քչիկ մի կերթա ու... ո՞ւր պետք է էրթա, Խաչո՛, սար է, չէ՞, ուրեմն կդառնա ու էսպե՛ս կիջվարե: Էս էղավ, ուրեմն, սուրբ Մաշտոցի առաջին տառն ու մեծ տառն՝ Ա:

Պատի տակ նստոտածները՝ բոլորը համերկրացիներ, բոլորը տառերին անծանոթ, լուռ նայում էին Մամփրեի գծած տառին և սպասում, թե Մամփրեն էլի ինչ կասի:

– Գրերից մի քանիսն շիփ-շիտակ առվակների պատկերից փոխս են: Էն էլ թե ինչո՞ւ, սուրբ Մաշտոցի կամքն է: Մեկ-երկուսն էլ կան, որ... որ, մեղա՛, մեղա՛, սո՛ւրբ Մաշտոց... էդ մեկ-երկուսն, Խաչո՛, իմ սրտին դուր չեն գա:

Եվ գծեց Թ-ն ու կտիչը կտրեց:

– Կտիչ է, օձի կտիչ է, ու իմ սրտին դուր չի գա: Այս մեկ: Մյուսը:

Գծեց Ք–ն: Ա՛յ, մեծ առու է: Առու է, թե գետ է, մեծ է, քանզի մի տեղ լիճ է կազմել: Ահա: Ապա մի առվակ գալիս է, թափով գալիս–զարկում–կտրում է այդ մեծ առուն: Զարկում–կտրում–անցնում է: Կտրելը՝ կտրում է, բայց, չգիտես ինչու, չի ձգվում, չի երկարում, այ, այսպես... – Եվ հատիչը՝ Ք–ի պոչը հատող գիծը, ձգեց ու տարավ. քանի ձեռքը երկարում էր, և քանի ճիպոտը տանում էր, ձգեց:

– Ա՛յ, էսպես, աստված քու տուն սարքե, ինչո՞ւ ես առվակի դեմն առե,– դիտողություն արեց Մաշտոցին և ներողություն խնդրեց:– Մեղա՛, սո՛ւրբ Մաշտոց, մեղա՛: Հըմը իմ կարճ խելքով, Խաչո՛, էն առվակն, էն գետակն, որ մեծ առու ու գետ կկտրի, էդ առվակի ճամփեն հարկ է, որ էղնի երկար ու երկար:

Էլի լռություն եղավ... Մամփրեն այդ ո՞ր աշխարհն է հասել, ո՞ր աշխարհից է գալիս, ո՞ր աշխարհի մասին է այսպես ճարտար պատմում... Օր ծերություն Մամփրեն ելավ ու զարկեց (Դավթի հրեղեն թո՞ւրն էր Մամփրեի ձեռքին), զարկեց և պարիսպներ խորտակեց և հորիզոններ բացեց իր համար, երկրից հասավ մինչև երկինք և սուրբ Մաշտոցի հետ վեճի մեջ է: Իսկ իրենք... իրենք մնացին իրենց քարերին կպած՝ քարի ոստի պես:

Նույնիսկ Անդարդ Ավեն էր անծպտուն ու բերանբաց նայում Մամփրեի գծած հրաշք տառին, որ տառ չէր, այլ գետ ու գետակի հանդիպում ու հատում: Մամփրեն է ասում.

– Ուրեմն, Խաչո՛, հայոց գրերն գետերի ու գետակների, սարն ի վար իջվարող ու սարն ի հետ գնացող առվակների՝ շիտակ ու զուլալ ու կանաչափ առվակների հոսք է, **կցվնոնք** է ու **հատոնք**: Էդպես պատկերացրու:

Ուշադիր ու լուրջ լսում էին, և Մամփրեն որոշեց հասկացածը մինչև վերջ բացատրել տարեկիցներին:

Ուրեմն՝ այդպես: Բայց կան նաև տառեր, որ դաշտի, հարթավայրի առվակների պատկերն ունեն. ահա՝ ծայր առան, ոլորվեցին ու տեղնուտեղը սուզվեցին, ահա՝ ոլորվեցին ու լճացան: Տառերից մի քանիսն էլ, ուրեմն, դաշտային առվակի պատկերն ունեն: Բայց այդ պատկերներով տառերը քիչ են: Ինչո՞ւ: Քանզի հայոց աշխարհը լեռնային է և գրերի շատը, ուզի–չուզի, լեռնային գետակների, առուների ու առվակների պատկերը պետք է ունենային...

– Գրերն սովորելուց թոռնիկն ստիպեց, թե՝ **ջղարեն** թող: Ու ես թարկեցի: Հըմը էսօր իմ սիրտն ծխել շատ կուզե:

Եվ Խաչոյի վառած ծխախոտն առավ ու հակվեց ծնկներին:

Ահագին ժամանակ լուռ էին:

Հայոց գրերը խլվլում էին Մամփրեի ներսում, թռվռում էին հայացքի դիմաց, և նա անհանգիստ էր: Տունը կանչում էր նրան: Գրապահարանում նա արդեն իր անկյունն ուներ՝ այբբենարանը, կարմիր տառերով լցված տետրերը, անգրել տետրեր, **ծայրած** ու անծայր կարմիր մատիտներ, ռետին: Տետրերն ու մատիտները կանչում էին, և նա ուզում էր ոտքի ելնել, բայց գարնան առավոտի արևը շատ էր **դուրալի**: Գարնան արևը, խոնավ գետնի գոլը, սարերի ձնհալով լցված գյուղի կենտրոնական առուն, աղբյուրի ծորանից պոռթկացող ջրի շիթը... Ջուրը փշրվում է քարե գռում, և մանրիկ շիթերը **պարս** էին բռնել աղբյուրի գլխին: Եվ Մամփրեն հիշեց. վարժապետ տեր Հարությունը ասում էր՝ սուրբ Մաշտոցից առաջ հայոց գրեր են եղել և հայոց բան՝ փորված քարե սալիկներ: Հայոց վայրագ թշնամին ջարդուփշուր է արել հայոց քարե մատյանները, և գրերը թևավորվել են. կերպարանափոխվել մեղուների և թռել սարերը...

Վարժապետ տեր Հարությունը ասում էր, որ սուրբ Մաշտոցը հայոց առաջին դպրանոցները բացեց հայոց երկրի սահմանաեզրերում: Շրջում էր հայոց սահմաններով, վարժապետներ կրթում, դպրոցներ բացում... Եվ այդ դպրանոցները բերդեր էին սահմանաեզրերում: Բերդեր և զորանոցներ: Քանզի տառերը՝ Մաշտոցի գրերը, զինվորներ են: Գեղեցկադեմ, մաքուր և զուլալ, և արի զինվոր: Զինվորներ:

Երկրի սահմանները պաշտպանող զինվորներ:

Արդարության, ճշմարտության համար կռվող զինվորներ:

Գեղեցիկն ու բարին պաշտպանող զինվորներ:

Եվ հայոց երկրի թշնամոց դեմ կռվող հերոս զինվորներ:

Ահա այդպես: Եվ վարժապետ տեր Հարությունն էր ճիշտ, ոչ թե Օհանը: ճիշտ չէր Օհանը՝ էրգրի իրենց գյուղի ամենատարեց մարդը, նա, որ հզոր ընկուզենի ուներ և իր ընկուզենու հասակակիցն էր, ճիշտ չէր, որ ասում էր, թե հայոց գիրը հայոց թագավորն է, արքան է: Հայոց գրերը հայոց զինվորներն են: Իսկ թագավորը, թագավորը Մամփրեն է, Մամփրեն է արքան, այսինքն՝ նա, ով այդ զինվորներն ունի իր հրամանի տակ և նրանց կռիվ է տանում հանուն հայրենիքի, հանուն արդարության, հանուն ճշմարտության, հանուն գեղեցիկի:

Մամփրեն ոտքի ելավ:

Եվ լցված հասավ տուն, գրապահարանի իր անկյունից վերցրեց անգրել մի տետր, կարմիր մատիտ, նստեց սեղանի մոտ և թափով ու գլխատառերով գրեց. **«Մամփրեն արքա է, իսկ սուրբ Մաշտոցի գրե-**

որ զինվորներ են»:

Նա գրել էր առանձին բառեր՝ ասա, արա, սար, տար, գրել էր անուններ՝ Արարատ, Սիրան, Տիրան... բայց լրիվ մի նախադասություն, ամբողջական մի միտք. սա առաջինն էր: Եվ գրեց առանց ճիգ ու ջանքի, միանգամից և հուզվեց միայն գրելուց հետո, երբ զննեց թիկունք թիկունքի զգաստ շարված կարմիր գլխատառերը:

Հետո գրածը խնամքով անջատեց տետրից, խնամքով ծալեց-դրեց ծոցը, նստեց դռանը և սպասեց. ուր որ է թոռնուհին դասից կգա:

... Երբ երեկո եղավ, և գերդաստանը քնեց, Մամփրեն վերցրեց տետրերը, վերցրեց այբբենարանը. տեսար ու գրերից մեկի պատկերը մտքից թռավ, վերցրեց մատիտներն ու ռետինը և նստեց սեղանի մոտ:

Բայց ինչպե՞ս սկսել, ինչպե՞ս դիմել...

Եվ ծոցից հանեց գրածը: «Մամփրեն արքա է, իսկ սուրբ Մաշտոցի գրերը զինվորներ են» հաճույքով կարդաց և մեկնեց սեղանին. պետք է գրել այսօրինակ՝ գլխատառերով, այսպես՝ թիկունք թիկունքի, զինվորների պես զգաստ շարված և, անշուշտ, կարմիր մատիտով: Եվ մատիտը թքոտեց:

Որքա՜ն բան կա գրելու: Որքան և որքան ճշմարտություններ ունի ասելու Մամփրեն: Ափսոս, հազար ափսոս, որ գրերի հետ ուշ ծանոթացավ՝ օր ծերության: Լավ էր գոնե, որ Մարաթուկը ուխտը կատարեց, և հիմա Մամփրեն կարող է Մաշտոցի զինվորները շարքի կանգնեցնել ու շարժել: Որքան է խոսել և միշտ՝ ճշմարիտը, ժողովներին որքան և որքան է ոտքի կանգնել: Հարյուր անգամ միայն՝ Խաչոյի համար: Այո՛, մշեցի Խաչոյի արտի, արտերի համար՝ նախագահի, նախագահների դեմ հա ճակատ է տվել. խեղճ մարդը՝ մշեցի Խաչոն, տարին մի արտ էր պատրաստում լանջերին, ձորաբերնին, քարերի մեջ, նախագահը խլում էր, թև ու թիկունք ջարդելով՝ մշեցի Խաչոն **քարցանք** սարալանջերից էր հողը խլում, ձորից էր հողը խլում, նախագահը... նախագահը՝ Խաչոյից: Եվ ինքը՝ Մամփրեն, ամեն ժողովի ոտքի էր կանգնում՝ արդար չէ, բողոքում էր, սխալ է, և բացատրում էր՝ արտը Խաչոյից խլեցիք, իմացած եղեք, որ այդ արտը կկորցնեք, կտրորեք, կտաք բուլդոզերի բերանը,



կլքեք–կտաք հեղեղի բերանը, կլցնեք ձորը (ինչպես որ եղավ, ինչպես որ եղավ)։ Թողեք, ասում էր, թող այդ լաթ արտը Խաչոյի ձեռքին մնա և սարալանջին կպած։ Բայց լսողն ո՞վ էր։ Քանզի խոսքը բանավոր էր՝ քամու բերան ընկած աշնան տերև։ Իսկ գիրը, գիրը, ճշմարտախոս գիրը... Հաշվիր, թե խոսքդ քարի վրա ես քանդակել, ժայռերի վրա՝ միշտ աչքի դիմաց, հաշվիր, թե քանց ցորեն ցանել ես, և ծիլ է տվել, կանաչել է, հասունացել և ծփում է։ Դե եկ ու մի՛ նայիր, եկ ու ասա՝ այստեղ արտ չկա, և ասա՛, ասա՝ ցորենի հասուն արտը ոչ մեկին, ոչ մեկին պետք չէ։ Ա՜խ, եթե Մամփրեն հայոց գրերին էն գլխեն ծանոթ լիներ։ Բայց ուշ չէ, բոլորովին էլ ուշ չէ. մի օրվա կյանք էլ ունենաս, այդ մեկ օրն էլ հարկ է, որ կռվես արդարության համար, ճշմարտության ու գեղեցիկի համար... Խաչոն դեռ «ավելորդ» մի արտ ունի, մշեցի Խաչոյի վերջին արտը դեռ մնում է սարալանջին, Խաչոն առվույտ է ցանել ու սպասում է նախագահի վճռին։ Ո՛չ, այդ արտի ճակատագիրն արդեն Մամփրեն է վճռելու։ Մամփրեն հենց այս գիշեր Մաշտոցի ասպետ զինվորները կշարի և արևը չծագած՝ կքշի ուղիղ կոլտնտեսության գրասենյակ։ Այդպես։

Մատիտը բռում սեղմած՝ Մամփրեն մարտական քայլում էր. այլևս ոչ մի անկողին. առանց այն էլ քուն չի գալիս աչքերին, այլևս ոչ մի անկողին. առանց այն էլ ապրելու քիչ ժամանակ է մնացել, իսկ Մամփրեն անելիքներ ունի։ Գործ ունի։ Կռիվ ունի։ Զորօրինակ...

Եվ հանկարծ **գայթեց**։ Թվաց, թե տախտակապատ հատակին քար հայտնվեց–կտրեց ճանապարհը, զարկեց ոտքին։ Մամփրեն գայթեց և ձեռքը տարավ գլուխը։

– Օխա՜ ա՜222,– ծոծրակի մոտ այնպես իրական պոռթկաց ցավը, ինչպես, է՜, այն օրը, երբ ինքը Մեհրեաղբյուրի մոտ Օսմանի նենգ լակոտ Օսմանին լավ տրորեց, ապա ծնկեց՝ ջուրը դեպի իրենց շաղգամի արտի կողմ շտկելու, իսկ այդ ճպռոտ լակոտը, այնուամենայնիվ, թիկունքից քարով զարկեց–ջարդեց իր գլուխն ու փախավ և ուսն ի ետ քարերի պես շպրտում էր՝ Աթաբունար... Աթաբունար, որպես թե աղբյուրի անունը Մեհրե չէ, այլ Աթաբունար, որպես թե աղբյուրը քոնը չէ, այլ իմը...

– Օսմա՛ն, ես քու հավատը...

Կոտրումն ու գաղթը վրա տվեցին, և Մամփրեի ու քո կռիվը կիսատ մնաց։ Եվ մնաց որքա՜ն ժամանակ, որքա՜ն ժամանակ, մինչև այսօր... Իսկ այսօր, հիմա, հենց այս գիշեր Մամփրեն քո նենգ հերը կանիծի... Ահա թե ինչի համար, թե ինչի համար, ինչի համար Մամփրեն սովորեց հայոց գրերը... Յա՜, Մարաթուկ...

Գլխապտույտի մեջ և աչքերը **մթնդած** և շունչը հևիհև **ափլփում էր** դեպի սեղանը, և այն մտքից, թե կարող է հանկարծ շունչը փչել, Մամփրեն սարսռաց... Տե՛ր աստված, այդպիսի դաժանություն չանես, այսքան կյանք ես պարգևել Մամփրեին, շնորհիր նաև մեկ գիշեր, թաք մեկ գիշեր, այս գիշերն ի լույս: Եվ բավական է: Եվ Մամփրեն գոհ կմնա: Եվ Մամփրեն խաղաղ աչք կփակի: Սուրբ Մարաթուկ, դու, դու **ճանանչ** ես, ախր, Մամփրեին, դու օգնիր, որ Մամփրեն իր անպատասխան կռիվը անի (ահա թե ինչի համար սովորեց հայոց գրերը), իր պարտք կռիվը տա, ապա կամքը քոնն է: Յա, Մարաթուկ...

Բայց հայացքի դիմաց մշուշ էր, ձերմակն ու կարմիրը խառնվել էին իրար: Նա բռունցքով տրորեց կուրծքը, քունքերը և օգնության կանչեց Էրգրի սարերի շունչը, տրորեց աչքերը և օգնության կանչեց սարերին փլված ճանաչ եկեղեցիների զորությունը և մատիտը ձեռքն առավ... Հիմա, հիմա... Ահա թե ինչի համար, թե ինչի համար սովորեց հայոց գրերը:

Բայց մատները չէին ենթարկվում, ձեռքը դողում էր, և հենց առաջին տառը ձղվեց:

– Քու անունը... Օսմա՛ն:

Ոտքի ելավ և հուզված սկսեց քայլել... Հիմա, հիմա սիրտը կհանդարտի, դողը հիմա կանցնի, աչքերը կլուսավորվեն, կհանդարտի սիրտը, և Մամփրեն քո հարամ հերը կանիծի, ճամփաների դարանակալ ավազակ... Ահա թե ինչի համար, ինչի համար Մամփրեն սովորեց հայոց գրերը: Համբերիր, հիմա, հիմա... Հետո ննջարանից բերեց որդու ծխախոտը, վրա-վրա ծխեց և քշեց դեպի սեղանը: Յա, Մարաթուկ... Ընտրեց տետրերից լավագույնը, մատիտներից՝ ամենակարմիրը, թքոտեց մատիտն ու սկսեց...

Լուսաբացին որդին հորը գտավ սեղանի մոտ մարած, ճակատը սեղանին, սեղմված բռունցքում՝ մատիտը, և ճակատի տակ՝ կարմիր գլխատառերով գիրը.

– Օսմա՛ն, թալանչի՛ Օսման, ուրեմն՝ որպես ավազակ, որ ճամփին կանգնեցիր, էդ ճամփեն քո՞ննն է, հա՞: Քու թալանչի ձեռքն որ դրան դիպավ, էդ տունը քո՞ննն է, հա՞: Քու գիշատիչ աչքն որ սարը տեսավ, էդ սարը քո՞ննն է, հա՞: Քու հարամ շունչն որ աղբրակին դիպավ, էդ աղբուրն քո՞ննն է, հա՞... Աթաբունար... Մամփրեն ճար չունեցավ, թե քեզ տրորեր, տրորեր ու տրորեր, ու դու հասկանայիր, թե Տալվորիկի սարերում ու ողջ Սասնո սարերում Աթաբունար հարամանուն աղբյուր չկա: Չկա ու չկա: Աղբուրի անունը Մեհրե էր, ու Մեհրե կմնա. Մեհրեաղբյուր: Պատ-

մություն կա, արարիչ կա ու հնուց եկած զրույց. Առյուծ Մհեր էդտեղ՝ հենց էդ աղբրակի բխած տեղն է հանդիպել առյուծին ու ճղել զառյուծն, ու, կամոք արարչի, տեղն ու տեղն աղբյուր է բխել: Եվ արարիչն ինքն է կնքել՝ Մեհրեաղբյուր: Արարիչն է ծնել, ու արարիչն է կնքել: Օսման, թալանչի՛ Օսման, ես էլ մեռնեմ, դու էլ մեռնես, աղբյուրի անունը Մեհրե էր ու Մեհրե էլ կմնա:

Գալ տարի - եկող տարի
հոս - այստեղ
ցուցամատել - ցուցամատով ցույց տալ
շարուկ - շարք, շարվածք
չիք - չկա
հերսոտել - զայրանալ
մահապարտ - մահվան դատապարտված
դաշնել - հարմար լինել, համապատասխանել
ելվերել - բարձրանալ
սադայել - սատանա, դևերի գլխավորը
ուրթ - առվակի սկիզբ
տիրակոչ - Տիրոջից՝ Աստծուց կանչված
լիկկայան - հպվ.՝ լիկվիդացիոն կայան՝ անգրագիտության վերացման դասընթացներ մեծահասակների համար
Մարաթուկ - Սուրբ Աստվածածին վանքը Մարութա սարում, որ գտնվում է Սասունում
ջուխտակ - զույգ
իջվարել - իջնել
ձեռքվել - ձեռքով բարևել
քու չարչարանքն ապաշխարանք - չարչարանքի ավարտվելը
գարնանագոլ - գարնան գոլն առած
քղքալ- կոկորդը մաքրել
գոտեպնդվել - քաջալերվել, խրախուսվել
ճոթ - ծայր
կցվնոնք - կցվածք
հատոնք - հատված
ծայրած - սրած
դուրալի - դուրեկան
քարցանք - քարաշատ, ասես քարեր ցանած
գայթել - սայթաքել
մթնդած - մթնած
ափլփել - խարխափել
ճանանչ - ծանոթ

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ո՞րն է «Մամփրե արքան» պատմվածքի հիմնական գաղափարը:
2. Ինչն է կարևորվում բնագրում, և ինչ տպավորություն է թողնում ստեղծագործությունը:
3. Ո՞ր պատմվածաշարում է զետեղված «Մամփրե արքան» ստեղծագործությունը:
4. Ե՞րբ և որտե՞ղ են տեղի ունենում պատմվածքի գործողությունները:
5. Ո՞րն է «Մամփրե արքան» պատմվածքի խորհուրդը:
6. Որտե՞ղ էր սուրբ Մաշտոցը բացում հայոց առաջին դպրանոցները, ինչո՞ւ:
7. Ինչպե՞ս գնահատեցին Մամփրեի սխրանքը համագյուղացիները:
8. Ո՞ւմ հիշատակին էր ասեղնագործում տեր Հարությունը հայոց տառերը:
9. Հայոց տառերը սովորելուց հետո առաջին անգամ ինչ էր գրել Մամփրեն:
10. Մամփրեն պաշտպանո՞ւմ է արդարությունը: Ինչ կապ կա Մաշտոցի զինվորների և Խաչոյի արտի միջև:
11. Քանի՞ անգամ է Մամփրեն զգում Օսմանի նենգ լակոտ Օսմանի հասցրած ցավը և ինչպե՞ս է արձագանքում:
12. Ինչը կփոխեիք այս պատմվածքում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հանրագիտարանում, համացանցում կարդա՛ Մարաթուկի մասին և բանավոր վերաշարադրի՛ր ընթերցածդ:
2. Ներկայացրո՛ւ պատմվածքի հերոսներին, բնութագրի՛ր գլխավոր հերոսին: (Խմբային աշխատանք)
3. Ներկայացրո՛ւ դեպքերի պատճառահետևանքային կապը:
4. Կարծի՛ք արտահայտիր հերոսների և նրանց արարքների վերաբերյալ:
5. Բնագրի պատմությունը կապի՛ր ներկա իրականության հետ:
6. Գտի՛ր բնագրի ժողովրդախոսակցական հատվածները:
7. Գնահատի՛ր հեղինակի վարքագիծը: (Խմբային աշխատանք)
8. Մեկնաբանի՛ր հետևյալ հատվածը. «Տեր Հարությունը մեծ ու ճերմակ պաստառը կախել էր Տիրամոր նկարի կողքին և վառ կարմիրով հյուսում էր տառերը: Հայոց տառերը կարմիր են, քանզի սուրբ Մաշտոցը իր սրտից է հանել ի լույս: Եվ կարմիր են, քանզի թրծվել են արդար Արեգակով: Եվ կարմիր են, քանզի սրբազան կռիվների են մասնակից եղել»:
9. Բացատրի՛ր «Մամփրեն արքա է, իսկ սուրբ Մաշտոցի գրերը զինվորներ են» միտքը:
10. Գրի՛ր շարադրություն՝ «Մթին ձորի լուսե մարդը» վերնագրով:

Ամփոփում

«Մամփրե արքան» պատմվածքը Մուշեղ Գալշոյանի «Մարութա սարի ամպերը» ժողովածուի ամենասիրված գործերից է, որ նաև բազմիցս բեմադրվել է: Այս ստեղծագործությունը նաև բանաստեղծական երանգներ ունի. առկա են փոխաբերություն, այլաբանություն:

«Մամփրե արքան» պատմվածքի հերոսը նախատիպ ունի. դա Էրգրից գաղթած, Էրգրի կյանքով ապրող Մանուկյան–Գալշոյան գերդաստանի՝ Թալինի «ղոերում» նոր կյանք արարող սասունցին է:

Մի սովորական պատմության միջոցով վարպետ գրողն ասես ուրվագծել է հայ ժողովրդի անցած ողջ ուղին, պատկերել նրա տեսած դառնությունները, որոնք անամոք վերք են թողել նաև Մամփրե պապիկի հոգում: Թոռնուհու հետ տառերը սովորելիս ծերունին դրանք առվակների է նմանեցնում: Առվակն այստեղ թերևս կյանքի խորհրդանիշն է, որովհետև այն ջինջ է, մշտապես հոսում է, ծառ ու ծաղիկ սնում, հագեցնում մարդու և, ընդհանրապես, Աստծո բոլոր արարածների ծարավը: Մամփրե պապիկի կյանքն էլ մի առվակ է. հաղթահարելով բազում խոչընդոտներ, հատելով խոր անդունդներ՝ այն շարունակել է հոսել և անգամ վտակներ տալ: Այդ վտակները հենց նրա թոռներն են, որոնց սիրով ու գորովանքով պարուրված արքա է Մամփրեն:

- Որտեղ է Սասունը և ինչ նշանակություն ունի հայերի համար:

- Սասունն Արևմտյան Հայաստանի գավառներից է: Ներկայումս գտնվում է Թուրքիայի կազմում: Նախկինում եղել է Մեծ Հայքի Աղձնիք նահանգի տասներորդ գավառը: Հնագույն կենտրոնն էր Սանասուն բերդը: Սասունի տարածքը հաջորդաբար մտել է Ուրարտուի (Ք. ա. IX-VI դդ.), Երվանդունիների (Ք. ա. VI-III դդ.), Արտաշեսյանների (Ք. ա. II-Ք. հ. I դդ.), հայ Արշակունիների (I-V դդ.) թագավորությունների մեջ: Արշակունյաց թագավորության անկումից հետո (428 թ.) Սասունն իր բնական դիրքի շնորհիվ պահպանել է անկախությունը՝ դառնալով հայ ժողովրդի ազատագրական պայքարի կենտրոններից:

1915 թ. Մեծ եղեռնի ժամանակ Սասունի բնակչությունը մի քանի ամիս անհավասար գոյամարտ է մղել թուրքական 30000-անոց բանակի դեմ: Սասունի 60000-անոց բնակչությունից փրկվել է մոտ 15000- ը, որ ռուսական բանակի օգնությամբ գաղթել է Արևելյան Հայաստան, բնակություն հաստատել Աշտարակի և Թալինի շրջակա գյուղերում:

Արաբ նվաճողների դեմ Սասունի հերոսական պայքարի հիման վրա ձևավորվել է «Սասնա ծռեր» էպոսը:

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ (1908-1981)

Սարոյանն օժտված է մի այնպիսի ձիրքով, որ շատ քչերն են ունենում՝ մարդկանց սիրելու դժվարագյուտ տաղանդով: Նա մարդկանց չի դատապարտում, այլ սիրում է նրանց... Նրա բնավորության ամենաբնորոշ գիծը բարությունն է:

Պարույր Սևակ

- Կենսագրական տեղեկություններ
- Ժամանակակիցները՝ Վիլյամ Սարոյանի մասին
- «Նռնենիները»
- Լրացուցիչ նյութեր



Ազգությամբ հայ, ամերիկյան գրող Վիլյամ Սարոյանի հերոսները, հատկապես մանուկների ու պատանիների տպավորիչ կերպարները, համաշխարհային գրականություն են մտել որպես հոգու մաքրության և անկեղծության խորհրդանիշ: Սարոյանի վիպակներում և պատմվածքներում արտահայտված են իրականության ու երազանքի հակադրությունը, ընդգծված են անհատի ներքին ազատության ու հոգևոր գեղեցկության, սիրո և բարու հաստատման մոտիվները, որոնք հետաքրքիր մեկնաբանություն են ստացել նաև նրա դրամաներում ու պիեսներում:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիլյամ Սարոյանը ծնվել է 1908 թ. օգոստոսի 31-ին, Արևմտյան Հայաստանի Բիթլիս (Բաղեշ) քաղաքից Ֆրեզնո գաղթած հայի ընտանիքում:

Չորս տարեկանում գրկվել է հորից: Թագուհի Սարոյանն ամուսնու մահից հետո ստիպված էր մանկատուն հանձնել երեխաներին: Այնուհետև մայրը որդուն վերցրել է որբանոցից, կրթության տվել: «Մանկատան ճանապարհին ես սկսեցի լաց լինել: Մայրս նախատեց ինձ՝ ասելով. «Դու արդեն տղամարդ ես, իսկ տղամարդը չի լալիս»: Ես դադարեցի լալուց»,- հիշում է գրողը: Ընտանիքի հոգսը ստիպել է պատանուն թողնել դպրոցը և փողոցներում լրագիր վաճառել, հետո դառնալ հեռագրատան ցրիչ: Աշխատանքը, սակայն, նրան չի խանգարել զբաղվել ընթերցանությամբ, ստեղծագործել, գրել փոքրիկ պատմվածքներ: Հետագայում նա կհիշի. «Մի օր հարևան երեխաներն ինձ կանչեցին բեյսբոլ խաղալու, և ես, շատ լավ գիտակցելով, որ պետք է մնացած թերթերը վաճառեմ, չկարողացա հրաժարվել այդ առաջարկից ու միացա ընկերներիս: Հանկարծ լսեցի մորս ձայնը. «Ինչո՞վ ես զբաղված»: «Խաղում էի, մայրի՛կ»,- պատասխանեցի ես: Մորս մեկ հայացքը բավարար եղավ, որ վերադառնամ աշխատանքիս: Այդ օրվանից հետո հասկացա, որ չպետք է նմանվեմ մյուս երեխաներին»:

Վիլյամ Սարոյանի առաջին պատմվածքը տպագրվել է Բոստոնի «Հայրենիք» շաբաթաթերթում 1933 թ.՝ «Սիրակ Գարոյան» ստորագրությամբ: 1939 թ. «Կյանքիդ ժամանակը» պիեսի համար գրողն արժանացել է Նյու Յորքի քննադատների գնահատանքին և Պուլիցերյան մրցանակի, բայց վերջինից հրաժարվել է՝ պատճառաբանելով, որ պետությունը չպետք է խառնվի գրականության գործերին:

Իր գրական կյանքի առաջին տասնամյակում Վիլյամ Սարոյանը գրել է հարյուրավոր պատմվածքներ, որոնց մի մասը զետեղվել է ավելի քան 10 ժողովածուում՝«Փոքրիկ երեխաներ» (1937 թ.), «Ողջույն քեզ, սեր» (1938 թ.), «Անունս Արամ է» (1940 թ.), «Սիրելիս» (1944 թ.) և այլն:

Վիլյամ Սարոյանը գրել է անգլերեն. այդ պատճառով համարվում է օտարագիր հայ գրող: Նրա հերոսներից շատերը հայեր են, որոնք ներկայացնում են հայկական միջավայրը՝ ազգային սովորույթներով ու բարքերով, հայրենիքի պատմական հիշողությամբ:

1942 թ. Վիլյամ Սարոյանը զորակոչվել է բանակ: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ծառայել է ԱՄՆ բանակում: Երկ-

որդ աշխարհամարտը և պատերազմն առհասարակ նա ընկալել է որպես մարդկության մեծագույն աղետ: Այդ թեման արտացոլվել է «Մարդկային կատակերգություն» վեպում և «Վեսլի Ջեկսոնի արկածները» վեպում (1942 թ.):

Գրողը շատ էր սիրում հայաստան այցելել:

Մի անգամ Վիլյամ Սարոյանը Սևանի ափին գտնում է մի ծանր, լճի ալիքներից լավ հղկված քար և խնդրում, որ այն տեղավորեն մեքենայի մեջ:

- Ամերիկա, Ֆրեզնո պիտի տանիմ,- ասում է գրողը:

- Այդ հսկայական քարն ինչպե՞ս եք տանելու...

- Ինքնաթիռով պիտի տանիմ...

- Ինչո՞ւ...

- Ով որ Հայաստանի դեմ վատ խոսի, անոր գլխուն պիտի զարկեմ քարը,- պատասխանում է Սարոյանը:

Վիլյամ Սարոյանը ՀԽՍՀ «Խաղաղության պահպանման և հայրենիքի հետ կապերի ամրապնդման ուղղությամբ ակտիվ գործունեության համար» մրցանակի առաջին դափնեկիրն է: Մահից առաջ պատգամել է՝ իր աճյունի մի մասը թաղել հայրենի հողում:

Վիլյամ Սարոյանը մահացել է 1981 թ. մայիսի 16-ին, Ֆրեզնոյում: Դիակիզումից հետո աճյունի մի մասը թաղվել է Ֆրեզնոյի Արարատյան գերեզմանատանը, մյուս մասը՝ Երևանի Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում:

Ֆրեզնոյի տունը, որտեղ Վիլյամ Սարոյանն անցկացրել է կյանքի վերջին 17 տարիները, գրողի 110-ամյակին՝ 2018թ. օգոստոսի 31-ին, սկսեց գործել որպես տուն-թանգարան:

Վիլյամ Սարոյանի տուն-թանգարանը Ֆրեզնոյում

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ՝ ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ



Ես լիապես երջանիկ մարդ եմ համարում Սարոյանին: Անընդհատ զարմանալու ընդունակությամբ է օժտված այդ մարդը: Երջանիկ են այն մարդիկ, որ տարիքն առնելու հետ չեն կորցնում զարմանալու ընդունակությունը: Սարոյանը հենց այդ մարդկանցից է, ուղղակի մեծ երեխա է և այն էլ՝ հանճարեղ: Զարմանքով գրում է բաների մասին, որոնք, թվում է՝ այնքան հասարակ են, պարզ, սովորական, որ հետաքրքրություն չեն ներկայացնում: Բայց դրանց խորքում այնքան պայծառ իմաստնություն, փիլիսոփայական վեհություն, զգացմունքների, տպավորությունների այնքան բազմազանություն և մեծ արվեստ, հրճվանք կա:

Մարտիրոս Սարյան

...Նրա երկերը լեցուն են հազար ու մի զրկանքներով, և նրա հերոսները հազար ու մի դժվարություն են կրում: Բայց այդ ամենը ջերմացած են սրտի մի այնպիսի կրակով, որ ապրել են ուզում, ոչ թե մեռնել, փառաբանում են կյանքը և ոչ թե անիծում... Սարոյանը հավատում է աշխարհի ու մարդկանց լավացմանը: Այդպիսին է Սարոյանը:

Պարույր Սևակ



...Սարոյանը թեև այլ լեզվով, թեև այլ ժանրերով, բայց վերապատմեց իր ժողովրդի մեծ էպոսը, վերապատմեց էպոսը հատուկ անհուն բարությամբ ու խաղաղասիրությամբ, մարդկային խղճի ու արդարության նկատմամբ ունեցած այնպիսի անսպառ հավատով, այնպիսի կենսահաստատ փիլիսոփայությամբ, որ նրա խոսքը XX դաժան դարի խաչմերուկներում հնչեց եզակիորեն տեղին ու ժամանակին՝ հարուցելով իրեն արժանի հիացմունք ու արձագանք:

Վահագն Դավթյան

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Որտեղ է ծնվել և ապրել Վիլյամ Սարոյանը:
2. Ինչո՞ւ է անգլիագիր Վիլյամ Սարոյանը համարվում նաև հայ գրող:
3. Ո՞ր թվականին և ինչ ստորագրությամբ է տպագրվել գրողի առաջին պատմվածքը:
4. Որո՞նք են Սարոյանի հայտնի ժողովածուները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ներկայացրու Վիլյամ Սարոյանի կենսագրության հիմնական դրվագները:
2. Ներկայացրու Վիլյամ Սարոյանի ստեղծագործությունների թեմատիկան:
3. Ժամանակակիցների հուշերը նկատի ունենալով՝ բնութագրիր գրողին:
4. Կազմիրսահիկաշար՝ ներկայացնելով գրողի կյանքն ու ստեղծագործությունը: (Խմբային աշխատանք)

- Ինչ է նշանակում «օտարագիր հայ գրող», և բացի Վիլյամ Սարոյանից էլի՞ կան օտարագիր հայ գրողներ:

- Օտարագիր հայ են ազգությամբ հայ, սակայն օտար լեզվով գրողները, որոնք իրենց ստեղծագործությունների մեջ ներկայացնում են հայ ժողովրդի ճակատագիրը, ազգային արմատների և դիմագծի պահպանման խնդիրը և այլն: Օտարագիր հայ գրողներ են նաև Խաչատուր Ոսկանը, Մայքլ Առլենը, Ռուբեն Մելիքը, Վահե Քաչան և այլք:

ՆՈՆԵՆԻՆԵՐԸ

1

Իմ հորեղբայր Մելիքը թերևս ամենաաձախորդ ֆերմերն էր ամբողջ աշխարհում: Նա չափից ավելի մեծ երազող էր ու պոետ, այնպես որ իր շահի մասին չէր մտածում: Գեղեցկություն–ահա թե ինչի էր ձգտում նա: Նա կուզենար գեղեցկություն ցանել ծաղկի պես և հիանալ՝ նրա աճը տեսնելով: Պոեզիայի և պատանեկության վաղուց անցած այն հիանալի օրերին ես ինքս մի անգամ հարյուրից ավելի նռնենի տնկեցի նրա համար: Այն ժամանակ ես «Ջոն Դիր» տրակտորն էի վարում, իմ հորեղբայրը՝ նույնպես: Այդ ամենը զուտ էսթետիկա էր և ոչ թե գյուղատնտեսություն: Հորեղբորս հրապուրում էր հենց միայն ծառեր տնկելու և նրանց աճով հիանալու գաղափարը:

Միայն թե ծառերն աճել չէին ուզում: Հողի պատճառով: Դա անապատային հող էր: Ջրից զուրկ: Հաճախ հորեղբայրս ձեռքը մեկնում էր իր գնած վեց հարյուր ութսուն ակր[1] անապատի կողմը և ասում ամենաբանաստեղծական հայերենով, որպիսին դուք երբևէ լսել եք:

– Այստեղ՝ այս սոսկալի անապատում, այգի կփթթի, գետնից սառնորակ աղբյուրներ կբխեն, և կյանք կառնի ամենը, ինչ–որ գեղեցիկ է:

[1] Ակր (անգլ.) – մոտավորապես 0,4 հեկտար:

– Այո՛, սը՛ր,– պատասխանում էի ես:

Ես նրա առաջին ու միակ ազգականն էի, որին վիճակվեց տեսնել նրա գնած հողը: Նա գիտեր, որ ես հոգով բանաստեղծ եմ, և հույս ուներ, որ կհասկանամ իր վեհաշունչ պոռթկումը, որը նրան տանում էր դեպի փայլուն սնանկացում: Եվ ես նրան հասկացա: Ես իրենից վատ չգիտեի, որ նրա ձեռք բերած հողը անպետք էր, անպտուղ անապատ: Մի անհուսալի տեղ՝ Սիերա-Նևադայի ստորոտում: Անապատի փշփշոտ բույսերի բոլոր տեսակները դուրս էին ցցված այդ չոր, խանձված հողից: Ամենուրեք վխտում էին արջամկներ, կոտոշավոր դոդոշներ, օձեր և այլ զեռուններ: Այդ հողի գլխին սավառնում էին միայն արծիվներ, ճուռակներ ու ցիներ: Դա ամայության, անմարդաբնակության, ճշմարտության ու վեհության թագավորություն էր: Դա բնությունն էր՝ իր ամենահպարտ, սքանչելի, մենավոր ու չոր արտահայտությամբ:

Ես ու հորեղբայրս «Ֆորդիկից» դուրս եկանք նրա տիրապետության մեջտեղը և սկսեցինք քայլել անջուր անապատում:

– Այս հողը,– ասաց նա,– իմ հողն է: Նա քայլում էր դանդաղ, կոշիկի քթով քչփորելով չոր հողը: Կոտոշավոր մի դոդոշ հենց ուղիղ նրա ոտքի տակից գետնի երեսը դուրս եկավ: Հորեղբայրս իմ ուսը սեղմեց և քար կտրեց՝ երկյուղած անշարժությամբ:

– Այս ի՞նչ կենդանի է,– ասաց նա:

– Այս պստլիկ մողեսը,– հարցրի ես:

– Սա կոտոշավոր մուկ է,– ասաց հորեղբայրս: Սա ի՞նչ բան է:

– Հաստատ չգիտեմ,– ասացի:– Մենք դրանց կոչում ենք կոտոշավոր դոդոշ:

Կոտոշավոր դոդոշը կանգ առավ մեզանից մի երեք քայլի վրա և գլուխը մի կողմ դարձրեց: Հորեղբայրս մի արագ հայացք գցեց նրա վրա:

– Սա թունավոր չէ՞,– ասաց նա:

– Եթե մարդ նրան ուտի՞,– հարցրի ես:– Թե՛, եթե նա կծի:

–Եվ մեկ, և՛ մյուս դեպքում,– ասաց հորեղբայրս:

– Իմ կարծիքով դրանք ուտելի չեն,– ասացի ես:– Բայց և կարծեմ անվնաս են: Ես դրանցից շատ եմ բռնել: Գերության մեջ տխրում են, բայց չեն կծում: Բռնե՞մ սրան:

– Բռնի՛ր, խնդրեմ,– ասաց հորեղբայրս:

Ես կուզեկուզ մոտեցա և բռնեցի այն կոտոշավոր դոդոշինը, իսկ հորեղբայրս նայում էր իմ հետևից:

– Զգո՛ւյշ,– ասաց նա:– Դու հավատացա՞ծ ես, որ դա թունավոր չէ:

– Ես սրանցից շատ եմ բռնել,– ասացի:

Ես կոտոշավոր դոդոշը մեկնեցի հորեղբորս: Նա աշխատում էր ցույց տալ, թե ամենևին չի վախենում:

– Զքնաղ արարած է, չէ՞,– ասաց նա ոչ ամենևին հաստատուն ձայնով:

– Կուզե՞ք Ձեր ձեռքն առնել,– ասացի ես:

– Ո՛չ,– ասաց հորեղբայրս:– Ավելի լավ է ինքդ բռնի՛ր: Ես երբեք այսքան մոտիկից չեմ տեսել այս կենդանուն: Մի նայիր, է՛, աչքեր էլ ունի: Երևի մեզ տեսնում է:

– Իհարկե,– ասացի:– Նա ուղիղ Ձեզ է նայում:

Հորեղբայրս նայեց կոտոշավոր դոդոշի աչքերին: Կոտոշավոր դոդոշը նայեց հորեղբորս աչքերին: Այդպես մի կես րոպե նրանք նայում էին ուղիղ իրար աչքերի մեջ, հետո կոտոշավոր դոդոշը հետ դարձավ ու հայացքը ցած գցեց: Հորեղբայրս թեթևացած շունչ քաշեց:

– Հազար այդպիսին,– ասաց նա,– երևի կարող կլինեին մարդ սպանել:

– Սրանք խմբերով չեն լինում,– ասացի ես:– Հազիվ թե երկուսը միասին տեսնեք:

– Եթե սրա մեծը պատահի,– ասաց հորեղբայրս,– երևի մարդուն կրծելով՝ կսպանի:

– Նրանք շատ չեն մեծանում,– ասացի ես,– նրանից մեծը չի լինում:

– Ինքն այդքան փոքրիկ արարած է, բայց որքա՜ն խոշոր աչքեր ունի,– ասաց հորեղբայրս:– Դու համոզվա՞ծ ես, որ դրանք չեն բարկանում, երբ իրենց ձեռքով բռնում են:

– Սրանք երևի հենց բաց թողնելուն պես իսկույն մոռանում են այդ,– ասացի ես:

– Դու իսկապե՞ս այդպես ես կարծում:

– Այո՛, հազիվ թե սրանք լավ հիշողություն ունենան:

Հորեղբայրս ուղղվեց և խոր շունչ քաշեց:

– Ազատ արձակի՛ր դրան,– ասաց նա:– Հարկավոր չէ դաժան վարվել Աստծո անմեղ արարածի հետ: Քանի որ թունավոր չէ, ոչ էլ ոխակալ, մկնից մեծ չի լինում և խմբեր չեն կազմում, բաց թող՝ գնա այդ

խեղճ արարածը: Պետք է բարի լինել այն բոլոր մանրիկ կենդանիների հանդեպ, որոնք մեզ հետ ապրում են երկրի երեսին:

– Լավ, սը՛ր,– ասացի ես:

Եվ կոտոշավոր դոդոշին բաց թողի:

– Ավելի զգույշ լինենք,– ասաց հորեղբայրս:– Թող ոչ մի բան չանհանգստացնի իմ հողի այդ բնակիչներին:

Կոտոշավոր դոդոշը կաղեկաղ հեռացավ:

– Այս կենդանիները,– ասացի ես,– դարերով ապրում են այսպիսի հողերի վրա:

– Դարերո՞վ,– հարցրեց հորեղբայրս:– Դու համոզվա՞ծ ես:

– Համոզվածը համոզված չեմ,– ասացի ես,– բայց կարծում եմ, որ այդպես է: Համենայն դեպս նրանք դեռ այստեղ են:

Հորեղբայրս նայեց իր հողին, կակտուսներին ու փշոտ թփերին, գլխավերևի երկնքին:

– Բայց ինչո՞վ են սնվել այստեղ,– գոչեց նա:

– Չգիտեմ,– ասացի:

– Իսկ ի՞նչ ես կարծում:

– Միջատներով երևի:

– Միջատներո՞վ,– գոչեց հորեղբայրս:– Ինչպիսի՞ միջատներով:

– Բզեզներով երևի, ի՞նչ իմանամ: Քի՞չ տեսակի միջատներ են լինում: Վաղը ես կարող եմ դպրոցում հարցնել:

Մենք շարունակում էինք քայլել անջուր անապատով: Երբ մոտեցանք ինչ-որ փոսերի, հորեղբայրս կանգ առավ և հարցրեց.

– Ի՞նչ կենդանիներ են ապրում սրանց մեջ:

– Առնետներ,– ասացի ես:

– Իսկ ի՞նչ բան են առնետները,– հարցրեց նա:

– Ինչպե՞ս ասեմ, մկան նման բաներ են,– ասացի ես:– Կրծողների դասին են պատկանում:

– Ախր ի՞նչ են անում այդ բոլոր արարածներն իմ հողի վրա,– ասաց հորեղբայրս:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ներկայացրո՛ւ Վ. Սարոյանի ապրած ժամանակաշրջանը:
2. Ի՞նչ միջավայրում էր ապրում հեղինակը:
3. Ի՞նչ խորհուրդ է ունի պատմվածքի վերնագիրը:
4. Ինչո՞ւ պատմվածքի հերոսը որոշեց անջուր անապատում այգի հիմնել:
5. Ի՞նչ կենդանիներ էին այդ հողատարածքում բնակվում: Ինչո՞ւ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ներկայացրու՛ հերոսների արտաքինը նկարագրող, բնավորությունը բացահայտող էական գծերը:
2. Թվարկի՛ր պատմվածքի կերպարները և վերլուծի՛ր նախընտրածդ կերպարը:
3. Նկարագրի՛ր կերպարներին քո բառերով՝ օգտվելով հեղինակային բառերից:
4. Մեկնաբանի՛ր պատմվածքի վերնագրի կապը բովանդակության հետ:
5. Ներկայացրու՛ միջավայրը, ուր կատարվում են պատմվածքի գործողությունները: (Խմբային աշխատանք)
6. Բնագրից դուրս գրիր այն հատվածը, որտեղ երևում է Մելիք հորեղբոր կարեկցանքը հողակտորում բնակվող կենդանիների հանդեպ: Բացատրի՛ր արարքի պատճառը:
7. Մելիքին համեմատի՛ր մեր գրականության մեջ հայտնի համանուն հերոսի ու նրա արարքների հետ: (Խմբային աշխատանք)

2

– Դե, նրանք հո չգիտեն, որ հողը Ձերն է: Հնուց ի վեր իրենց համար ապրում են այստեղ:

– Չեմ կարծում, թե այդ կոտոշավոր դոդոշը առաջներում երբևիցե նայած լինի մարդու աչքերին,– ասաց հորեղբայրս:

– Այո՛, հազիվ թե,– ասացի ես:

– Ինչ ես կարծում, ես նրան վախեցրի՞:

– Հաստատ չգիտեմ,– ասացի ես:

– Եթե նույնիսկ վախեցրել եմ, ապա դիտմամբ չեմ արել,– ասաց հորեղբայրս:– Գիտե՞ս՝ ես ուզում եմ այստեղ տուն շինել:

– Մի՞թե,– ասացի:

– Անպայման,– ասաց նա:– Մի հիանալի տուն:

– Կարծես մի քիչ հեռու է,– ասացի ես:

– Քաղաքից ընդամենը մեկ ժամվա ճանապարհ է,– ասաց նա:

– Եթե ժամում հիսուն **մղոն** ճանապարհ կտրես,– ասացի:

– Այստեղից մինչև քաղաք հիսուն մղոն չկա,– ասաց հորեղբայրս:– Ընդամենը երեսունյոթ է:

– Դե մի քիչ էլ ավելի պիտի հաշվեի, որովհետև ճանապարհը վատն է,– ասացի ես:

– Ես սքանչելի տուն կկառուցեմ ինձ համար,– ասաց հորեղբայրս:– Իսկ էլի ի՞նչ կենդանիներ են ապրում այս հողում:

– Դե, այստեղ էլի մի երեք–չորս տեսակի օձեր են ապրում,– ասացի ես:

– Թունավո՞ր:

– Մեծ մասամբ՝ ո՛չ: Թեև, այ, օրինակ՝ բոժոժավոր օձը...

– Ի՞նչ ես ասում: Մի՞թե այստեղ բոժոժավոր օձեր կան:

– Նրանք սովորաբար հենց այսպիսի հողերի վրա են ապրում,– ասացի ես:

– Եվ շա՞տ կան այստեղ, հա՞:

– Միջին հաշվով մի ակրի՞ վրա, թե ամբողջ վեց հարյուր ութսուն ակրի վրա,– հարցրի ես:

– Միջին հաշվով մի ակրի վրա:

– Ի՞նչ ասեմ, մի ակրի վրա երևի մի երեք հատ կլինի,– ասացի:– Ամենահամեստ հաշիվներով:

– Երեք հատ մի ակրի վրա՞,– գոչեց հորեղբայրս: – Համեստ հաշիվներո՞վ:

– Դե գուցե և երկուսը,– ասացի:

– Ուրեմն քանի՞սը կստացվի ամբողջ հողամասի վրա:

– Հիմա հաշվեմ,– ասացի:– Ամեն մի ակրում երկու հատ: Վեցհարյուր ութսուն ակրում՝ մոտավորապես հազար հինգհարյուր հատ:

– Հազար հինգ հարյուր հատ բոժոժավոր օ՞ձ,– գոչեց հորեղբայրս:

– Ակրն էլ փոքր բան չէ,– ասացի ես:– Մի ակրում երկու բոժոժավոր օձը այնքան էլ շատ չէ: Հաճախ չեն հանդիպի Ձեզ:

– Իսկ էլի ի՞նչ թունավոր բան կա այստեղ:

– Կարծեմ՝ էլ ուրիշ ոչինչ,– ասացի:– Մնացած բոլոր կենդանիներն անվնաս բաներ են: Ասենք՝ բոժոժավոր օձերն էլ այնքան վտանգավոր չեն, եթե հանկարծ մարդ **չկոխի** նրանց:

– Լա՛վ,– ասաց հորեղբայրս:– Դու առա՛ջ գնա և լա՛վ նայիր ոտքիդ տակը: Տե՛ս, թե որ օձ պատահեց, չտրորես: Ես ամենևին չեմ ուզում, որ դու տասնմեկ տարեկան հասակում զոհ գնաս:

– Լավ, սը՛ր,– ասացի: – Ես ուշադիր կլինեմ:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ միջավայրում և ժամանակաշրջանում են կատարվում պատմվածքի գործողությունները:
2. Պատմվածքն ունի՞ ներքին տագնապների ու արտաքին հանդարտության հակադրում: Ինչպիսի՞ն է քո կարծիքը այդ մասին:

3. Ինչո՞ւ էին օձերը այդ հողի վրա ապրում:
4. Ինչո՞ւ է հորեղբայրն ուզում այդ հողի վրա կառուցել իր երազած տունը:
5. Քո կարծիքով ինչպիսի՞ բնավորություն ունի հորեղբայր Մելիքը: Հակադիրի՛ր երկու կերպարները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Թվարկի՛ր պատմվածքի կերպարները և վերլուծի՛ր նախընտրածդ կերպարը:
2. Լուսաբանի՛ր պատմվածքի փաստերը: Ներկայացրո՛ւ կերպարներին՝ պատմվածքից դուրս բերելով նրանց բնութագրող տողերը:
3. Ներկայացրո՛ւ հերոսների արտաքինը նկարագրող, բնավորությունը բացահայտող էական գծերը:
4. Ստեղծագործաբա՛ր վերաշարադրիր պատմվածքի բովանդակությունը՝ կիրառելով սովորած բառերը և պատկերավոր արտահայտությունները:
5. Համեմատի՛ր տասնմեկամյա տղային և հորեղբորը: Գտի՛ր նմանություններ, տարբերություններ, ընդհանրություններ (վենի դիագրամով):
6. Նկարագրի՛ր գլխավոր կերպարներին քո բառերով:

Կերպար		Ֆիզիկական նկարագրություն	Նկարագրի՛ր կերպարի երկու վարքագիծ	Պատմվածքից ելնելով՝ բացատրի՛ր, թե ինչու նա այդպես վարվեց
1.				
2.				

3

Մենք շուռ եկանք և հետ գնացինք դեպի «Ֆորդը»: Վերադառնալիս ես ոչ մի օձ չտեսա: Մեքենա նստեցինք, և հորեղբայրս սիգարեթ վառեց:

– Այս անջուր անապատը ես այգի կդարձնեմ, – ասաց նա:

– Այո՛, սը՛ր, – ասացի:

– Ես գիտեմ, թե ինչ դժվարություններ կան իմ առաջ, և գիտեմ, թե ինչպես կարելի է հաղթահարել դրանք,– ասաց հորեղբայրս:

– Ինչպե՞ս,– հարցրի ես:

– Դու, իհարկե, մտածում ես կոտոշավոր դոդոշների կամ բոժոժավոր օձերի մասին,– ասաց նա:

– Ես մտածում եմ դժվարությունների մասին,– ասացի:

– Դե, ուրեմն,– ասաց նա,– ամենից առաջ ես կվարձեմ մի քանի մեքսիկացի և կստիպեմ աշխատել, ոնց որ հարկն է:

– Իսկ ինչ են անելու նրանք:

– Կմաքրեն **խոպանը**,– ասաց հորեղբայրս:– Հետո ջրհոր կփորեն:

– Որտեղ:

– Ուղիղ հողի մեջ,– ասաց հորեղբայրս:– Երբ մենք ջուր կունենանք, ես նրանց կստիպեմ հողը հերկել և կսկսեմ մշակել:

– Իսկ ինչ եք մտածում աճեցնել այստեղ,– հարցրի ես: – Ցորեն:

– Ցորեն,– գոչեց հորեղբայրս:– Ցորենն ինչիս է պետք: Հացի հատը հինգ սենթ արժի: Ես նռան ծառեր կտնկեմ:

– Իսկ ինչ արժե նուռը:

– Նուռը,– ասաց հորեղբայրս,– փաստորեն անծանոթ բան է այս կողմերում:

– Իսկ էլի ուրիշ բան մտածում եք տնկել:

– Ես մտածել եմ շատ տեսակ-տեսակ ծառեր տնկել:

– Դեղձի:

– Այո՛, մի տասը ակր:

– Իսկ ծիրանի:

– Օ՞, ինչպես չէ,– ասաց հորեղբայրս:– Ծիրանը սքանչելի պտուղ է: Տեսքը՝ գեղեցիկ, համը՝ չքնաղ, կորիզն էլ հիանալի: Մի քսան ակր ծիրան կտնկեմ:

– Միայն չլինի՞ թե ջրի հարցը շատ չարչարի մեքսիկացիներին,– ասացի ես:– Այս հողում ջուր կգտնվի՞ արդյոք:

– Իհարկե կգտնվի,– ասաց հորեղբայրս:– Կարևորն սկսելն է: Բանվորներին ես կասեմ, որ բոժոժավոր օձերից զգուշանան: Նուռ,– կրկնեց նա:– Դեղձ: Ծիրան: Էլի ինչ կառաջարկես դու:

– Թուզ,– ասացի ես:

– Երեսուն ակր էլ թուզ,– ասաց հորեղբայրս:

– Իսկ ինչ կասեք թթի մասին: Թթենին շատ սիրուն ծառ է,– ասացի ես:

– Թուզը,– ասաց հորեղբայրս և բավականությունից լեզուն ճլթացրեց:– Սիրուն ծառ է թթենին, ի՛նչ խոսք: Դեռ հայրենիքում ես շատ էի հավանում այդ ծառը: Քանի՞ ակր կառաջարկեիր դու:

– Մի տասը ակր,– ասացի ես:

– Շատ լավ,– ասաց նա:– Էլ ինչ:

– Արմավենին էլ գեղեցիկ է:

– Օ՜, իհարկե,– ասաց հորեղբայրս,– ամենագեղեցիկ ծառերից մեկն

է: Տասը ակր էլ արմավենի: Էլ ինչ:

– Դե, խնձորենին հազիվ թե աճի այսպիսի հողում,– ասացի ես:

– Երևի չի աճի,– ասաց հորեղբայրս:– Բայց միևնույն է, աճի էլ, ես խնձոր չեմ սիրում:

Նա մոտորը միացրեց, և մենք չոր խոպանով շարժվեցինք դեպի նույնպիսի չոր ճանապարհը: Մեքենան թեթևակի ոստոստում էր, մինչև հասանք ճանապարհը, որից հետո արդեն ավելի արագ գնացինք:

– Ա՛յ, թե էլի ինչ,– ասաց հորեղբայրս:– Երբ տուն հասնենք, դու մերոնց ոչ մի բան չասես այս ֆերմայի մասին:

– Շա՛տ լավ, սը՛ր,– ասացի ես:

«Ֆերմա՞,– մտածեցի ես:– Ի՞նչ ֆերմա»:

– Թող սա նրանց համար անակնկալ լինի,– ասաց հորեղբայրս:– Դու գիտես, թե ինչ պտուղ է քո տատը: Ավելի լավ է՝ ես ամեն ինչ անեմ, ինչպես մտածել եմ, իսկ երբ պատրաստ կլինի, մեր ամբողջ ընտանիքը կտանեմ ֆերմա, և դա լավ անակնկալ կլինի նրանց համար:

– Լա՛վ, սը՛ր,– ասացի ես:

– Ոչ ոքի՝ ոչ մի խոսք:

– Լա՛վ, սը՛ր:

Եվ, ահա, ժամանակը եկավ, ու մեքսիկացիներն սկսեցին խոպանը մաքրել: Երկու ամսում նրանք մաքրեցին տասն ակրի չափ մի տարածություն: Յոթ հոգի էին: Աշխատում էին բահերով ու բրիչներով: Նրանք հասկացողություն չունեին, թե ինչու են իրենց ստիպում այդ գործն անել: Այդ ամենը նրանց շատ տարօրինակ էր թվում, բայց չէին տրտնջում: Փող հո ստանում էին, մնացածն իրենց չէր վերաբերում: Դրանք երկու եղբայր էին՝ իրենց զավակներով: Մի անգամ ավագ եղբայր Դիեգոն շատ քաղաքավարությամբ իմ հորեղբորը հարցրեց, թե իսկապես իրենք ինչո՞վ են զբաղված այստեղ:



– **Սինյո՛ր**,– ասաց նա,– ներեցե՛ք, խնդրում եմ: Մենք այս ինչի՞ համար ենք կտրտում այս կակտուսները:

– Ես այս հողը մշակելու եմ,– ասաց հորեղբայրս:

Մյուս մեքսիկացին Դիեգոյին մեք–

սիկերեն հարցրեց, թե ինչ ասաց հորեղբայրս, և Դիեգոն նրան բացատրեց:

Նրանք մտածեցին, թե չարժե անհանգստանալ ու իմ հորեղբորն ասել, որ դրանից բան չի դուրս գա: Հանգիստ շարունակեցին կակտուսները կտրատել:

Սակայն կակտուսները երկար ժամանակ չէին մնում կտրտված: Մաքրված տարածության վրա բուռն թափով աճում էին նոր փշփշոտ շիվեր: Այդ բանը հորեղբորս ուղղակի զարմացնում էր:

– Կակտուսներից ազատվելու համար խոր վար է հարկավոր,– ասացի ես:– Հարկավոր է ամբողջ հողամասը մի լավ հերկել:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ էր ուզում այդ անմշակ հողը վարել Մելիքը:
2. Ի՞նչ էր մտածում աճեցնել այստեղ հորեղբայրը:
3. Ի՞նչ կարծիք ուներ տղան: Ինչո՞ւ:
4. Ինչպիսի՞ անակնկալ էր պատրաստում Մելիքն իր ընտանիքի համար: Ինչո՞ւ էր իր արարքը թաքուն պահում ընտանիքից:
5. Ի՞նչ էր մտահոգում տասնմեկամյա տղային: Ասածդ հիմնավորի՛ր բնագրի համապատասխան օրինակով:
6. Ի՞նչ մրգեր էր ուզում աճեցնել Մելիք հորեղբայրը և ինչո՞ւ: Բե՛ր համապատասխան փաստարկներ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պարզաբանի՛ր պատմվածքի գլխավոր գաղափարը քո/ձեր հասկացողությամբ:
2. Քո կարծիքով այս պատմվածքը քանի՞ գաղափար է արտահայտում: Մեկնաբանի՛ր՝ ինչո՞ւ ես այդպես մտածում:
3. Ներկայացրո՛ւ կերպարներին՝ պատմվածքից դուրս բերելով նրանց բնութագրող տողերը: (Խմբային աշխատանք)
4. Թվարկի՛ր պատմվածքի կերպարները:
5. Ներկայացրո՛ւ հերոսների արարքների պատճառահետևանքային կապերը:
6. Շարունակի՛ր հետևյալ միտքը. «Ամենահետաքրքիրն այս հատվածում այն է, որ ...», «Ամենահուզիչը հատվածի այն մասն է, երբ... »:
7. Կատարի՛ր բառային աշխատանք:

4

Հորեղբայրս խորհուրդ հարցրեց Ռայենից, որը գյուղատնտեսական գործիքներ էր վաճառում: Ռայենը խորհուրդ տվեց ձիերից ձեռք քաշել և դիմել մշակության նոր ձևերի՝ թող քո հողամասով տրակտոր անցնի, նա մի տարվա գործը մի օրում կանի:

Եվ հորեղբայրս գնեց մի «Ջոն Դիր» տրակտոր: Դա մի հիանալի մեքենա էր: Ռայենի ուղարկած մեխանիկը Դիեգոյին սովորեցրեց, թե ինչպես պետք է վարվել տրակտորի հետ, և հաջորդ անգամ, երբ ես ու հորեղբայրս եկանք հողամաս, հեռվում տեսանք մենավոր տրակտորը, որը հոնդում էր անապատի անսահման լռության մեջ: Դա զարհուրելի տպավորություն գործեց: Եվ իսկապես որ զարհուրելի էր: Բայց հորեղբայրս կարծում էր, որ դա սքանչելի է:

– **Պրոգրե՛ս**,– ասում էր նա:– Նոր դար է սկսվել: Մի տասը հազար տարի առաջ հարյուրավոր մարդիկ մի ամբողջ շաբաթ պիտի աշխատեին, այնինչ տրակտորը նրանց գործը մեկ օրում է արել:

– Տասը հազար տարի առա՞ջ,– զարմացա ես:– Դուք երևի ուզում եք ասել երեկ:

– Թեկուզ հենց այդպես,– ասաց հորեղբայրս:– Ժամանակակից **կոմֆորտը**, միևնույն է, ոչ մի բանի հետ համեմատել չի լինի:

– Տրակտորն ի՞նչ կոմֆորտ է,– ասացի ես:

– Հապա ի՞նչ է, քո կարծիքով: Մի՞թե քշողը նստած չէ:

– Հապա մի փորձեք նրա վրա դիմանալ,– ասացի:

– Քանի որ քեզ համար նստելու տեղ կա,– ասաց հորեղբայրս,– այդ արդեն կոմֆորտ է, սուլել կարո՞ղ ես:

– Այո՛, սը՛ր,– ասացի:– Ի՞նչ եղանակ եք ուզում լսել:

– Եղանա՞կ,– ասաց հորեղբայրս:– Ոչ մի եղանակ ինձ հարկավոր չէ: Ես ուզում եմ, որ դու սուլես տրակտորի վրա աշխատող այն մեքսիկացուն:

– Ինչի՞ համար,– հարցրի:

– Ինչի համար էլ լինի: Պարզապես սուլիր: Թող նա իմանա, որ մենք այստեղ ենք և գոհ ենք իր աշխատանքից: Նա երևի արդեն մի քսան ակր հերկած կլինի:

– Լա՛վ, սը՛ր,– ասացի:

Ես երկու ձեռքերիս երկրորդ և երրորդ մատները բերանս դրի և ամբողջ ուժով սուլեցի: Բավական ուժեղ սուլոց ստացվեց, բայց, երևում է, Դիեգոն չլսեց. նա բավական հեռու էր: Բայց չէ՞ որ մենք ինքներս նրա կողմն էինք գնում, և ես չէի հասկանում՝ հորեղբորս ինչի՞ն էր պետք, որ ես սուլեմ:

– Էլի՛,– ասաց նա:

Ես նորից սուլեցի, բայց Դիեգոն չլսեց:

– Ավելի՛ ուժեղ,– ասաց հորեղբայրս:

Այս անգամ ես լարումից քիչ մնաց պայթեի, իսկ հորեղբայրս ականջ-ները փակեց: Եվ մեքսիկացին տրակտորի վրա լսեց: Նա արագությունը նվազեցրեց, շուռ եկավ և սկսեց դաշտը հերկել մեր ուղղությամբ:

– Դուք ա՞յդ էիք ուզում նրանից,– հարցրի ես:

– Լա՛վ, միևնույն է,– ասաց հորեղբայրս:

Մեկուկես րոպե չանցած՝ տրակտորը մոտեցավ մեզ: Մեքսիկացին շատ գոհ էր: Նա դեմքի ցեխն ու քրտինքը սրբեց և տրակտորից իջավ:

– Սենյո՛ր,– ասաց նա,– հիանալի բան է սա:

– Ուրախ եմ, որ այդ Ձեզ դուր է գալիս,– ասաց հորեղբայրս:

– Չէի՞ք ուզենա նստել՝ քշեմ,– հարցրեց մեքսիկացին հորեղբորս:

Հորեղբայրս չգիտեր՝ ինչ պատասխաներ: Նա ինձ նայեց:

– Առաջ դու բարձրացի՛ր,– ասաց նա:– Մի քիչ նստի՛ր՝ տեսնենք:

Դիեգոն բարձրացավ տրակտորի վրա և ինձ էլ օգնեց բարձրանալ: Նա նստեց մետաղյա նստատեղին, իսկ ես նրա հետևը կանգնեցի և ու-սերից բռնեցի: Տրակտորը ցնցվեց, ոստնեց ու տեղից շարժվեց: Գնում էր արագ և բարձր աղմկում: Մեքսիկացին դաշտում մի մեծ շրջան գործեց և նորից տրակտորը քշեց հորեղբորս մոտ: Ես ցած թռա:

– Լա՛վ,– ասաց հորեղբայրս մեքսիկացուն:– Շարունակի՛ր քո աշխա-տանքը:

Եվ մեքսիկացին տրակտորը տարավ էլի այնտեղ, որտեղ հերկում էր դրանից առաջ:

Գետնի տակից ջուր հանել հորեղբորս հաջողվեց շատ ամիսներ անց միայն: Ամբողջ հողամասում բազմաթիվ հորեր էին փորել, բայց ոչ մի տեղ ջուրը գետնի երես չէր դուրս գալիս: Հորեղբայրս, իհարկե, մեխա-նիկական **պոմպեր** էլ ուներ, բայց միևնույն է, ջուրը չէր դուրս գալիս: Տե-խասից Ռոյ ազգանունով մի ջրային մասնագետ եկավ իր երկու կրտսեր եղբայրների հետ: Նրանք հողը հետազոտեցին և հորեղբորս ասացին, որ ջուր կհանեն: Այդ գործի վրա նրանք երեք ամիս աշխատեցին, բայց ստացված ջուրը պղտոր էր և այն էլ քիչ: Մասնագետը հորեղբորս ասաց, որ ժամանակի ընթացքում կկարգավորվի, և վերադարձավ Տեխաս:

Այժմ արդեն հողի կեսը մաքրված էր ու հերկված, ջուր էլ ունեինք, այնպես որ հասել էր ծառատնկման ժամանակը:

Մենք սկսեցինք նռնենիներ տնկել: Դրանք ամենաբարձրորակ տնկի-ներ էին և շատ թանկ: Տնկեցինք մի յոթ հարյուր հատ: Ես ինքս մի հար-

յուր հատ տնկեցի, հորեղբայրս էլ բավական տնկեց: Այսպիսով՝ աշխարհից դուրս՝ կատարելապես վայրի անապատում, ստացվեց մի քսան ակր տարածությամբ նռնենիների պուրակ: Դա ամենաթովիչ անհեթեթությունն էր, որ կարելի է երևակայել, և հորեղբայրս հիացած էր դրանով: Դժբախտությունը միայն այն էր, որ հորեղբորս փողերը վերջանում էին: Եվ ահա փոխանակ գործը շարունակելու և ամբողջ վեց հարյուր ութսուն ակրում պտղատու ծառեր տնկելու, նա որոշեց իր բոլոր ջանքերը, ժամանակն ու փողը նվիրել միմիայն նռնենիների պուրակին:

– Սա միայն սկզբնական շրջանում,– ասում էր նա:– Մինչև որ մենք կսկսենք նուռ ծախել և մեր փողը հետ ստանալ:

– Հասկանալի է, սը՛ր,– համաձայնում էի ես:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ինչպե՞ս և ի՞նչ միջոցներով մշակեցին վայրի անապատը: Ի՞նչ դժվարությունների հետ էր կապված այդ աշխատանքը: Փաստերը բե՛ր պատմվածքից:
2. Անջրդի անապատում արդյոք նռնենիների պուրակ կարելի էր հիմնել: Եթե այո՛, ինչո՞ւ, եթե ո՛չ, ինչո՞ւ:
3. Ինչո՞ւ էր հերոսը ցանկանում անպայման նռնենիներ տնկել: Հիմնավորումներդ բե՛ր պատմվածքից դուրս գրած նախադասություններով:
4. Ինչո՞ւ էր տղան կասկածանքով վերաբերվում հորեղբոր գործողություններին, սակայն չէր հակադրվում նրան: Դու ինչպե՞ս կվարվեիր նրա փոխարեն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որոնի՛ր կերպարների բնավորությունն արտահայտող ազգային խորհրդանիշ: Բնագրի՛ց բեր փաստեր՝ ասածներդ հաստատելու համար:
2. Ներկայացրո՛ւ գլխավոր հերոսի արարքների պատճառահետևանքային կապերը:
3. Ստեղծագործաբա՛ր վերաշարադրիր պատմվածքի բովանդակությունը՝ կիրառելով հեղինակային բառապաշարը և պատկերավոր արտահայտությունները:
4. Ընդգծի՛ր «Նռնենիները» պատմվածքի գլխավոր գաղափարն արտահայտող բանալի բառերը, նախադասությունները:
5. Երկսյուն աղյուսակով ներկայացրո՛ւ հերոսների արտաքինը նկարագրող,

բնավորությունը բացահայտող էական գծերը:

6. Թվարկի՛ր կամ դո՛ւրս գրիր այն բոլոր բառերը, որոնք նոր կամ անծանոթ են քեզ համար: Տեքստից ելնելով՝ բացատրի՛ր, թե դա ինչ կարող է նշանակել: Դրանցով կազմի՛ր շարադրություն:

5

Ես հավատացած չէի, բայց, չգիտեմ՝ ինչու, ինձ թվում էր, թե գոնե առաջիկա երկու-երեք տարում մենք այդ մանրիկ ծառերից ոչ մի պիտանի պտուղ չենք ստանա, այնուամենայնիվ ոչինչ չասացի:

Մեքսիկացի բանվորներին հորեղբայրս արձակեց, և ես ու ինքը տնտեսությունը մեր ձեռքն առանք: Մենք ունեինք տրակտոր և հողամաս, ուստի ժամանակ առ ժամանակ գնում էինք **պլանտացիա**, տրակտորը քշում, կակտուսներն արմատախիլ անում և նռնենիների արանքները փխրեցնում: Այսպես շարունակվեց երեք տարի:

– Շուտով արդեն,– ասում էր հորեղբայրս,– այս անապատի տեղը դու կտեսնես աշխարհիս ամենասքանչելի այգին:

Ջրի դրությունը, սակայն, չէր բարելավվում: Երբեմն հանկարծ ուժեղ ու առատ շիթ էր խփում, որի մեջ մանրիկ քարեր բոլորովին քիչ էին լինում, և հորեղբայրս շատ էր ուրախանում, բայց մյուս օրը նորից պղտոր ու բարակ ջուր էր հոսում: Նռնենիները քաջաբար պայքարում էին կյանքի համար, բայց միշտ էլ այնքան ջուր չէին ստանում, որ պտուղ տան:

Նրանք ծաղկեցին միայն չորրորդ տարին: Հորեղբորս համար դա մի մեծ տոն էր: Նա բոլորովին խելքը թռցրեց ուրախությունից, երբ ծառերը ծաղկած տեսավ:

Բայց այդ ծաղիկներից էլ մի խելքը գլխին բան դուրս չեկավ: Գեղեցիկ ծաղիկներ էին և միայն այդքան: Հազվագյուտ ծիրանագույն ծաղիկներ:

Այդ տարին բերք ստացանք ընդամենը երեք հատ մանրիկ նուռ:

Մեկը ես կերա, մյուսը հորեղբայրս, իսկ երրորդը դրինք գրասենյակի ամենաաչքի ընկնող տեղը:

Հաջորդ տարին լրացավ իմ տասնհինգ տարին: Այդ ժամանակամիջոցում ինձ հետ շատ ու շատ զարմանալի բաներ պատահեցին: Այսպես, ես շատ լավ-լավ գրքեր կարդացի, և բոյով էլ հորեղբորս չափ դարձա: Ֆերման դեռ էլի մնում էր մեր գաղտնիքը: Դա հորեղբորս վրա ահագին փող էր նստում, բայց նա էլի հույսը չէր կտրում, որ շատ շուտով կսկսի

նուռ ծախել, կվերադարձնի իր փողերը և կիրականացնի անապատում այգի ստեղծելու իր պլանը:

Ծառերը լավ չէին աճում: Նրանք մի քիչ մեծացել էին, բայց դա հազիվ էր նկատվում: Շատերն էլ թառամել ու փչացել էին:

– Դա նորմալ բան է,– ասում էր հորեղբայրս:– Ակրին քսան ծառը նորմալ կորուստ է: Բայց մենք առայժմ նորերը չենք տնկի: Հետո կանենք այդ:

Այս բոլորից զատ, նա դեռ հողի համար էլ փող էր վճարում:

Հետևյալ տարին նա իր այգուց մի երկու հարյուր նուռ ստացավ: Բերքը մենք երկուսով հավաքեցինք: Այդ նռները բավական ողորմելի տեսք ունեին: Մենք դրանք դասավորեցինք գեղեցիկ արկղների մեջ, և հորեղբայրս ապրանքն ուղարկեց Չիկագո, մեծաքանակ առևտրական մի տուն: Ընդամենը տասնմեկ արկղ էր:

Մի ամբողջ ամիս մենք այդ առևտրական տնից ոչ մի պատասխան չստացանք, և ահա մի գիշեր հորեղբայրս միջքաղաքային հեռախոսային խոսակցություն պատվիրեց: Մեծաքանակ առևտրական դ'Ագոստինոն հորեղբորս ասաց, որ ոչ ոք չի գնում:

– Դուք ամեն մի արկղին որքա՞ն եք պահանջում,– լսափողի մեջ գոռում էր հորեղբայրս:

– Մեկ դոլար,– գոռում էր դ'Ագոստինոն:

– Դա քիչ է,– գոռում էր հորեղբայրս:– Ես ամեն մի արկղին հինգ դոլար եմ ուզում, ո՛չ մի **սենթ** պակաս:

– Արկղը մի դոլարով էլ չեն վերցնում,– գոռում էր դ'Ագոստինոն:

– Ինչո՞ւ չեն վերցնում,– գոռում էր հորեղբայրս:

– Մարդիկ չեն իմանում՝ ինչ բան է սա,– գոռում էր դ'Ագոստինոն:

– Հապա դուք էլ ի՞նչ գործ անող եք այդ դեպքում,– գոռում էր հորեղբայրս:– Դա նո՛ւռ է, նո՛ւռ: Ես ամեն մի արկղին հինգ դոլար եմ ուզում:

– Ես ծախել չեմ կարող,– գոռում էր առևտրականը: – Ես ինքս էլ մի հատ նուռ կերա և չեմ կարող ասել, թե դա մի երևելի բան է:

– Դուք գժվե՞լ եք,– գոռում էր հորեղբայրս:– Աշխարհի երեսին նռան պես լավ պտուղ չկա: Արկղին հինգ դոլար հո համարյա ձրի է:

– Հիմա ի՞նչ կհրամայեք անել,– գոռում էր դ'Ագոստինոն: – Ես սրանք ծախել չեմ կարող: Ինձ պետք չեն:

– Հասկանում եմ,– ֆսսացրեց հորեղբայրս:– Հետ ուղարկեցեք շտապ:

Այս խոսակցությունը հորեղբորս վրա տասնյոթ դոլար նստեց:

Եվ այսպես, տասնմեկ արկղները հետ եկան:

Համարյա բոլոր նռները ես ու հորեղբայրս կերանք:

Հետևյալ տարին հորեղբայրս այլևս հողի համար վճարել չկարողա–

ցավ: Նա թղթերը վերադարձրեց այն մարդուն, որը ծախել էր նրան հողամասը: Այդ ժամանակ ես գրասենյակում էի:

– Մի՛ստր Գրիֆիտ,– ասաց հորեղբայրս:– Ես ստիպված եմ Ձեզ վերադարձնել Ձեր սեփականությունը, բայց ուզում եմ խնդրել, որ մի զիջողություն անեք: Քսան ակր ես նռնենի եմ տնկել և շատ երախտապարտ կլինեի Ձեզ, եթե թույլ տայիք ինձ խնամել այդ ծառերը:

– Խնամե՞լ,– ասաց միստր Գրիֆիտը:– Ինչի՞ համար:

Հորեղբայրս փորձեց բացատրել նրան, բայց չկարողացավ: Շատ դժվար է մի բան մտցնել մարդու գլուխը, եթե նա ձեզ չի կարեկցում:

Եվ ահա հորեղբայրս կորցրեց և՛ հողը, և՛ ծառերը:

Մի երեք տարի անց ես ու հորեղբայրս մեքենայով գնացինք այնտեղ և անցանք նռնենիների պուրակով: Բոլոր ծառերը չորացել էին: Հողը նորից ծածկվել էր կակտուսներով և փշփշոտ թփուտով: Եթե չհաշվենք մանրիկ չորացած նռնենիները, այստեղ ամեն ինչ ճիշտ և ճիշտ այնպես էր, ինչպես եղել էր միշտ՝ սկսած աշխարհի ստեղծվելու առաջին օրից:

Մենք անցանք նռնենիների պուրակով և վերադարձանք մեքենայի մոտ:

Մեքենա նստեցինք և վերադարձանք քաղաք:

Մենք իրար ոչ մի խոսք չասացինք, որովհետև ասելու շատ ու շատ բան ունեինք, բայց դրա համար բառեր չկային:

Ֆերմեր – ագարակատեր
էսթետիկա – գեղագիտություն
սըր –պարոն՝ անգլերեն
զեռուն – սողուն, ճիճու
մղոն – 7420 մետր
կոխել – տրորել
խոպան – անմշակ
սինյոր – պարոն՝ իտալերեն
պրոգրես – առաջընթաց, զարգացում
կոմֆորտ – հարմարավետություն
պոմպ – հեղուկ և գազ մղող սարք
պլանտացիա – հատուկ մշակությամբ հողային տարածք
հետևյալ տարին – հաջորդ տարի
սենթ – ամերիկյան մանրադրամ

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ըստ քեզ՝ քանի՞ գաղափար է արտահայտում այս պատմվածքը: Կարծիքդ քննարկի՛ր ընկերներիդ հետ: Խմբով քննարկեք, թե ինչու եք այդպես մտա-

ծում:

2. Պատմվածքի ո՞ր հատվածում է արտահայտված նրա հիմնական գաղափարը: Փաստարկներ բե՛ր բնագրից վերցրած օրինակներով:
3. Ո՞ր կերպարը քեզ դուր եկավ, ինչո՞ւ:
4. Ի՞նչ սովորեցիր պատմվածքն ուսումնասիրելիս:
5. Դատողություն արա՛ պատմվածքի վերաբերյալ՝ արտահայտելով սեփական կարծիքդ:
6. Որտե՞ղ է թաքնված պատմվածքի «քողարկված» իմաստը:
7. Ըստ քեզ՝ ինչի՞ց է առաջացել հորեղբոր խոր կարոտի զգացումը, և որն է նրա հոգում թաքնված վշտի պատճառը, որի մասին նա չի խոսում:
8. Ինչո՞ւ ապարդյուն անցան հորեղբոր ջանքերը, և նրա երազանքը անկատար մնաց:

ԱՌԱՁԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Նռնենիները» պատմվածքից դո՛ւրս գրիր բանալի բառերը, նախադասությունները: Դրանցով շարադրի՛ր նոր պատմություն:
2. Նորովի վերաշարադրի՛ր պատմվածքի բովանդակությունը՝ դեպքերին այլ ընթացք հաղորդելով:
3. Բացատրի՛ր պատմվածքի վերնագրի կապը բովանդակության հետ: Հիմնավորի՛ր ասածդ: (Խմբային աշխատանք)
4. Նկարի՛ր որևէ խորհրդանիշ, որն արտահայտում է պատմվածքի հիմնական միտքը:
5. Պատմվածքում առանձնացրո՛ւ այն պարբերությունները, որոնցում առկա է եզրահանգում: (Զույգերով աշխատանք)
6. Արտահայտի՛ր վերաբերմունքդ՝ ըստ ստորև տրված «Քառաբաժանի»:

Ամփոփում

«Նռնենիները» պատմվածքը հայրենի հողը հարկադրաբար լքած և օտար երկրում իր տեղն այդպես էլ գտնել չկարողացող հայ մարդու մասին է: Չենք սխալվի, եթե ասենք, որ Մելիք հորեղբայրը հավաքական կերպար է՝ մի ողջ ժողովրդի մարմնացում մեկ անձի մեջ: Երկա՛ր-երկար կարելի է զրուցել Մելիք հորեղբոր կերպարի շուրջ: Նրա էությունը բացահայտող մի գիծ հեղինակն ինքն է ուղիղ ներկայացնում: Հենց պատմվածքի սկզբում Վիլյամ Սարոյանը նշում է, որ նա բանաստեղծի հոգի ուներ: Իսկ ի՞նչ է դա նշանակում. անշուշտ, սպառող հասարակությունից առանձնացող, երազկոտ մարդու մասին է խոսքը: Բայց դա ինչ-որ պատանեկան, ռոմանտիկ

երազկոտություն չէ, այլ շատ ավելի բարդ մի հոգեվիճակ, որում նաև խոր կարոտի զգացում կա, թաքցված վիշտ, որ բառերով չես փոխանցի: Փորձենք հասկանալ պատմվածքի «քողարկված» իմաստը: Անապատային, ամայի հողատարածքը թերևս հենց այն աշխարհն է խորհրդանշում, որն օտար է Մելիք հորեղբորը: Բայց նա ուզում է գեղեցկացնել, շենացնել այդ աշխարհը, ինչպես իր տունը: Երևում է, որ նա գումար ուներ, ուստի հաստատապես այն կարող էր ներդնել ավելի շահութաբեր գործում, մինչդեռ «համառորեն» անապատն է ուզում ծաղկեցնել: Սա չի՞ հիշեցնում արդյոք աշխատասեր հայ գյուղացու կերպարը, որն իր ամբողջ էությամբ կապված է բնությանը: Նոնենիները ևս խորհրդանիշն են գաղթականների, պանդխտացած հայերի, որոնք չեն կարողանում խոր արմատ գցել օտար հողում, ստանալ անհրաժեշտը ծաղկելու և բերք տալու համար:

ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ (1878-1943)

Զապէլ Եսայեանի գործն ընդարձակ է, քան ամբողջ արդիւնքը մեր բոլոր կին գրողներուն:

Հակոբ Օշական

- Կենսագրական տեղեկություններ
- Ժամանակակիցները՝ Զապել Եսայանի մասին
- Գրական ժանր. վեպ (ինքնակենսագրական վեպ)
- «Սիլիհտարի պարտէզները»
- Լրացուցիչ նյութեր

Զապել Եսայանը 20-րդ դարի հայ գրականության ամենավառ գրողներից է, ազգային-հասարակական գործիչ և մարդու իրավունքների պաշտպան, իր ժամանակի ամենակրթված և ազատամիտ անհատականություններից մեկը: Նա 19-րդ դ. վերջում Օսմանյան կայսրությունում բնակվող եզակի կանանցից էր, որ արտերկրում ստացել է բարձրագույն կրթություն: Կիլիկիայի (1909 թ.) և 1915 թ. ցեղասպանության առաջին վկայագիրներից է:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զապել Եսայանը (Հովհաննիսյան) ծնվել և մեծացել է 1878 թ. Կ. Պոլսի Սկյուտար թաղամասի «Սիլիհտարի պարտէզներ» կոչվող թաղում: Նախնական կրթությունը ստացել է մասնավոր դպրոցում, ապա Սկյուտարի «Սուրբ խաչ» վարժարանում: Այնուհետև ուղղորդմամբ տեղափոխվել է Սորբոն և հաճախել տեղի ֆրանսիական քոլեջի գրականության դասերին: Այդ տարիներին է նա հանդիպում իր ապագա ամուսնուն՝ նկարիչ Տիգրան Եսայանին: Հայտնի է, որ նրանք ունեցել են երկու զավակ: Փարիզում Զապելը մտերմանում է հայ մտավորականների մի լայն շրջանակի հետ՝ Արշակ Չոպանյան, Էդգար Շահին, Սիամանթո և ուրիշներ, որոնք մեծ դեր են խաղում նրա՝ որպես մարդու և մտավորականի ձևավորման գործում: Փարիզում Զ. Եսայանի կյանքն ապահովված էր: Ուներ և՛ աշխատանք, և՛ ընկերական շրջապատ: Թվում էր, թե նրա ընտանիքը երջանիկ էր, սակայն 1902 թ. թողեցին ամեն բան և վերադարձան Կ. Պոլիս:

1909 թ. հայ մտավորականների հետ Զապել Եսայանն այցելում է Կիլիկիա, մասնավորապես՝ Ադանա, որտեղ տեղի էին ունեցել հայերի ջարդեր: Այդ այցից հետո էր, որ նա սկսեց անդադար հոդվածներ գրել ժամանակի հայտնի պարբերականներում՝ փորձելով աշխարհի ուշադրությունը հրավիրել հայ ժողովրդի ճակատագրի վրա, ցույց տալ, թե ինչ է իրականացվում հայ ազգի հանդեպ: Այս շրջանի ծանր տպավորությունները Զապելը ներկայացնում է իր «Աւերակներու մէջ» գրքում, որը հրատարակվում է Կ. Պոլսում 1911 թ.:

Զ. Եսայանի մորեղբոր տունը «Սիլիհտարի պարտէզներ» թաղամասում, որտեղ ապրել է ինքը՝ Զ. Եսայանը:

1915 թ. նա կարողացավ փրկվել երիտթուրքերի հալածանքներից և ապաստանեց Բուլղարիայում: Որոշ ժամանակ թաքնվում էր այնտեղ, իսկ 1916 թ. գալիս է Կովկաս և սկսում ծավալել գրական ու հասարակական լայն գործունեություն: Նա ցանկանում էր աշխարհի ուշադրությունը հրավի-

րել, մասնավորապես, բարբարոս թշնամու թիրախում հայտնված հայ կանանց խնդիրների վրա:

Հայոց Մեծ եղեռնի տարիներին Միջին Արևելքի երկրներում Զապել Եսայանը կազմակերպել է հայ տարագիրների և որբերի հավաքման, նրանց խնամքի ու տեղափոխման գործը: Այդ շրջանում էլ նա գրել է «Վերջին բաժակը» (Փարիզ, 1916 թ.), «Հոգիս աքսորյալ» (Վիեննա, 1922 թ.) վիպակները, որոնցում իր վճռական բողոքն է արտահայտել հայոց ազգային մեծ ողբերգության առիթով:

Պահպանվել է 1943 թ. Զապելի ուղարկած վերջին նամակը Բաքվի բանտից: Թե այնուհետ ի՞նչ ճակատագիր է ունեցել նա, մինչ օրս ոչ ոքի հայտնի չէ: Ասում են՝ կա՛մ մահացել է բանտում, կա՛մ սպանվել այնտեղից տեղափոխվելիս:

Զապել Եսայանն իր մանկության տարիների Կ. Պոլսի մասին հուշերը ներկայացնում է «Սիլիհտարի պարտէզներ» ինքնակենսագրական վեպում: Ինքնակենսագրական վեպի ժանրով ստեղծագործելն այդ տարիներին նորություն էր համարվում, և Զ. Եսայանն այդ ժանրով ստեղծագործող առաջին գրողներից է:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ՝ ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Զապել Եսայանը հավատում էր, որ գրականությունը ոչ թե զարդարանք, այլ սոցիալական հավասարության համար պայքարելու միջոց է: Մասնավորապես «Աւերակների մէջ»-ի հիմնական ուղերձը հանուն ճշմարտության և մարդու իրավունքների համարձակ գործելն է: Զապել Եսայանը առաջին հայ գրողներից էր, որոնք հատուկ ուշադրություն դարձրին կոտորածների ժամանակ կանանց չարչարանքներին: Նա ձայն տվեց վերապրած կանանց՝ մի բան, որ նախկինում երբևէ չէր արվել... Եսայանի խոսքերը մարգարեական էին և օգնում են մեզ ուշադրություն դարձնել ցեղասպանական գործընթացի ժամանակ անմեղ կանանց և երեխաների տանջանքներին:

Զուդիթ Սարյան

Հնքոտ վազք էր Զապել Եսայանի կյանքը, բայց նա երբեք հևասպառ չընկավ կես ճանապարհին: Անկոխ բարձունքների ձգտող նրա անհատականությունը գրական և հասարակական պայքարի թեժ հնոցում էր կաղապարվել:

Սևակ Արզումանյան

Զապել Եսայանն այն եզակի հեղինակներից է, որոնք չեն ապաստանել պատմության խորքերում, այրվել են ժամանակի հետ, ժամանակի համար: Շուրջ չորս տասնամյակ ստեղծագործելով՝ նա թողեց գեղարվեստական ինքնատիպ արժեքներ, որոնք մեր ժողովրդի մի ամբողջ հատվածի կյանքի տարեգրությունն են, հանկերգը ազգային ողբերգության և հույսի:

Սեյրան Գրիգորյան

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Որտեղ և երբ է ծնվել Զապել Եսայանը:
2. Ինչ ճանապարհ է անցել Զ. Եսայան կինը և գրողը:
3. Թվարկիր նրա հայտնի երկերը:
4. Ինչի՞ զոհ է դառնում գրողը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ներկայացրու Զ. Եսայանի կենսագրության կարևոր իրադարձությունները արտացոլող սահիկաշար:
2. Ամփոփելով Զ. Եսայանի մասին ժամանակակիցների կարծիքները՝ ներկայացրու նրա կերպարը:, կազմիր հեղինակի գրական դիմանկարը:
3. Ներկայացրու ինքնակենսագրական վեպի ժանրային առանձնահատկությունները:

ՍԻԼԻՀՏԱՐԻ ՊԱՐՏԷԶՆԵՐԸ

1

Ծնած եմ 1878-ին, Փետրուար 4-5-ի առաւօտեան դէմ, Կ. Պոլիս, Սկիւտար, Սիլիհտարի պարտէզներ կոչուած թաղին մէջ:

Այդ նոյն գիշերը ռուս բանակը հասեր էր Սան Սթեֆանօ: Մայրս կը պատմէր, որ ինքը երկունքի ցաւերու մէջ էր, երբ Փետրուար 4-ի երեկոյին, մունետիկներ թաղերէն անցնելով գոչեցին.

– Թնդանօթներ պիտի արձակուին, մի՛ վախնաք:

Անտարակոյս կառավարութիւնը կարծեր էր, որ ռուսները պիտի ռմբակոծեն մայրաքաղաքը:

Մայրս կը պատմէր, որ այդ օրը ձիւնի բուռն փոթորիկ մը բարձրացաւ և որ տևեց ամբողջ գիշերը: Մարդիկ տուներէն դուրս չէին կրնար ելլել, շնչասպառ կ'ըլլային: Յոյն դայեակը, որ մայրս կը խնամէր, Գատըգիւղ կը բնակէր: Ոչ մէկ կառապան **կը յօժարէր** ձիերը լծել կառքին: Երանիկ մօրաքոյրս կ'աւելցնէր, որ ամէն բանի վրայ հայրս տունը չէր և Տիգրան մօրեղբայրս տուն եկեր էր գինով վիճակի մէջ՝ «մէկ պատը ինծի, մէկ պատը քեզի...». և կէս ժամ տևեր էր, մինչև յաջողեր էին հասկցնել անոր, որ պէտք էր ճար մը գտնել, յոյն դայեակը բերել Գատըգիւղէն:

Տիգրան մօրեղբայրս նետուեր էր փողոց, անցեր էր Հայտար Փաշայի գերեզմանոցէն և քանի մը անգամ ճամբան կորսնցնելով, ձիւնի փոթորիկին կուրծք տալով՝ վերջապէս հասեր էր Գատըգիւղ, յոյն դայեակը հաներ էր անկողինէն և թևէն բռնած քշեր բերեր էր Սկիւտար:

Մայրս կը պատմէր նաև, որ կէս գիշերը անց, յոյն դայեակը և հայրս կրակարանին շուրջ նստած, սպասելով երեխայի ծննդեան՝ բուռն վիճաբանութեան բռնուեր էին իրարու հետ: Դայեակը այն յոյսը կը սնուցանէր, որ երբ ռուսները գրաւեն մայրաքաղաքը, «քրիստոնեաները պիտի ազատագրուին», մինչ հայրս որևէ լաւ բան չէր սպասեր ռուս բանակի յաջողութենէն:

Ես ծներ եմ վտիտ և վատուժ: Տիգրան մօրեղբայրս, նորածինը տեսնելով, գոչեր է.

– Աս ալ **չոճուխ** է, պէ՞... կարծես քիչ մը փրփուր է. մեղք քաշած նեղութեանս...:

Մինչև ութ-ինը տարեկանս Տիգրան մօրեղբայրս դեռ ինձ կ'անուանէր փրփուր:

Արդարև, մինչև այդ տարիքները եղած եմ շատ տկար, ենթակայ ամէն տեսակ մանկական հիւանդութիւններու և շարունակ տատանուեր եմ մահու և կենաց մէջ:

ՄԵՐ ՏՈՒՆԸ

Մեր բազմանդամ ընտանիքը բաղկացած էր զանազան խաւերէ սերած մարդոցմէ, որոնք եկեր միացեր էին մէկ յարկի տակ: Այդ ժամանակները նման կացութիւնը տարօրինակ երևոյթ չէր Կ. Պոլսոյ մէջ:

Մօրենական մեծ մայրս սերած էր պալաթցի հին ընտանիքէ. հայրը շնորհազուրկ պաշտօնատար էր: Տան մէջ ամէնքը, ինչպէս և ազգականները և ծանօթները *փուպու* կ'ըսէին մեծ մօրս: Ան հպարտ և տխուր կին էր: Գրել-կարդալ չէր գիտեր, բայց կը խօսէր մաքուր հայերէն և ընտրովի բառերով թրքերէն: Բարձրահասակ էր և **սէգ** կեցուածք ունէր: Կ'ըսէին թէ շատ գեղեցիկ եղած էր: Ես զինքը ճանչցած եմ միշտ սևազգեստ, տխուր, սև աչքերով, որոնք իր մասունքի պէս ճերմկած և խորշոմած դէմքին վրայ կը կայծկլտային շատ բան տեսած և խորիմաց կնոջ յատուկ իմացականութեամբ: Մեծ մայրս կարծես անյաղթելի արհամարհանք ունէր ամէն բանի համար և ամենուն նկատմամբ, նոյնիսկ իրմէ ծնած զաւակներուն նկատմամբ. այդ արհամարհանքը զինքը կը դարձնէր անժպիտ և սակաւախօս: Մեծ մայրիկս ինքզինքին հարկադրած խիստ վարքագծին մէջ զինադադար կ'ունենար միայն հայրիկիս վերաբերմամբ, որուն հանդէպ ունէր յարգանք և սէր: Ան կը սիրէր նաև իր զաւակները, մանաւանդ **մանչ**երը, ցաւագին, տանջալի սիրով մը, որ իրեն թոյլ չէր տար ներողամիտ ըլլալ:

Իրողութիւնը այն է, որ երբեք չթուլացող հետևողականութեամբ մեծ մայրս իր բազմաչարչար կեանքի ընթացքին պահպաներ էր. սովորութիւններ, աւանդութիւններ՝ համապատասխան իր զաւակներու կենցաղին, իր նիւթական կացութեան, և այդ բոլորը կը դառնային տառապանքի աղբիւրներ:

Տասնըչորս տարեկանին զինքը ամուսնացուցեր էին աճապարանքով, «առանց ետև-առաջ նայելու», Շիրին օղլու Յակոբի հետ, գեղեցկադէմ երիտասարդ մը, արհեստով կառապան, որ միջնորդ կին մը ճարեր էր Սկիւտարէն:

Ահա թէ ինչ պատահեր էր:

Այն ժամանակ, **ենիչէրիները** ահ ու սարսափի մէջ կը պահէին մայրաքաղաքի ազգաբնակչութիւնը: Ենիչէրիները մասնաւորաբար սանձարձակ էին Սթամպուլի և Ոսկեղջիւրի յունական թաղերուն մէջ: Մեծ մօրս ընտանիքը արդէն իսկ իրենց ազդեցութիւնը կորսնցուցած **տէովլէթ տիւշկինի**, և հետևաբար անպաշտպան ընտանիք, իրենց աղջիկը՝ Լուսիկը, մինչև տասնըչորս տարեկան հասակը պահեր են տանը՝ չորս պատերուն մէջ, որովհետև վախցեր են, որ որևէ ենիչէրի ուշադրութիւն կը դարձնէ անոր: Բայց ժամանակի սովորութեան համեմատ պէտք էր որ **արբունքի հասած** աղջիկը առաջին անգամ դուրս գար եկեղեցի երթալու և հաղորդութիւն առնելու համար: Մեծ մայրս կը պատմէր, որ այն ժամանակ կիները դուրս չէին ելլեր տունէն, իսկ տղամարդիկ, ամէն առաւօտ գործի երթալու համար, դռան սեմին վրայ կանգ կ'առնէին, կը խաչակնքէին և տնեցիներուն հետ **«հելալլամիշ» կ'ըլլային**, որովհետև վստահ չէին, որ պիտի վերադառնային իրիկունը: Քանի-քանի՜ անգամներ, Սթամպուլի փողոցներուն մէջ, ենիչէրի մը իր եաթաղանի սրութիւնը փորձելու համար թոցուցած էր քրիստոնեայի մը գլուխը: Յոյն, թէ հայ տղամարդիկ իրենց պեխերը կը կնտէին՝ իբրև նշան խոնարհութեան, լայնաբերան ֆէսը կը քաշէին իրենց ականջներուն վրայ: Փողոցներէն կը քալէին հեզիկ և կորաքամակ, որպէսզի իրենց նայուածքը չհանդիպի ենիչէրիի մը **լինքս**ի ակնարկին: Գլուխը բարձր բռնել, շեշտակի նայիլ մարդոց, կը համարուէր լրբութիւն և կը դառնար առիթ՝ ամէն տեսակ կամայականութիւններու: Մեծ մայրս կը յիշէր ընտանիքներ, որոնց տղամարդը անհետ կորած է: Կը խօսէր փարթամ ընտանիքներու մասին, որոնց զաւակները օրուան հացի կարօտ մնացած են: Նոյնիսկ **վիւգելա**ն, նոյնիսկ սուլթանները կը դողային ենիչէրիներէն, որոնց պետերը միահեծան կ'իշխէին ոչ միայն իրենց օճախներուն, այլև իրենց թաղերուն, ամբողջ մայրաքաղաքին:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Որո՞նք են վեպի, մասնավորապես ինքնակենսագրական վեպի, առանձնահատկությունները:
2. Ի՞նչ է պատմում գրողն իր մոր և մորեղբոր մասին:
3. Ինչպիսի՞ ընտանիքում է մեծացել ապագա գրողը:
4. Ինչի՞ հետ էր մորեղբայրը համեմատում նորածին Զապելին, ինչո՞ւ:
5. Ինչո՞ւ է Զ. Եսայանի մեծ մայրն ամուսնացել շատ վաղ՝ տասնչորս տարեկանում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քո բառերով բնութագրի՛ր Զ. Եսայանի մեծ մորը՝ տուտուին:
2. Դո՛ւրս գրիր հատվածի քեզ դուր եկած նախադասությունները և մեկնաբանի՛ր:
3. Համառոտ վերաշարադրի՛ր վեպի ընթերացծդ հատվածը:
4. Պատմի՛ր ընտանիքիդ անդամների մասին՝ պահպանելով Զ. Եսայանի ոճը, կիրառելով քո բառապաշարը:

2

Ամէն անգամ, որ մեծ մայրս վերյիշէր իր մանկութեան դաժան օրերը, Երանիկ մօրաքոյրս կը միջամտէր:

– Ամա՛ն տուտո՛ւ,– կ՚ըսէր ան,– քու հարդ, մարդ ալ խելք չունէի՞ն... ատանկ **զալիմ** ժամանակ ինչո՞ւ քեզ **ժամ** ղրկեր են:

Մեծ մայրս կը բացատրէր, որ այն ժամանակները պատրիարքարանը զօրաւոր էր, «ձեռքը երկար էր», պատրիարքը ենիչէրիներու աղային հետ լաւ կապեր ունէր և ոչ միայն մօտէն կը հսկէր, որ իր հօտը կրօնական պարտաւորութիւնները կատարէ, այլև անսաստողները և թերացողները խստիւ կը պատժէր:

– Չըսե՞ս, տուտո՛ւ,– կ՚ընդհատէր Երանիկ մօրաքոյրս,– երկու կրակի մէջ մնացած էիք:

Մեծ մայրս ուշադրութիւն չէր դարձներ Երանիկ մօրաքրոջս դիտումնաւոր ակնարկին և կը շարունակէր պատմել, թէ ինչ միջոցներով պատրիարքարանը իր իշխանութիւնը կը գործադրէր:

Այդ ժամանակ եկեղեցիները պղինձէ զանգակներ չունէին: Լուսա-

բարը այգաբացին **թոպով** կը զարնէր տախտակի մը վրայ, իսկ ժամկոչը կ'անցնէր թաղերէն և երգելով հաւատացեալները կը հրաւիրէր եկեղեցի՝ առաւօտեան աղօթքի: Տղամարդիկ ստիպուած էին երթալ, կիները տան մէջ կ'աղօթէին: Պահքի օրերուն պատրիարքարանի **եասախ-ճիները** կը պտըտէին թաղերը, որոնք շուներու պէս հոտ կը քաշէին և եթէ տունէ մը միսի հոտ գար, տանտէրը կը ձերբակալէին, երբեմն տեղն ու տեղը կը ծեծէին, **ֆալախան** կու տային, մսեղէնը կը գրաւէին և տուգանք կ'առնէին: Երբեմն ալ կը տանէին եկեղեցիի բանտը և հոն կը ծեծէին ու կը բանտարկէին: Եթէ պատահէր, որ մէկը ապստամբէր, դիմադրէր, կը տանէին պատրիարքարանի զնտանը և ամիսներով կը պահէին մինչև որ «յանցաւոր»ը մեղայի գար: Երբեմն ալ յիմարանոցը կ'արգելափակէին՝ իբրև խենթ, և այլևս իրենց մասին լսող չէր ըլլար:

Այն ժամանակ իբրև յիմարանոց կը ծառայէր Նառլը Գափուի Սուրբ Յովհաննէս եկեղեցիին նկուղը: Խենթերը կը կապէին շղթայով և անոնց դաստակներուն և ոտքերուն **լալէ** կ'անցընէին: Այդպէս՝ անոնք կը մնային կեղտի և կղկղանքի մէջ: Յիմարապահ-բանտապահները, լռեցնելու համար այդ՝ «Եկեղեցւոյ սուրբ խորհուրդներուն և կարգերուն» հայհոյողները, անխնայ, երբեմն ցմահ կը ծեծէին: Բայց մեծ մայրս կ'ըսէր, որ անոնք ա՛լ աւելի կը հայհոյէին:

Եւ օր մը ալ մեծ մայրս պատմեց, թէ ինչ հանգամանքներու մէջ Գազազ Արթին **ամիրան** որոշեր էր Ետի Գուլէի Սուրբ Փրկիչ ազգային հիւանդանոցը կառուցանել իր ծախքովը:

Արդ ուրեմն, մեծ տօնի մը առիթով, պատրիարքը հանդիսաւոր պատարագ կը մատուցանէր Նառլը Գափուի Սուրբ Յովհաննէս եկեղեցիին մէջ՝ շրջապատուած արքեպիսկոպոսներով և այն ժամանակի դպիրներով, որոնց ամէն մէկը որոշ թաղի մը սոխակը և փառքը կը հանդիսանար: Մեծ մայրս կը յիշէր այն նշանաւոր դպիրներուն անունները և մանաւանդ դպրապետին անունը, «որուն նմանը նորէն աշխարհ չէ եկեր»: Այդ հանդիսաւոր պատարագին ներկայ էին նաև մեծահամբաւ **ամիրաները** և անոնց շքախումբերը, որոնք կազմուած էին այն ժամանակի հարուստ վաճառականներով և թաղերու երևելիներով:

Բայց պատարագի սկիզբէն նկուղը բանտարկուած «խենթ»-երը կը սկսին գոռալ իրենց հայհոյութիւնները այնքան միահամուռ թափով, որ անոնց խուլ արձագանգները կը հասնին և կը խանգարեն պատարագուորը և ջերմեռանդ ժողովուրդը: Ի զուր հուժկու **բարապանները**, «որոնց ամէն մէկի պեխէն մէկ-մէկ մարդ կը կախուէր», զայրացած պատարագուորի նշանին վրայ, կ'երթային նկուղ և յիմարապահներուն կը

պատուիրէին «սատկեցնել այդ շուները»:

Արգելափակուածները անխնայ ծեծի տակ կը շարունակէին իրենց անէծքները և հայհոյութիւնները, գոռում-գոչումով, օրհասական ահեղ ցասումով:

Այդ օրը, վերջապէս, վերնատունէն սամաթիացի արհեստաւոր կին մը, որ **Էտէպսիզ** Պայծառ կը կոչէին, որուն համար յետոյ կ'ըսէին, թէ «**այսահար**» էր, զգացուելով նկուղի խենթերուն վիճակէն, նախ սկսեր էր բարձրաձայն լալ և յետոյ հայհոյել պատարագին և պատարագուորին և, ի նշան բողոքի, **մինտէրները** նետել «ջերմեռանդ ժողովուրդ»ին վրայ:

Պատարագէն յետոյ, երբ պատրիարքը, արքեպիսկոպոսը, ամիրաները և անոնց հաւատարիմ երևելիները հաւաքուած էին ժողովի մեծ սրահը և խոժոռ դէմքերով կ'որոճային օրուան պատահածներուն վրայ, մէկը կը դիմէ Գազազ ամիրային և կը մատնանշէ այն անպատեհութիւնը, որ կայ խենթերը պահելու պատրիարքանիստ եկեղեցւոյ մէջ:

– Ժամանակները գէշ են, ամիրա՛ս,– կ'ըսէ ան՝ երեսանկեալ խոնարհելով և անոր ոտքերը համբուրելով,– կ'ըսեն, թէ թաղերու մէջ անհնազանդներու և խենթերու թիւը օրէ օր կը շատնայ, մեր զնտանը նեղ կու գայ, դո՛ւն միայն ճար մը կրնաս ընել:

– Ո՜վ Սուրբ Փրկիչ,– կը գոչեն եկեղեցականները և ներկայ աշխարհականները միաբերան,– ժամանակները գէշ են, մեզ փրկէ՛ մեր **բորոտ** ոչխարներէն:

Այն ատեն Գազազ ամիրա կ'որոշէ յիմարանոց մը շինել իր ծախքով, քաղաքի պարիսպներէն դուրս, Ետի Գուլէ կոչուած ամայի վայրը, և մատուռ մը՝ Սուրբ Փրկիչ անունով:

Երանիկ մօրաքոյրս այդ պատմութիւնները լսելով կը յուզուէր և, մտնելով այդ ժամանակի մարդոց հոգերուն մէջ, կ'ըսէր զայրոյթով.

– Քա տուտո՛ւ, ի՞նչ **շաշխրն** մարդիկ են եղեր, կառավարութեան դուռը դիմէին, տաճկնային, բան մը ընէին, ազատէին:

Մեծ մայրս գլուխը կը շարժէր սրտմտութիւնով, և մօրաքրոջս ամ-

բարիշտ մտածումին հակազդելու համար՝ կը խաչակնքէր և կ՚ըսէր.

– Ո՛ր կողմը որ դառնայիր, ազատում չկար:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ինչ խորհուրդ ունի Երանիկ մորաքույրը վեպի այս հատվածում:
2. Ինչ է պատմում տուտուն եկեղեցի հաճախելու պարտադրանքի մասին:
3. Ինչ պատիժներ էին գործում կրոնական պարտականություններից խուսափողների նկատմամբ:
4. Ինչի՞ց հետո Գազազ ամիրան որոշեց հոգեբուժարան և «Սուրբ Փրկիչ» անունով մատուռ հիմնել:
5. Ենիչերիների վայրագություններից խուսափելու ճանապարհը ո՞րը կարող էր լինել՝ ըստ Երանիկ մորաքրոջ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բնութագրի՛ր Երանիկ մորաքրոջը:
2. Քո բառերով համառոտ վերաշարադրի՛ր ինքնակենսագրական վեպի այս հատվածը:
3. Տրված հատվածից դո՛ւրս գրիր բանալի բառերը՝ հիմնավորելով ընտրությունդ:
4. «Սիլիհտարի պարտէզները» ստեղծագործության այս հատվածը վերափոխի՛ր հարցազրույցի:
5. Քեզ ցանկալի հատվածը փոխադրի՛ր արևելահայերենի:

3

Սակայն կը պատահէր որ կաշառքով կամ ուրիշ միջոցով մը խնդրոյ առարկայ «յանցաւոր»-ը իսլամ պաշտպան մը գտնէր և պատրիարքարանը անզօր ըլլար իր պատժական միջոցները կիրառելու. այն ատեն, մօրս ըսելով, պատրիարքարանը սոսկալի միջոցի մը կը դիմէր՝ բանադրանք կ՚արձակէր: Բոլոր թաղերու եկեղեցիներու բեմերէն քարոզիչները կը նզովէին և կը բանադրէին այդ մարդը և այլևս ան, իր ամբողջ ընտանիքով, կը դառնար բորոտ՝ համայնքին համար: Ինչքա՜ն գոռոզ գլուխներ, քանի մը ամիս խրոխտանալէ յետոյ, չդիմանալով այդ վիճակին, խոնարհեր էին, գացեր ծնրադիր ներում խնդրեր էին, իրենց բոլոր ունեցածը պատրիարքի գահին ստորոտը դրած էին, որպէսզի բանադ-

ռանքը վերանայ և կրկին «կենդանի մարդ դառնան»: Ոմանք ալ, կ'ըսէր մեծ մայրս, «կ'ուրանային իրենց լոյս հաւատքը և իսլամ կը դառնային»:

Այսպիսի ժամանակներու մէջ է, որ տուտուն, տասնըչորս տարեկանին, առաջին անգամ պառաւ ազգականներու հետ տունէն դուրս կ'ելլէ եկեղեցի երթալու համար: Այն ատեն Կ. Պոլիսի քրիստոնեայ կիները չէին կրեր եւրոպական տարազ, թուրք կիներու նման անոնք կը հագնէին **ֆերաճէ** կամ **էնթարի** և քողարկուած էին **եաշմագով** կամ պարզ քողով, ըստ իրենց պատկանած դասակարգին:

Եկեղեցիէն վերադարձին Լուսիկ և իր ազգականները կը հանդիպին ենիչէրիներու: Անոնք անմիջապէս կը յարձակին մատղաշ աղջկան վրայ, ֆերաճէն կը պատռեն այն առարկութեամբ, որ կանաչ գոյնով վարդեր ունի. կանաչ գոյնը իսլամներու համար սուրբ գոյն էր և **կեաուր**ները իրաւունք չունէին կրելու: Բայց ինչ-որ աւելի ծանրակշիռ էր, այն էր, որ Լուսիկի եաշմագը կը վերցնեն երեսէն... Պառաւները կը պոռան, ժամկոչ, լուսարար վրայ կը հասնին և օգտուելով ենիչէրիներու միջև յառաջ եկած վէճէ մը՝ Լուսիկը կը փախցնեն տուն:

Բայց **հեգ** աղջիկը այլևս անպատուած էր: Ո՞վ կ'ամուսնանար աղջկան մը հետ, որուն երեսը տեսեր էին «հեթանոսներ»: Ատկէ զատ՝ այլևս վտանգաւոր էր այդ «նշմարուած» աղջիկը պահել տան մէջ: Մէկ օրէն միւսը ենիչէրիները կրնային զայն փախցնել: Լուսիկի ծնողքը, իրենց տունը և ընտանիքը փրկելու համար այդ հաւանական անպատութենէն, կը դիմեն վարձկան միջնորդ կնոջ մը և կը պատուիրեն, որ փեսացու մը գտնէ Լուսիկին համար:

Միջնորդ կինը եկեր էր Սկիւտար, ուր ենիչէրիները նուազ ազդեցիկ էին, ուր թաղերու **խապատայիները** որոշ չափով կը զսպէին ենիչէրիներու սանձարձակութիւնները՝ երբեմն դաշինք կնքելով, երբեմն, կուրծք-կուրծքի, դանակ-դանակի կռուելով. իրենց ետևն էին Անատոլուն և շրջակայ մօտիկ և հեռաւոր անտառները, ուր կրնային ապաստանիլ հարկ եղած ատեն: Եւ փնտռեր էին երիտասարդ մը, որուն ձեռքէն կինը խլել դիւրին չէր:

Մեծ հայրս՝ Յակոբ, սերած էր իրենց անվեհերութեամբ և ճարպիկութեամբ ծանօթ կարաւանի առաջնորդներէ: Այդ հին օրերուն Սկիւտար **թրանզիթ**ի քաղաք մըն էր և նշանաւոր էր իր քարաւանսարայներով և արագոտն ձիերու կայաններով: Յակոբի հայրը՝ Շիրին և հօրեղբայրը՝ Ֆարհատ, կարաւաններ կ'առաջնորդէին մինչև Պաղտատ, Պասրա, Պարսկաստան, «մինչև Հինդիստան, Չինումաչին», կ'ըսէր Երանիկ մօրաքոյրս: Միևնոյն ատեն Շիրին աշուղ էր և Ֆարհատ՝ **մետտահ**:

Տուտու շատ դժբախտ եղած է այդ ամուսնութեամբ: Ոչ միայն ան յանկարծակի ինկած է իր սովորած կեանքէն բոլորովին տարբեր միջավայրի մէջ, այլև Շիրին օղլու Յակոբ եղած է տարօրինակ և անկարգ մարդ: Ան, իր կարգին, աշուղ էր և կառապան: Այլևս չկային կարաւանաներ: Գինետունի հերոս, կռուազան, արկածախնդիր, անիկա երբեմն անսալով անդիմադրելի մղումի մը, կը թողուր կառք, տուն, կին, երեխայ, և ձի հեծնելով՝ կը մեկնէր սրարշաւ Փոստայի ճամբէն: Իր հետքը կը կորսուէր Չամլըճայի ետևը տարածուող հովիտին մէջ: Ո՞ւր կ'երթար, ի՞նչ կ'ընէր ոչ ոք կարողացած է որոշ բան մը ըսել իմ հետաքրքրութեանս: Հաւանաբար կ'երթար Անատոլուի մերձաւոր և հեռաւոր քաղաքները և տօներու կը մասնակցէր՝ իր աշուղի հանգամանքով: Թերևս պարզապէս որոշ վայր հասնելէ ետքը ձին պահ կու տար տեղ մը և իբր **տերվիշ՝** կը թափառէր անծանօթ ճամբաներու վրայ, անորոշ նպատակով... Ամէն պարագայի, իմ պատանեկան տարիներուս, Սկիւտարի ծերերը կ'ըսէին, թէ Շիրին օղլու Յակոբ աննման աշուղ էր, մանաւանդ երբ անպատրաստ կ'երգէր կամ կ'արտասանէր: Թուրքերը այնքան կը գնահատէին իր աշուղական արուեստը, որ կ'աշակերտէին իրեն: Ան, ըստ վկայութեան, երբեմն գրի կ'առնէր իր երգածը՝ հայատառ թրքերէն: Բայց այդ գրութիւններէն ոչ մէկ բան կրցած եմ գտնել: Միայն լսած եմ մեծ հօրս երեք աշուղական բանաստեղծութիւնները ուրիշ աշուղի մը՝ Հագգըի (ազգով հայ) այրի կնոջ բերանէն, որոնք ինձ թուած էին զմայլելի: Բայց այն ատեն հազիւ տասներկու տարեկան էի:

Նոյնպէս չեմ կրցած գիտնալ, թէ Շիրին օղլու Յակոբ ի՞նչ նուագարանի վրայ կը նուագէր: Մեծ մայրս իր ամուսնոյն մահէն յետոյ ոտքերուն տակ ջախջախեր էր այդ գործիքը, այրեր էր բոլոր թուղթերը և կը մերժէր որևէ տեղեկութիւն տալ իր ամուսինին աշուղի հանգամանքին մասին, որ իր տառապանքներուն բուն պատճառը կը համարէր:

Շիրին օղլու Յակոբ կը վերադառնար իր խորհրդաւոր ճամբորդութենէն յոգնած, սպառած: Անիկա անշշուկ կ'ենթարկուէր կնոջ խնամքներուն, կը կազդուրուէր, կը սկսէր գլուխ բարձրացնել և ահա օր մը նալ կը նետուէր ձիուն նիւսին և ճամբայ կ'ելլէր:

Իր կինը այդ անհետացումներու միջոցին կը մնար անտէր և երբեմն կը մատնուէր ծայրայեղ չքաւորութեան: Միշտ յղի՝ ան կ'անիծէր իր ամուսինը, կ'անիծէր իր բախտը և կ'ապաստանէր եկեղեցի:

Այս պայմաններուն մէջ ան ունեցած էր տասներեք զաւակ, որոնցմէ ինը կ'ապրէին: Մայրս **վերջընթեր**ն էր այդ զաւակներուն:

Ես ունէի ուրեմն հինգ մօրեղբայր և երեք մօրաքոյր: Իմ ծնած ատենս

միայն Նահապետ մօրեղբայրս ամուսնացած էր և իր ընտանիքով կ՚ապրէր Եսի Մահալլէ: Անիկա և Խաչիկ մօրեղբայրս, որ կը բնակէր Բերա, երկաթագործ էին: Միւս մօրեղբայրներս **եազմաճի** բանուոր էին, ինչպէս մօրաքոյրերս՝ բանուորուհի, և կ՚ապրէին մեր տան մէջ:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է բանադրանքը: Ի՞նչ բանադրանք էր գործում պատրիարքարանի պատիժներից խուսափելու դեպքում:
2. Ի՞նչ էին կրում քրիստոնյա կանայք Կ. Պոլսում:
3. Ի՞նչ պայմաններում ամուսնացրին Լուսիկին:
4. Լուսիկը երջանի՞կ էր: Ինչո՞ւ:

ԱՌԱՁԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ներկայացրո՛ւ Հակոբին քո բառերով:
2. Արտահայտի՛ր վերաբերմունքդ այս հատվածի վերաբերյալ:
3. Դո՛ւրս գրիր հատվածի քեզ դուր եկած նախադասությունները և մեկնաբանի՛ր:
4. Հատվածից դո՛ւրս գրիր այն բառերն ու արտահայտությունները, որ լավագույնս նկարագրում են հերոսներին:
5. Ընդգծի՛ր քեզ անծանոթ բառերը և դրանց արևելահայ տարբերակներով նախադասությունն՛եր կազմիր:
6. Վերլուծի՛ր կերպարները՝ ելնելով նրանց արարքներից:
7. Արտահայտի՛ր դիրքորոշումդ ժամանակի իրադարձությունների վերաբերյալ:

4

* * *

Իմ մանկութեան առաջին օրերէն իմ աչքերս հանգչած են հօրս անդորր և պայծառ դէմքին վրայ: Անոր ժպտուն և կապոյտ աչքերը, թանձր շրթները, կանոնաւոր դիմագծերը՝ քիչ մը ցցուած այտոսկրներով, բարձր հասակը, **պատրիկեան** ձեռքերը կը ներշնչէին բարութեան ու վայելչութեան զգացում: Անիկա ունէր առողջ դատողութիւն և օժտուած էր հաւասարակշիռ իմացականութեամբ: Իր կեանքին մէջ յառաջ եկած յանկարծական փոփոխութիւնները կարող էին ընկճել զինքը և դառնացնել, բայց ան իր բարոյական ուժերով յաղթեր էր այդ բոլորին

և լաւատեսութիւնով կը դիմաւորէր ամէն կացութիւն: Իր ծերութեան օրերուն ոևէ մէկը, որ տեսնէր անոր անխորշում դէմքը, ճերմակ, բայց առատ մազերը լայն ճակատին վրայ, և լսէր անոր հանդարտ և կշռաւոր խօսքը, կ'ունենար այն տպաւորութիւնը, թէ ան մարդ մըն էր որ հասած էր իր բոլոր նպատակներուն, և որուն կեանքը անցեր էր անարգել, հեզասահ գետի մը նման:

Իր հայրը՝ Յովհաննէս, եղեր էր դատաւոր **Ռումէլիի** մէջ: Յիսունը-հինգ տարեկանին կուրցեր էր և քսան տարի ապրեր էր կոյր վիճակի մէջ՝ շարունակելով իր աշխատանքը: Հօրենական մեծ հօրս ծագումը շրջապատուած է խորհրդաւորութեամբ: Օտար արիւն մտեր էր ընտանիքին մէջ, հաւանաբար՝ **սլաւական**: Այդ մասին կ'ըլլային ակնարկութիւններ հօրս ընտանիքի ծերերուն կողմէ, բայց հայրս չէր սիրեր խօսիլ այդ նիւթին վրայ: Միայն կը հաստատէր, երբ առիթ ներկայանար, որ իրաւամբ «օտար արիւն մտած է մեր ընտանիքին մէջ»:

Հայրս Սկիւտարի ճեմարանը աւարտելէ ետք գացած է Թիֆլիս, ճամբորդած է Տաղստանի խնդիր ազգականներու, որոնց հետ ժառանգական հարցեր ունէր լուծելիք: Ան գիտէր ռուսերէն և քիչ մըն ալ վրացերէն և այդ լեզուներով նամակագրութիւն ունէր: Հօրս ստացած նամակներէն ոմանք դեռ կը մնան իր թողած թուղթերու ծրարին մէջ:



Իր ծնողքը ջերմօրէն ցանկացեր են, որ իրենց տղան բարձրագոյն կրթութիւն ստանար Ռուսաստանի մէջ, «ուր պաշտպաններ կ'ունենար»: Հայրս կը ձգտէր հետևիլ բժշկութեան և նախապատրաստուած էր այդ ուղղութեամբ: Բայց ընտանեկան պատճառներով մայրս զինքը բերել տուած է Կովկասէն, և այլևս հայրս չէ կրցած հեռանալ Կ. Պոլսէն:

Հօրենական մեծ մայրս՝ Երանուհի, սերած է ակնցի ընտանիքէ մը, որ կապեր ունեցած է արքունիքին հետ: Հայրը պետական հայթայթիչ էր: Հօրս մօրեղբօր աղջիկները՝ Մելիքեան քոյրերը, սուլթան [Ապտուլ] Ազիզի օրով եղած են **վալիտէ սուլթանին** պատուոյ տիկիններէն: Երկու քոյրերը երբեմն կու գային Խասգիւղ, իրենց ծնողքին այցելութեան՝ արքունական կառքով և սևամորթ ներքինիի մը ընկերակցութեամբ: Այն ատեն հայ կիները արդէն կը կրէին եւրոպական տարազ, բայց Մելի-

քեան քոյրերը պալատի **էթիքեթին** համեմատ կը հագնէին եաշմագ-ֆերաճէ, բայց անոնք պահած էին իրենց ազգութիւնը և կրօնը: Երբեմն Ծնունդի և Զատկի տօներուն, արտօնութիւն կը ստանային մինչև մէկ շաբաթ մնալու իրենց ծնողքին հետ: Այդ միջոցին ազատ էին Եւրոպա-կան հագուստ կրելու և երեսնին բաց դուրս գալու: Որոշուած օրը ներ-քինին կու գար կառքով և զիրենք կը տանէր պալատ:

Մեծ մայրս՝ Երանուհի, մեռած է ութսունը-չորս տարեկանին՝ թողելով վիճելի ժառանգութիւն մը: Հայրս չորս քոյր և մէկ եղբայր ունէր և, հա-կառակ որ կրտսերն էր, իր վրայ առած էր ամբողջ ընտանիքին գործե-րու կարգադրութիւնը: Իմ հօրաքոյրերէս ես ճանչցած եմ միայն Աննիկ հօրաքոյրս, որ բռնաւոր կին էր, որ իր չափահաս զաւակները կը պահէր իր խիստ հրամաններուն տակ, որ անոնցմէ ոչ մէկուն թոյլ չէր տուած ամուսնանալ, որպէսզի օտար մարդ չմտնէ տունէն ներս, որ տունին մէջ հաստատած էր կարգ ու կանոնի կատարեալ **փրոթոքոլ** և ունէր մաքրութեան հիւանդութիւն: Կ՚ըսէին, որ նոյնիսկ վառարանի մէջ վա-ռելիք փայտերը օճառ ջուրով լուալ կու տար:

Հօրս ազգականները լուրջ և ծանրախոհ մարդիկ էին: Տղամարդիկ ստացած էին երկրորդական կրթութիւն, մեծ մասամբ Կալաթա Սերա-յի լիսէին մէջ: Լաւ գիտէին թրքերէն և ֆրանսերէն և ոմանք դարձեր էին պետական պաշտօնեայ: Այր, թէ կին ուժեղ խառնուածքի տէր էին: Իրենց բնաւորութեան լաւ և վատ գիծերը շեշտուած էին: Հօրեղբայրս բացառութիւն կը կազմէր իր մեղմ և բարեհամբոյր բնաւորութեամբ, որուն համար հազիւ զսպուած արհամարհանքով կ՚ըսէին, թէ «անվ-նաս» մարդ է և կարծիք չունի: Այդ ընտանիքի անդամները ընտանեկան կամ հասարակական դէպքի մը առթիւ պատուոյ խնդիր կը համարէին իրենց դիրքը որոշել և մեծաբարբառ արտայայտել իրենց կարծիքը: Յաճախ յառաջ կու գային բախումներ, նոյնիսկ անհաշտ ատելութիւն-ներ մէկը մէկու հանդէպ: Այրերը ընդհանրապէս **լիպերալ** էին և կանգ-նած էին ֆրանսական յեղափոխութեան սկզբունքներուն վրայ: Այդ էր իրենց բարոյական հէնքը: Կիները, ընդհակառակն, պահպանողական և աւանդապահ էին ու զինուած էին յարձակողական առաքինութիւննե-րով, «որոնցմով, կ՚ըսէր հայրս, ոչ միայն ուրիշները անհանգիստ կ՚ը-նեն, այլ[և] իրենք ալ անհանգիստ են»:

Այր, թէ կին հոգածու էին վայելչութեան, ամէն ինչ կարգով կանո-նով ընելու, բացի հօրմէս, որ կը սիրէր գծուած ճամբաներէն դուրս գալ, անձնատուր ըլլալ իր **ֆանթազիային**: Անոնք բարձրահասակ էին, նի-հար, շատ ճերմակ մորթով, խարտեաշ մազերով, խաժակն, բայց դէպի

իրենց ծերութիւնը կը ստանային ընտանեկան յատուկ դիմագիծը, թաթարական դիմակը:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ո՞վ էր Զ. Եսայանի հայրը: Արտահայտի՛ր կարծիքդ նրա վերաբերյալ:
2. Ի՞նչ է հիշատակում գրողը Աննիկ հորաքրոջ մասին:
3. Ինչպիսի՞ն էին գրողի հոր ազգականները: Նկարագրի՛ր նրանց:
4. Ի՞նչ նմանություն կա քո ընտանիքի հետ: Ինչո՞վ են տարբեր:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բնութագրի՛ր Զ. Եսայանի հորը՝ ըստ նրա հուշերի:
2. Հատվածի ընթերցումից հետո կատարի՛ր բառային և բառարանային աշխատանքներ, կազմի՛ր հոմանիշների շարքեր, թեմատիկ բառախմբեր: (Խմբային աշխատանք)
3. Համառոտ վերարտադրի՛ր այս հատվածը՝ օգտագործելով հատվածի բանալի բառերն ու արտահայտությունները:
4. Գտի՛ր հատվածի գեղարվեստական արտահայտչականության միջոցները և բացատրի՛ր դրանց գործառույթը: (Խմբային աշխատանք)

5

* * *

Հայրս՝ դեռ ամուրի, կը բնակէր Վլանկա՝ Աննիկ հօրաքրոջս տունը, որ վաղուց այրի էր: Ամոր մէկ աղջկան հիւանդութիւնը պատճառ եղեր էր, որ բժիշկի խորհրդով փոխադրուին Սկիւտար: Քիչ յետոյ Աննիկ հօրաքոյրս գժտուեր էր հօրս հետ, որովհետև հայրս խորհուրդ տուեր էր քրոջս թոյլ տալ աղջկանը ամուսնանալ իր սիրած տղուն հետ: Աննիկ հօրաքոյրս համարեր էր, որ սա հրաւէր է ընտանիքը անպատուելու: Այդպէս էին բարքերը մայրաքաղաք Կ. Պոլսոյ մէջ: Երիտասարդներ, որ թերևս իրարու հետ խօսելու առիթ իսկ չէին ունեցեր, կը բաւէր, որ ակնարկներ փոխանակեր էին և սիրոյ փոխադարձ զգացումէ մղուած՝ ձգտեր էին ամուսնանալ, կը համարուէին արատաւորուած: Դեռ մինչև իմ պատանեկան տարիներս լսեր եմ, որ որոշ մեղադրանքով խօսին ընտանիքի մը մասին՝ ըսելով, թէ «անոնք սիրահարուելով ամուսնացած են»:

Հայրս թողեր էր Անսիկ հօրաքրոջս տունը և փոխադրուեր էր իր մօրենական ժառանգութիւնը եղող տունը, որ նոյնպէս Սկիւտար կը գտնուէր, և ուր կը բնակէին իր երկու քոյրերը:

Եւ իրիկուն մը հայրս, այն ատեն քառասուն տարեկան, բարեկամի տան մը մէջ հանդիպեր էր մօրս, տասնութամեայ դեռատի աղջիկ, և ուզեր էր ամուսնանալ հետը:

Հօրաքոյրերս դիմադրեր էին՝ մերժելով խնամութիւն հաստատել «**Արապաճի** Յակոբ»-ի ընտանիքին հետ: Բայց հայրս հաստատ մնացեր էր իր դիտաւորութեան մէջ: Ամուսնութենէն ութ ամիս յետոյ ստիպուեր էր կնոջ հետ գալ զոքանչին տունը, «մինչև երեխայի ծնունդը» և այլևս մնացեր էր հոն:

Իմ ծնած ժամանակս հայրս իր ունեցածը կորսնցուցեր էր յանկարծակի, **քոնսոլիտի** մէջ: Այդ կարգի կործանումներ յաճախ կը պատահէին Կ. Պոլսոյ մէջ: Բայց հայրս մեծ պաղարիւնութիւնով դիմաւորեր էր այդ անակնկալ կացութիւնը: Իր քենիները **թեզկեահի** վրայ եազմա կը բանէին: Ան հետաքրքրուեր էր այդ գործով և անմիջապէս ձեռնարկեր էր արհեստանոց մը բանալու, ուր եազմայի սև գծագրութիւնը կը կոխէին: Ինքն ալ սորվեր էր արհեստը և անայլայլ հոգիով անցեր էր մէկ վիճակէն միւսը: Ամբողջ օրը կ'աշխատէր և երեկոները անձնատուր կ'ըլլար ընթերցանութեան: Հետամուտ էր նաև գտնելու նոր գոյներ եազմայի գործի վերաբերեալ, և այդ ուղղութեամբ փորձեր կը կատարէր աշխատանոցի մը մէջ, որ կառուցեր էր մեր պարտէզին մէկ անկիւնը:

Հայրս շռայլ էր և կը սիրէր առատութեամբ ծախսել: Բայց իր բնաւորութեան այդ մղումին գոհացում տալու համար չէին բաւեր ո՛չ իր իբր արհեստաւոր վաստկածը, ո՛չ ալ ժառանգութեան վերջին բեկորները: Հետզհետէ հայրս սորվեցաւ պարտքեր ընել վաշխառուական տոկոսներով: Մեր ընտանեկան կեանքը այսպիսով ունէր յանկարծական վերելքներ և անկումներ: Երբեմն անհաշիւ ճոխ, երբեմն չքաւորութեան հասնող նեղութիւն: Պարտքերու պայմանաժամերը ոչ թէ կը հասնէին, այլ կը պայթէին ռումբերու պէս, որովհետև մինչև ժամկէտը հայրս կը մնար անայլայլ և կը վարուէր, ինչպէս եթէ անյատակ գանձ մը ունենար իր տրամադրութեան տակ: Եւ եթէ պատահէր, որ սիրտը նեղուէր և ընթերցանութիւնը բաւական չըլլար իր հոգերը ցրուելու, կը մտնէր պարտէզ և կը զբաղէր ծաղկամշակութեամբ:

Ահա այդպիսի այլազան տարրերէ կազմուած և տնտեսական անհաւասար վիճակներու ենթարկուած ընտանիքի մը մէջ ծնած և ապրած եմ

իմ մանկութեան և պատանեկութեան տարիներս:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Որտե՞ղ է Զ. Եսայանի հայրը ծանոթացել նրա մոր հետ:
2. Ինչպիսի՞ն էր նրանց ընտանեկան կյանքը:
3. Ո՞վ է վեպի (հատվածի) քո սիրելի կերպարը: Ինչո՞ւ:
4. Ո՞րն է «Սիլիհտարի պարտէզները» ինքնակենսագրական վեպի (հատվածի) գեղարվեստական արժեքը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մեկնաբանի՛ր «Սիլիհտարի պարտէզները» ինքնակենսագրական վեպի (հատվածի) բովանդակությունը՝ անդրադառնալով նկարագրված իրադարձությունների ժամանակաշրջանին:
2. Թվարկի՛ր «Սիլիհտարի պարտէզները» ինքնակենսագրական վեպի (հատվածի) կերպարները:
3. Ներկայացրո՛ւ կերպարներին՝ պատմվածքից դուրս բերելով նրանց բնութագրող տողերը:
4. Նկարագրի՛ր կերպարներին քո բառերով.

Կերպար	Արտաքին նկարագրություն	Երեք վարքագիծ	Բացատրի՛ր նրա արարքների դրդապատճառները
1.			

5. Վեպում նկարագրվող դրվագները կապի՛ր իրար հետ և սահմանի՛ր գլխավոր թեման:
6. Հարցեր առաջադրի՛ր և դատի՛ր ստեղծագործության մեջ զարգացող իրադարձությունների մասին:
7. Մի հատված փոխադրի՛ր արևելահայերեն:

կը յօժարէր – կամամաձայներ
չոճուխ – երեխա (թուրքերեն)
սէգ – ձիգ, վսեմ
մանչ – տղա
ենիչէրի – սուլթանական զորքի՝ քրիստոնյաներից բռնախլված ու իսլամացված զինվոր (թուրքերեն)
տէովլէթ տիւշկինի – պետությունից շնորհազրկված (թուրքերեն)
արբունքի հասած – չափահաս
հելալլամիշ ըլլալ – իրար ողջերթ մաղթել (թուրքերեն-հայերեն)
լինքս – հղում (լինքս բառը ստուգելուց հետո նոր միայն հոմանիշը գտնել)
վիւգելա – փոխանորդ, լիազոր (արաբերեն, օսմանյան թուրքերեն)
զալիմ – դաժան, բիրտ (արաբերեն, թուրքերեն)
ժամ – եկեղեցի
թոպ- գործիք (մահակ, գաւազան), որով թոպում են: 2. Թակ, որով բուրդ կամ բամբակ գզողը խփում է աղեղի լարին. թոխմախ:
եասախճի – լիազոր (թուրքերեն)
եազմա - գլխաշոր, գլխանոց, գլխակապ, յայլուղ, այլուղ, լաչակ, մանդիլ, աղլուխ:
ֆալախա – պատժի տեսակ Արևելքում. փայտե ձող, որի վրա կապում էին մարդու մերկացրած ոտքերը և ճիպոտով հարվածում դրանց (արաբերեն, օսմանյան թուրքերեն):
լալէ – երկաթե օղակ, ուսուցիչ, խնամատար, դաստիարակ:
ամիրա – ուշ միջնադարում Կ. Պոլսում հայ երևելիներին տրված ժողովրդական տիտղոս (արաբերեն, օսմանյան թուրքերեն)
բարապան – կաթողիկոսների և պատրիարքների ուղեկիցներ, որոնք նրանց շքախմբի առջևից քայլելով, հաստ գավազանով խփում էին գետնին՝ շուրջի մարդկանց հայտնելու նրանց գալստյան մասին: Նրանք նաև պատրիարքի կարգադրությունների կատարողներ էին: Ներկայումս պահպանվել է միայն Երուսաղեմի հայոց պատրիաքությունում:
էտէպսիզ – անկիրթ (թուրքերեն)
այսահար – դիվահար, լուսնոտ
մինտէր – գետնին նստելու բարձ (թուրքերեն)
բորոտ – բորոտության հիվանդությամբ տառապող
շաշխըն – շվարած (թուրքերեն)
ֆերաճէ – փարաջա (թուրքերեն)
էնթարի – ամբողջ հասակով, մինչև ոտքերի ներբանը հասնող զգեստ (թուրքերեն)
եաշմագ – կանանց քիթը, բերանն ու կզակը ծածկող լաթ՝ իսլամական երկրներում (թուրքերեն)
կեաւուր – անհավատ (արաբերեն, թուրքերեն)
հեգ – թշվառ, խեղճ
խապատայի – թաղային հեղինակություն (արաբերեն, թուրքերեն)
թրանզիթ – տարանցիկ (եվրոպական լեզուներ)
մետտահ – գովասանող երգիչ կամ բանաստեղծ (արաբերեն, օսմանյան թուրքերեն)
օղլու – որդի (թուրքերեն)
տերվիշ – դերվիշ, թափառական կրոնավոր (արաբերեն, պարսկերեն, օսմանյան թուրքերեն)
վերջընթեր – նախավերջին
եազմաճի – նուրբ, զարդանախշ գործվածքով կանացի գլխանոց պատրաստող՝ իսլամական երկրներում (թուրքերեն)
պատրիկեան – ազնվական
վալիտէ սուլթան – Օսմանյան կայսրության մեջ՝ սուլթանի մոր պաշտոնական կոչումը

(արաբերեն, օսմանյան թուրքերեն)
էթիքեթ – վարվելաձև (եվրոպական լեզուներ)
փրոթոքոլ – արձանագրություն (եվրոպական լեզուներ)
լիպերալ – ազատական (եվրոպական լեզուներ)
ֆանթազիա – երևակայություն (եվրոպական լեզուներ)
արապաճի – ձիապան (թուրքերեն)
քոնսոլիտ – կարճաժամկետ պարտք (եվրոպական լեզուներ)
թեզկեաh – դազգահ (պարսկերեն, օսմանյան թուրքերեն)

- Որտեղ է գտնվում «Սիլիհտարի պարտէզները», և ինչ է նշանակում «Սիլիհտար»:

- «Սիլիհտարի պարտէզները» Պոլսի Սկյուտար հայաշատ թաղամասի մի հատվածն է: Սկզբնաձևը «սիլահթար է», որ թուրքերենից թարգմանաբար նշանակում է «զինագործ»:

Ամփոփում

Զապել Եսայանն այն եզակի հայ գրողներից է, որոնք, ապրելով Արևմուտքում, ԽՍՀՄ ձևավորման առաջին տարիներին անկեղծորեն հավատացին սոցիալական հավասարության, արդարության մասին պետական քարոզչությանն ու կամովին վերադարձան հայրենիք՝ իրենց գրական-ստեղծագործական աշխատանքը նրա շենացմանն ի սպաս դնելու: Թերևս նաև դա է պատճառը, որ «Սիլիհտարի պարտէզները» ինքնակենսագրական վեպում նկատելի է հեղինակի համակրանքը հասարակ խավի հանդեպ և քննադատական վերաբերմունքը նրան հարստահարող դասի նկատմամբ: Վեպում ներկայացվում է Պոլսի կյանքը տասնիններորդ դարի վերջին կեսին:

Զ. Եսայանի այս հուշագրությունը նաև պատմագիտական արժեք ունի, քանի որ վերաբերում է դարակազմիկ իրադարձությունների մի շրջափուլի, երբ թուրքական լծի տակ ապրող քրիստոնյա ազգերը, այս դեպքում՝ հայությունը, հույսով սպասում էին, որ ռուսական բանակը ազատագրելու է իրենց և սկսվելու են նոր՝ արդարության, եղբայրության երանելի ժամանակներ:

Ուշագրավ է, որ «Սիլիհտարի պարտէզները» ինքնակենսագրական վեպը ներկայացնում է Զ. Եսայանի՝ միայն Պոլսում ապրած տարիները: Չկա ոչ մի բառ, թե ինչպիսին էր կյանքը Եվրոպայում, մասնավորապես՝ Ֆրանսիայում, ուր նա ապրել էր մինչ ԽՍՀՄ տեղափոխվելը: Գիրքը գրվել է հենց Խորհրդային Հայաստանում, ու Եվրոպայում ապրած հեղինակը հավանաբար արդեն հասցրել էր զգալ, որ հավասարության և արդարության իր պատկերացումներն այստեղ այնքան էլ չեն համապատասխանում իրականությանը, ուստիև լռում է իր կյանքի վերոհիշյալ շրջանի մասին՝ թերևս ակամա տենչալով թեկուզ Պոլսի կյանքը՝ դժվարին, բարդ, բայց մարդկային և ընտանեկան ազնիվ հարաբերություններով:

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ (1903-1969)

Պայծառ է մեր երկրի գալիքը,
Օ, բերրի հերկերի գուսան:
Թող հավետ ապրի այս ծաղիկը
Մեր դաշտերում բուսած:

Եղիշե Չարենց

Գուրգեն Մահարին անցել է երկար ու բարդ ստեղծագործական ուղի, որի ուղենշային հիմքը անհատական-անձնական վերապրումն է եղել: Դրան զուգահեռ՝ նա իր գրական էջերով վերակենդանացնում է մի ամբողջ ժամանակաշրջանի անանձնական պատմությունը, որ լի է ինքնակեղեքմամբ: Դա է նրա գրական ինքնության ընդգծված հատկանիշը: Այդպիսին են և նրա բանաստեղծական արվեստը, և արձակը: Ոչ մի հալածանք, աքսոր չեն կարողացել նսեմացնել նրա գրչի ու մտքի վարպետությունը, որից բխած ստեղծագործությունները հայ գրականության մնայուն և կարևոր կոթողներ են:

- Կենսագրական տեղեկություններ
- Ժամանակակիցները՝ Գուրգեն Մահարու մասին
- «Պատանեկություն»
- Լրացուցիչ նյութեր

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գուրգեն Մահարին (Գուրգեն Գրիգորի Աճեմյան) ծնվել է 1903 թ. օգոստոսի 1-ին Վանում ուսուցչի ընտանիքում: Մահարու տոհմական ազգանունը Մուրադխանյան է: Գորգավաճառությամբ զբաղվող նրա նախնիները սերում են Պարսկաստանից: Վանում նրանք կնքվել են «Աճեմյան» ազգանունով՝ կազմված «աջեմ» կամ «աջամ» բառից, որ արաբերեն նշանակում է «օտարածին»: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի «Նորաշեն» և «Երեմյան» վարժարաններում: Մի կերպ փրկվելով 1915 թ. եղեռնից՝ հայտնվում է Դիլիջանի որբանոցում, ապա տեղափոխվում Երևանի որբանոց: Այստեղ կատարում է գրական փորձեր: Ճակատագրական է լինում հանդիպումը Եղիշե Չարենցի հետ, որը խրախուսում ու քաջալերում է նրա գրական փորձերը: Առաջին հանդիպումից մինչև իր կյանքի վերջը Գ. Մահարին հոգում կրեց գրական մեծ ուսուցչի՝ Ե. Չարենցի հմայքը և «որբանոցային բանաստեղծների» նշանավոր ներկայացուցիչն էր: «Միգահաս» ժողովածուն (1933 թ.), «Չարենց-Նամե»-ն (1968 թ.) Գ. Մահարու բանաստեղծական տաղանդի հավաստումն են:

Ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը: 1930 թ. տպագրվել է Գ. Մահարու «Մանկություն և պատանեկություն» վիպակը, որի շարունակությունը լույս է տեսել 1956 թ. («Երիտասարդության սեմին»):

Ստալինյան բռնապետության մղձավանջային օրերին անհիմն ու ծանր մեղադրանքներ են ներկայացնում նաև Գ. Մահարուն. իբր նա 1932-1933 թթ. մասնակցել է հակահեղափոխական, նացիոնալիստական, տրոցկիստական, ահաբեկչական խմբի գործունեությանը, պայքարել կուսակցության և խորհրդային իշխանության դեմ, ցանկացել Հայաստանն անջատել ԽՍՀՄ-ից: Եվ այսպես՝ 1936 թ. օգոստոսի 9-ից մինչև 1954 թ. հուլիսի 21-ը Գ. Մահարին իր կյանքն անցկացնում է սիբիրյան աքսորավայրերում: Այդ վայրերից ծնունդ առան «Ծաղկած փշալարեր» վիպակը (1988 թ.) և մի շարք պատմվածքներ:

Արդարացվել է 1954 թ. հուլիսի 21-ին: Վերջին աքսորից հետո նա ապրեց բուռն ստեղծագործական կյանքով: Սուր բախումների տեղիք տվեց «Այրվող այգեստաններ» վեպը (1966 թ.):

Գուրգեն Մահարիի տան հյուրասենյակ-թանգարանը Պալանգայում

Գուրգեն Մահարին մահացել է 1969 թ. հունիսի 17-ին, Պալանգայում (Լիտվա), թաղված է Երևանում:

Գրողի մահից հետո նրա լիտվուհի կինը տան հյուրասենյակը դարձրել է թանգարան, որտեղ ներկայացված են Գ. Մահարու և նրա հարազատների բազմաթիվ լուսանկարներ, գրողի մասին հոդվածներ, գրքեր:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ՝ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐՈՒ ՄԱՍԻՆ

Եվ վերջապես մի այլ բանաստեղծ, որից առավել քանքարավոր ոչ ոք չի նկարագրել բարդիները, լուսինը, ջրերի երգեցիկ զրույցը...

Ակսել Բակունց

...Մահարին գրեց մեր պերական լեզվի ձկունությամբ, բայց, ըստ էության, իր արյունին մեջ ուներ ժառանգություն մը արևմտահայ լեզվին, որուն երանգները մտել էին Իսահակյանի և Վահրամ Փափազյանի գործերուն մեջ: Մահարու արձակում կա թառային երանգների անշոշափելի ճշգրտություն մը: Նա գրող մըն է, որ, ես կհավատամ, կապրի այնքան, որքան ատեն մեսրոպատառ գրերուն վրա ճակատ մը կհակվի, որքան ատեն հայ ոգիին գեղեցկությունները փնտրող հոգիներ կգտնվեն...

Վահան Թեքեյան

Չնայած վայրիվերումներին՝ համառ մի բան կա Գուրգեն Մահարու կյանքի ու խառնվածքի մեջ: Ինչքան էլ մակերեսին այսուայնկողմ փարուբերվեին ալիքներ, այնտեղ՝ խորքում, Մահարին հավատարիմ մնաց իրեն, իր շեշտված անհատականությանը, իր բանաստեղծական տարերքին...

Միլվա Կապուտիկյան

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Որտեղ և ե՞րբ է ծնվել Գ. Մահարին:
2. Ինչո՞ւ է ստիպված եղել լքել հայրենի տունը:
3. Ինչպե՞ս են անդրադարձել նրա կյանքի առանձին դրվագներ նրա ստեղծագործության վրա:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բնութագրի՛ր Գ. Մահարու կյանքն ու ստեղծագործությունը՝ նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում:
2. Արտահայտի՛ր սեփական կարծիքդ գրողի կյանքի մասին և նրա կյանքի պատմությունը կապի՛ր իրականության և ժամանակաշրջանի անցուդարձի հետ:
3. Ժամանակակիցների հուշերից ամբողջացրո՛ւ Գ. Մահարու կերպարը:

ԳՐԱԿԱՆ ԺԱՆՐ

Վեպ (ինքնակենսագրական վեպ)

Ի՞նչ է վեպը

20-րդ դ. 20-ականների վերջին և հաջորդ տասնամյակին խորհրդահայ գեղարվեստական արձակի ամենաբազմազան դրսևորումների մեջ հատկապես ընդգծվեց ինքնակենսագրական վեպ-վիպակի ժանրը՝ շոշափելի ազդակներ ունենալով մի կողմից՝ ժամանակաշրջանի ազգային գոյի դրամատիկ, ավելին՝ ողբերգական ճակատագիրը, մյուս կողմից՝ սարսափների միջով անցած գրողների ինքնարտահայտման անձնական պահանջներն ու վերաիմաստավորումները:

Գեղարվեստական ինքնակենսագրության ժանրը կարող է ունենալ ամենատարբեր մարմնավորումներ ու հանդերձանքներ, ստանալ զանազան փոխաձևություններ, մոտենալ հուշագրությանն ու օրագրությանը, խառնվել գրական դիմանկարին ու պարզապես գեղարվեստական գրականությանը՝ երբեմն ձեռք բերելով միջժանրային հատկանիշներ, որ վկայում է ժանրի թե՛ կենսունակության և թե՛ համադրական մտածողության հարստության ու լայն հնարավորությունների մասին:

ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆ

(հատված)

1

Ձյունհալն է մանկությունը, ապա ձնծաղիկն ու մանուշակը, իսկ պատանեկությունը վարարած գարունն է, վարարած կանաչները, վարարած ծաղիկներն ու վարարած արևը: Իմ ծա՛փ և ծիծաղ, իմ կապրի՛ւյտ և ոսկի պատանեկություն, հիմա նա պայծառ է և հմայիչ, և այն, ինչ-որ եղել է նրա մեջ՝ դառնություն, արցունք և սև, լողում է իմ հուշերի արծաթ ու հստակ ջրերում...

Արծաթ և հստակ ջրերում սուզվեց իմ մանկության ոսկե մակույկը, և ես դուրս եկա պատանեկության ափը:

...Ես դուրս եկա Վանից և բռնեցի Կովկասի ճանապարհը:

***

Տատս բռնեց իմ ձեռքից և ասաց.

– Պան չկա: Իմ Գուրիսին տանեմ՝ աշխարհ տիսնա:

Ձիու վրա մորեղբայրս կապել էր ուտելիք և մի սև **յափնջի**, տատս վերցրել էր մի ջրի **փարչ**, մայրս՝ Սուրենին և Խորենին, իսկ ես իմ դասագիրքը՝ «**Մեղրագետ**»-ը, ապա հորս ատրճանակը, որի համար ճարել էի մի փամփուշտ:

Մայրս իջավ սանդուղքներից և սենյակի բանալին հանձնեց տատիս: Այդ րոպեին ես հանկարծ հիշեցի, որ աշխարհագրության գիրքը ավելի անհրաժեշտ է և պետքական, ինչ-որ մոռացել էի վերցնել: Ես դիմեցի տատիս.

– Մայրի՛կ, պալնի՛ս տուր:

– Ի՞նչ կանես:

– Աշխարհագրության գիրք մոռցա...

– Չուզե՛, չուզե՛,– ասաց տատս:

– Չէ՛, պիտի առնեմ,– համառեցի ես:

Այդ րոպեին ես հանդիպեցի քեռուս՝ կատաղությամբ լեցված աչքերին: Նա թողեց ձին, մեծաքայլ մոտեցավ և, առաջին անգամ լինելով, մի ապտակ հասցրեց երեսիս, որից ականջս դժժաց:

Թաղը դատարկվում էր:

– Շո՛ւտ արեք, **ուշ ի՛**...

Շրա՛խկ. փակվեց մեր տան փողոցի դուռը՝ մեզ համար այլևս չբացվելու համար:

Այդ րոպեին բակից զիլ ու երկար կանչեց մեր աքաղաղը:

Ես երբեք, երբեք չեմ մոռանա նրա ձայնը, որովհետև ոչ մի աքաղաղ նրա նման չի կանչել:

– Ձա՛ն, մեռնեմ էդ ձենիդ,– մրմնջաց տատս, և նրա խոսքերը միայն ես լսեցի: Ես նայեցի տատիս: Նա նայում էր դեպի կապույտ երկինքը, և նրա շրթունքները դողում էին:

Երևի աղոթում էր նա:

– Վարագա սիրո՛ւն սուրբ Նշան, ճամփեն պարի անես...

– **Փյութկու** սո՛ւրբ Գևորք...– արձագանքեց մայրս և հայտնի չէ, թե ինչ բարեմաղթեց:



– Մե՛ք ոռնա, ուշ է,– նորից գոռաց մորեղբայրս:

Ես նրան այնպես բարկացած չէի տեսել:

Մեր հանդիսավոր թափորը շարժվեց:

Փողոցի ծայրից ես մի անգամ էլ ետ նայեցի:

Տատս սկսեց երգել, իսկ Այգեստանը ողողվեց շառաչուն վերջալույսով:

***

Գնում ենք անքուն և անդադար: Գաղթ է. պետք է շտապել, որովհետև ամեն րոպե թշնամին կարող է կտրել ճանապարհը:

Ձի, էշ, կով, եզ, մոլորված

ոչխարներ, արաբներ, սայլեր, ձեռնասայլեր, հետիոտն կին, ծեր, աղջիկ, տղա, մեր, մանուկ...

– Մեր մանուկ ուրացեր ի...

Գնում են և կանչում են իրար, կանչում են, կանչվռտում, հայհոյում, **հորդորում**, համոզում:

Գաղթ: Փախ: Խուճապ:

Տատս բռնում է իմ ձեռքից, մայրիկը գրկում է Սուրենին, Խորենը նույն առույգ քայլերով գնում է առաջից, ու մենք շարունակում ենք ճանապարհը: Այդ միջոցին կատարվեց մի զարմանալի բան. տատս արագ նետվեց ճանապարհի մեջտեղ և, բազմությունը ճեղքելով, անցնող մի կառքի ձիերի դիմաց կանգնեց: Ձիերը ծառս եղան և կանգնեցին:

Կառքում նստած էր Արամ **փաշան՝** երկու զինված թիկնապահներով:

– Մերութեն եմ արի քե, Արամ փաշա, Սուրենին տի՛ր գոքդ, տա՛ր... չի կանա քելե...

– Ճանապա՛րհ տուր, պառա՛վ, շտապ գործ կա... Քշի՛, քշի՛...

Տատս մի կողմ քաշվեց՝ կառքի տակ չընկնելու համար, ապա թե պարզեց երկու ձեռքերը կառքի հետևից և անիծեց.

– **Գյոռնադաբ** դառնաս, բան չեմ ասե, վեր **աստվորիս** կան գաս...

***

Գիշեր, խավա՛ր, խավա՛ր: Շուրջը դաշտեր են, բլուրներ, քարաժայռեր, ծառեր: Ու մռմռալով առաջ է գնում բազմությունը, առաջ է գնում **թառանչելով**, հառաչելով, բառաչելով:

...Ինչպե՞ս եղավ, որ ես մենակ մնացի: Ի՞նչ ուժ իմ ձեռքը հանեց տատիս ձեռքերից... Չկան Անուշը, Սուրենը, Խորենը:

– Մայրի՛կ..., Խորե՛ն...

Ես չլսեցի իմ ձայնը: Գնում եմ կարծես երազի մեջ, **հիպնոսված**, շարժում եմ ոտներս, և թվում է, որ նրանք իմը չեն:

Աչքիս դեմ երևում են հրեղեն բծեր. այդ հոգնությունից է, անքնությունից և քաղցից:

Ես ընկնում եմ ճանապարհի եզերքին:

Վանն է:

Ֆիդայիներն ու երիտասարդությունը զինվում են: Լսում եմ Իշխանի ձայնը.

– **Պետք է կռակել ներսից, իսկ դրսից կգան մեզ օգնության...,**– տատս սև գուլպա է գործում.– **ինչո՞ւ ես տխուր, մայրի՛կ.**– Տատս սև

գուլպա է գործում.– **դատաստանի տարին ի հասե, Գուրի՛ս...**

...Ձևդետ փաշայի դռանը պահակ կանգնած թուրք **ասկյարները** ներս են թողնում մի հայ լրտեսի: Մռայլ լսում է նրան Ձևդետը:

– Էֆենդի՛մ...

– Կամավորական խմբեր՝ ռուսաց բանակում... հետքեր՝ ապստամ–բության պատրաստության...

Ձևդետը ջղային ձեռքը խփում է սեղանին, և առաջին գնդակը պայթում է թուրքաց դիրքերից Այգեստանի վրա:

***

Օղակված ու կրակված՝ կրակում է Այգեստանը:

Գարուն է, ձյունհալ ու ապրիլ:

– Վարագը մեր ձեռքն է,– ու նայում է Վարագա սարը **անսասան** պահապանի պես:

Հայ մայրերը շոր են կարում, պաշար են տանում հայ քաջերին, միշտ ուրիշների **թութունից** օգտվող, Պոլսից Վան եկած Մոնշերը, հակառակ իր երիտասարդության, փողոցների դռան վրա նստած չափահասներին և ծերերին կռվի մասին խորիմաստ դատողություններ է անում ու ամեն մի հաղորդագրությամբ վերջացնում է՝ «Մի **կութիդ** տաՙս»–ով:

Բացվում է մի ծանր ու անձրևոտ օր.

– Վարագը մերոնք տվին:

Ու նայում է Վարագա սարը ահավոր թշնամու պես: Սառն է նայում և Կարմրվորա վանքը, Շուշանաց գյուղը Վարագա սարի գոգից:

Ծանր ու անձրևոտ օր: **Կոշմար** է իջել այգեստանների վրա:

***

Այգեստանը պաշարված է: Մի քանի կարևոր դիրքեր խլեց թշնամին: Ծովի վրա երևացին **գյամիներ**, սպիտակ առագաստանավեր. թշնամին օգնական զորք ստացավ, սև կայծակի նման լուրը շրջեց տնից տուն:

...Գրաված շրջաններում գյուղացիներին թուրքերը չեն սպանում. նրանց երկար **քարավաններով** թույլ են տալիս, որ Վան մտնեն՝ սովամահ անելու համար բնակչությանը, ծունկի բերելու համար կռվողներին:

– Հա՜ց, հա՜ց, հա՜ց...

Բացվում են ունևորների ցորենի և ալյուրի **թաքիրները**, մորթվում են մասնավոր – սեփական անասունները, արագ սպառվում է պաշարը, և սովն ու մահը նայում են բոլորի աչքերից ներս:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ինչի՞ հետ է Գ. Մահարին համեմատում մանկությունն ու պատանեկությունը: Ինչո՞ւ:
2. Դու ինչի՞ հետ կհամեմատես քո մանկությունը: Ինչո՞ւ:
3. Ըստ քեզ՝ ինչո՞ւ տատն ասաց՝ «Իմ Գուրիսին տանեմ՝ աշխարհ տիսնա»: Իսկապե՞ս աշխարհ տեսնելու էր տանում երեխաներին:
4. Ինչի՞ց կամ ՝ումի՞ց, ո՞ւր էին փախչում մարդիկ:
5. Ինչպե՞ս կգնահատես Արամ փաշայի վերաբերմունքը հերոսի տատին:
6. Ինչո՞ւ է տատը սև գուլպա գործում: Ինչպե՞ս կմեկնաբանես նրա՝ «Դատաստանի տարին ի հասե, Գուրի՛ս» խոսքը:

ԱՌԱՁԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ներկայացրո՛ւ վիպական գործողությունների կատարման ժամանակաշրջանը և վայրը: Քարտեզի վրա գտի՛ր նշված պատմական անունները և տեղեկություն հավաքի՛ր դրանց վերաբերյալ:
2. Համեմատի՛ր Վարագը հանձնելուց առաջ և հետո:
3. Փորձի՛ր կանխատեսել հերոսի հետագա քայլերը:
4. Ընդգծի՛ր ընթերցածդ հատվածում փոխաբերաբար գործածված բառերը՝ բացատրելով դրանց իմաստները:
5. Վերաշարադրի՛ր վեպի կարդացածդ հատվածը՝ օգտագործելով ինչպես հեղինակային, այնպես էլ սեփական բառապաշարդ:
6. Ներկայացրո՛ւ հերոսների արարքների պատճառահետևանքային կապերը:

2

...Կամավորները մտան Վան:

Նազելին, մի մեծ փունջ ծաղիկ ձեռքին, խառնվեց դեպի Խաչ-փողան շտապող բազմությանը:

Ես էլ նրա հետևից:

Խաչ-փողանի երկու կողմերը եզերող խիտ ծառերի պես կանգնել է բազմությունը:

– Եկա՞ն... եկա՞ն...

Մարդկային զուգահեռն ալեկոծվեց:

Նազելին ուզում է օղակը ճեղքել և առաջ անցնել:

– Դո՞ր կը մտնես:

– Քեզ ի՞նչ... ես ծաղիկները նվեր պիտի տամ:

– Մի՛ տա...

– Ինչի՞ չիտամ:

– Մի՛ տա, քե կասեմ:

– Ինչի՞, ինչի՞, է՛,– համառեց Նազելին:

– Քե... կը պաքի:

– Անամո՛թ,– կարմրատակած ասաց նա, շուռ եկավ, բազմությունը ճեղքեց և անցավ առաջին շարքը:

Ինչո՞ւ սիրտս ծակեց... ես այսպիսի զգացմունք դեռ երբեք, երբեք չէի ունեցել:

Նորից ալեկոծվեց բազմությունը: Վերջապես երևաց ռուսական բանակի կամավորական առաջին ձիավոր գունդը: Թնդաց երաժշտությունը:

Առաջ վազեց Նազելին, հրամանատարին պարզեց ձեռքի ծաղկեփունջը, և նրա ձեռքը հասավ մինչև հրամանատարի ծունկը: Թշնամական մի ձեռք բարձրացրեց Նազելուն, պարզեց Նազելուն իր ծաղիկներով՝ հրամանատարին. նա կարծես չքնաղ **պուպրիկ** լիներ:

Գրկեց Նազելուն հրամանատարը, իմ գուշակության համաձայն՝ համբուրեց նրան...

Ես շտապ ծառից վար իջա: Կարմրատակած՝ շարքերից դուրս թռավ Նազելին...



... Հենց որ ինձ տեսավ, չքացավ նրա դեմքի ժպիտը և ներողություն խնդրողի դեմքով ասաց,

– Ինչ էլա՞վ որ... պան չէլավ:

...Լուռ քայլեցի առաջ:

Նազելին հասավ, բռնեց իմ թևից.

– Գուրգե՞ն, դո՞ր կերթաս:

– Քե՞զ ինչ՝ դոր կերթամ:

– Մեյտեղ էրթանք:

– Քե չեմ ուզե:

– Ապա վի՞ր կուզես, Շամրիկի՞ն:

Շամրիկը Նազելու փոքր քույրն էր:

Նազելու այս հարցը դանակի պես կիսեց սիրտս, բայց ես ոչնչով չմատնեցի իմ թուլանալը և նույն խիստ տոնով հարցրի.

–Դու վի՞ր կառնես:

– Իշխանին,– պատասխանեց նա:

– Իշխանին սպանեցին:

– Գիտեմ,– տխրությամբ մրմնջաց նա՝ կարծես չիմանալով՝ ինչպես արդարանալ Իշխանի սպանության համար:

– Խմբապետի՞ն կառնես,– շարունակեցի ես իմ անողոք հարցապնդումը:

Նազելին ժպտաց երջանիկ ժպիտով և գլխով դրական նշան արավ՝ թաշկինակի եզերքը ատամներով բռնած, երկու ձեռքով մեղմությամբ քաշքշելով և ոտների վրա իրանով օրորվելով...

– Մնա՛ս բարով,– ասի ես դառնությամբ:

– Էրթա՛ս բարով,– պատասխանեց նա անտարբերությամբ, այնպիսի սպանիչ անտարբերությամբ, որ ես պատրաստ էի պառկել գետնին, հեկեկալ և հողը ճանկել...

– Կուզե՞ս քե առնեմ,– հանկարծ հարցնում է նա:

– Կուզեմ,– ասում եմ ես և զգում եմ, որ շունչս կտրվում է:

– Ախր դու շա՛տ պստիկ ես.– կշռադատում է Նազելին,– ես մեծ-մե՛ծ մարդ կուզեմ... դու իսկի բեղ էլ չունես...

– Է, դու էլ պստիկ աղջիկ ես... Ես որ մեծանամ՝ բեղ էլ կլինի,– հակաճառում եմ ես:

...Հետո նա հարցնում է.

– Դու կանա՞ս ինձ գրկե, տանե...

– Կանա՛մ,– պատասխանում եմ ես՝ իմ ուժերի և նրա թեթևության վրա վստահ:

– Չես կանա,– վստահեցնում է նա:

Ես հակաճառելու փոխարեն մոտենում եմ նրան և ուզում եմ ապացուցել, որ կարող եմ:

– Էստեղ չելնե՞ք,– ճչում է նա բարձր ձայնով,– էրթանք ձեր այգին:

– Էրթանք,– ասում եմ ես՝ երջանիկ և պատրաստակամ:

Գնում ենք:

– Դուք **վարդնոց** ունե՞ք,– հարցրեց նա, երբ մտանք մեր այգին: Ես նրան առաջնորդեցի դեպի մեր վարդնոցը:

– Մեր վարդնոցն մե՞ծ ի,– մրմնջաց նա մանկական դժգոհությամբ:

– Մերն էսքան ի,– խոցված ինքնասիրությամբ ասացի ես:

Ես բնազդաբար ասացի.

– Ես ձի է՞լ ունեմ...

Նա իր ցրված հայացքը րոպեապես դարձրեց ինձ վրա և լարվեց.

– Դո՞ր ի քո ձին:

– Քեռա՞նց տուն:– Եվ ավելի քաջալերված իմ գյուտից՝ ավելացնում եմ.

– **Հալա** քուռակ էլ ունի:

– Քուռակ չեմ ուզե,– մերժեց նա՝ սառ ջուր լեցնելով իմ գյուտի վերջին մասի վրա,– ապա ինչի՞ չես հեծնե:

– Կուզես՝ կհեծնեմ,– խոնարհ հնազանդությամբ ասում եմ ես:

– Կուզեմ, կուզեմ,– ծափ տվեց Նազելին,– ես քեզ խամար ծաղիկ **կպիրեմ**, դու ինձ կդնես ձիու վերեն...

– Չէ՛, ծաղիկներ չուզե,– չոր կերպով առարկեցի ես,– քե կդնեմ ձիու **վերեն**, **չմբուլ** կառնեմ ձեռքս, կտանեմ քե **դո՛ր** որ ուզես:

– Դե՛,– անձնատուր եղավ Նազելին՝ ոգևորված ինձնով,– կանա՞ս, ինձի գրկե:

Ես լուռ մոտեցա նրան:

...Վարդնոցի հետև ես բռնեցի նրա ծունկերից բարձր, առա թևերիս օղակի մեջ և բարձրացրի:

Նազելու ոտները հասնում էին իմ ծունկերին, իսկ իմ գլուխը հավասար էր նրա վզին:

– Չուր դո՞ր կտանես:

– Չուր դոր, որ ուզես:

– Չո՞ւր...,– նա մի րոպե մտածեց,– չուր աշխրհի ծեր...

Նա ամուր փաթաթվեց վզիս, խլրտաց և շնչեց:

Ես տարա նրան մինչև **հաջի** նանի **ալուչի** ծառը:

– Էլ տար:

Հասցրի մինչև այգու վերջը, հացիների և թեղիների մոտ:

– Աշխարհի ծերն է՞ս ի,– հարցրեց Նազելին:

– Չէ՛, շատ կա,– պատասխանեցի ես շնչասպառ՝ չուզենալով զրկվել իմ քաղցր բեռից:

– Դե, տա՛ր:

Նա նորից խլրտաց և շնչեց, թևերիս մեջ ծանրացա՛վ, ծանրացա՛վ...

Ինչո՞ւ իմ շունչը կտրվեց, նա այնքան թեթև էր:

Ես վար դրի նրան, ընկա խոտերի մեջ և սկսեցի մոլեգնաբար հեկեկալ: Ինչո՞ւ էի լալիս, ինքս էլ չգիտեի, ես շնչում էի հողի և խոտերի սուր բույրը, և դա ավելի էր գրգռում ինձ:

Իսկ քիչ հետո, երբ ես արցունքից թեթևացած և հանգստացած գլուխս բարձրացրի, Նազելին գնացել էր, Նազելին չկար...

Ես տուն մտա այն ժամանակ, երբ ծղրիդներն սկսել էին իրենց իրիկնային այգեստանյան համերգը:

Ողջ գիշեր ես չքնեցի: Մտածում էի մյուս օրը ձի գտնելու և Նազելուն ներկայացնելու մասին...

Քանի՜, քանի՜ նժույգներ անցան այդ գիշեր երագներիս կանաչ դաշտերով...

Իսկ Նազելիենց տանը ողջ գիշեր կերուխում էր:

ԱՍՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ հերոսը թույլ չէր տալիս, որ Նազելին ծաղիկները նվիրի հրամանատարին:
2. Ինչո՞վ է տարբերվում վեպի այս հատվածը նախորդից:
3. Ինչո՞ւ էր լալիս տղան:
4. Արդարացնո՞ւմ ես, թե՞ դատապարտում տղայի սուտը ձիու վերաբերյալ:
5. Ի՞նչ հուշեր, մտքեր արթնացրեց վեպի այս հատվածը:

ԱՌԱՁԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վերնագրի՛ր վեպի այս հատվածը:
2. Նկարագրի՛ր տղայի և Նազելիի բնավորությունն ու արտաքինը:
3. Ցո՛ւյց տուր հերոսների գործողությունների պատճառահետևանքային կապերը:
4. Արդարացրո՛ւ կամ դատապարտի՛ր Նազելիի գործողությունները:
5. Կռահի՛ր տղայի և Նազելիի պատմության շարունակությունը:
6. Ստեղծագործաբար վերաշարադրի՛ր այս հատվածը՝ գործածելով սովորածդ բառերն ու արտահայտությունները:

3

Ամայի այգում՝ **ածուների** մեջ, արածում էր **լղար** մի ձի՝ առանց սանձի և կապի:

Գլխապատառ թռա դեպի ձին:

Ես դիմեցի դեպի Նազելիենց տուն: Ներս մտա դարպասից, կանգնեցի ջրհորի մոտ և կանչեցի.

– Նազելի՜... Նազելի՜...

Ոչ մի պատասխան:

– Նազելի՜...

Առաջին հարկի պատուհանից երևում է սպասուհին:

– Նոր լողացավ, քնե, չի՛ կանա գա:

– Չէ՛, պիտի գա,– ասում եմ ես,– պան պիտի ասեմ:

Պատուհանից անհետացավ սպասուհին, ապա երևաց Նազելու գլուխը.

– Ինչ կասես:

– Նազելի՛,– ճչում եմ ես հուզված և ուրախ,– ձին պիրի:

Նա սառն անտարբերությամբ ասում է.

– Քո ձին ինչ պիտի անեմ որ... տես,– ու ցուցամատով ցույց է տալիս բակի ձախակողմը: Այնտեղ, ծածկի տակ կապված են հինգ–վեց ձի:

– Էդ վիրն ի,– հարցնում եմ ես շանթահար:

– Խմբապետներին...

– Իմ ձին քոնն ի...

– Խմբապետն ասաց, որ իտոնք իմն են:

– Դուրս չե՞ս գա,– հարցրի ես՝ ինչ ասելս չիմանալով:

– Դռի՞ր:

– Էրթանք... Վարդնոց:

– Չէ՛,– ծղրտաց նա,– քե չեմ ուզե... Շամրիկն էլ քե չուզե:

– Ինչ գիտես:

– Ինքն ասաց:

– Ինչ ասաց:

– Ասի՝ Գուրգենին կուզե՞ս, ասաց՝ չէ, կամավոր կուզեմ...

Սպանիչ էր հարվածը: Ես նրանց բակից դուրս թռա, մտա մեր տուն, սանդուղքների տակից վերցրի մի հաստ փայտ և կատաղած մոտեցա ձիուն: Ձին կանգնել էր անշարժ, գլուխը բարձր: Ամբողջ ուժով ես բարձրացրի փայտը նրա գլխին խփելու համար: Ձին տեղից չշարժվեց:

Ես ուշադրությամբ նայեցի նրա դեմքին:

Ձին երկու աչքով կո՛ւյր էր...

***

Գետ է, կիրճ և զարհուրելի գիշեր:

Բերկրի: **Բենդի – մահու**...

Հասել է թշնամին և կրակում է լեռներից:

Գալարվում է մի դանթեական խուճապ: Փախչում են, տրորում մեկմեկու, կանչում են իրար ու նորից:

Գիսախռիվ են կիները, իսկ տղամարդիկ՝ արյունոտ աչքերով:

Ես լսում եմ ծանոթ մի ձայն:

–Մայրի՛կ, մայրի՛կ, քելի՛, քելի՛...

Ես վազում եմ դեպի այդ ձայնը և բռնում ծանոթ մի փեշից:

Մայրս է:

– Անո՛ւշ...

– Գուրգե՛ն, մայրիկ էլ չի կանա քելե,– ասում է մայրս և լալիս է...

– Իմն էստեղ պրծավ,– ասում է տատս,– դուք գնացեք...

Ու սողում է դեպի գետը:

...**Ֆուրգոն** է գնում ճանապարհով, իսկ ես ֆուրգոնի մեջն եմ:

Ես բաց եմ անում տենդից ծանրացած աչքերս:

Դղրդալով առաջ է վազում ֆուրգոնը: Ֆուրգոնը լցված է ինձ նման անտեր երեխաներով:

***

Ես երբեք, երբեք իմ կյանքում չեմ կրել այնպիսի հիասթափություն, ինչպես կրեցի այն ժամանակ, երբ տեսա էջմիածնի խունացած դեմքը:

Շոգ: Փոշի: Կեղտոտություն: Վանքի խունացած **սիլուետը**: Իսկ պարիսպների տակ՝ իրար վրա թափած գաղթականություն:

Ճաշից հետո լուր տարածվեց, որ բոլոր որբերին տանելու են բաղնիք՝ հին շորերը ոչնչացնելու և նոր շորեր տալու:

Այդպես էլ եղավ:

Այստեղ ես շատ վնասվեցի, որովհետև ես կորցրի իմ նոր և վայելուչ շորերը և բոլորի նման հագա ծաղկավոր չթից կտրած մի շապիկ, մի վարտիք, իսկ գլխիս կապեցի մի ծաղկավոր թաշկինակ:

Ինձ մոտեցավ ինձնից մեծ, հանդուգն աչքերով մի տղա և մի կողմ տարավ: Զգուշությամբ, շուրջը նայելով, նա շապիկի տակից հանեց մի ծաղկավոր թաշկինակ և ցույց տվեց.

– Թռցուցի... Շորերդ ինչի՞ տվիր:

– Ի՞նչ անի... առին:

– Ծը, ծը, ծը... **թաժա** ին... գնա ուզի, տանենք ծախենք... էս **ալնախ** կուտամ քե:

– Չեն տա:

– Կուտան: Ասա մորքուր ունեմ, տանեմ տամ ինոր, խեղճ ի:

– Չեն տա,– պնդեցի ես՝ զգալով, որ այդ իմ ուժերից վեր է...

– Ես տեր կելնեմ, դու սո՛ւս կաց...խա՛:

– Խա՛:

Նա ներս մտավ բաղնիք և հինգ րոպե հետո դուրս եկավ արցունքները սրբելով, ձեռքին իմ շորերը: Մոտեցավ, չարությամբ ծիծաղեց արտասուքների միջից.

– Չուր լաց չելա, չտվին շանորդիք... ա՛րե:

Ես հետևեցի նրան:

Մենք դուրս եկանք վանքի դարբասից, անցանք փողոց և մտանք առաջին պատահած խանութը: Քիչ հետո մենք նստեցինք փողոցի մի քարի վրա, քանդեցինք մեր գլխի թաշկինակները և բաժանեցինք 300 հատ կոնֆետ մեր մեջ:

– Քո անունն ի՞նչ ի,– հարցրի ես նրան՝ լցված անսահման երախտագիտությամբ:

– Կուշո..., քո՞ն:

– Գուրգեն...

Մենք մտերմացանք, նա դարձավ իմ խնամատարն ու շահերի պաշտպանը: Ես իմ բաժին կոնֆետից մաս հանեցի նաև Բիլի–Մակին, որի համար և արժանացա Կուշոյի հանդիմանությանը:

Ես խոսք չգտա արդարանալու:

***

Երեկո էր:

Ես և Կուշոն նստել էինք **Գամառ–Քաթիպայի** արձանի տակ և ցրված նայում էինք մեր շուրջը: Ես արդեն մի քանի անգամ կարդացել էի բանաստեղծի կտակը և նկատում էի, որ այն հանգամանքը, որ ես կարդալ գիտեմ, իսկ նա՝ ոչ, իմ վարկը որոշ չափով բարձրացրել էր նրա աչքում:

– Բիլին գնաց, մեկ–երկու օրից մենք էլ կերթանք: Ես էլ կհիվանդանամ, դու էլ, զըմմենն էլ...

Այնքան համոզիչ հնչեցին նրա խոսքերը, որ ինձ թվաց, որ ես արդեն հիվանդ եմ, և որ հարկավոր է ինձ էլ տանել Բիլու մոտ:

–Ի՞նչ անենք,– հուսահատ հարցրի ես:

– Փախնենք:

– Դո՞ր:

– **Բազառ**:

– Բազա՞ռ:

– Խա՛:

– Էնտեղ ի՞նչ անենք:

– Կապրենք:

– Ի՞նչ ուտենք:

– Էնքա՞ն:

– Դո՞ր քնենք:

– Ըստեղի պես **սալի** վերեն չենք քնե... հիվանդանա...

– Ապա Բիլին:

Կուշոն ընկավ մտածմունքի մեջ:

Կուշոն հեռացավ:

Անցավ բավական ժամանակ: Հնչեց իրիկվա թեյի զանգը: Վերջապես երևաց Կուշոն, Բիլին հետևից:

Բիլին նայեց ինձ և խեղճ ու կրակ ժպտաց:

– Բիլի՛, փախնե՞նք,– հարցրեցի ես:

– Ես չեմ իգա:

– Կուգա՛ս,– ատամների միջից մռմռաց Կուշոն, և նրա աչքերը կիսախավարի մեջ բարկությունից փայլեցին:

Կուշոն մթնեց:

– Մարդ չեք դուք, թուլա եք, ճիժ... գնացեք մտեք օրիորդի... գիշերն էլ թացեք տակերդ: Մի օր էլ թալեն ֆուրգոնի մեջ, տանեն թալեն փոս... որդերն ուտեն...

Ասաց ու գնաց, դուրս եկավ դարբասից և լուծվեց մթության մեջ:

Մենք քնում ենք արձանի տակ:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ինչպե՞ս կգնահատես տղայի արարքն ու Նազելիի պահվածքը:
2. Տղան որտե՞ղ, ի՞նչ վիճակում է գտնում իր ընտանիքը:
3. Ի՞նչ տպավորություն է թողնում Էջմիածինը «անտեր երեխայի» վրա:
4. Ի՞նչ կարծիք ունես Կուշոյի մասին, նա լա՞վ ընկեր է: Դասընկերներ ունե՞ս: Նկարագրիր:
5. Երեխաներն ինչո՞ւ չփախան Կուշոյի հետ:

ԱՌԱՁԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նկարագրի՛ր տղայի հոգեվիճակը Նազելիի՝ նրան մերժելուց հետո:
2. Բնութագրի՛ր գլխավոր հերոսին ու նրա ընկերներին՝ արտահայտելով կամ դատապարտելով նրանց արտաքինները:
3. Ստեղծագործաբար վերաշարադրի՛ր վեպի այս հատվածը՝ նոր հերոս ներմուծելով:
4. Նշի՛ր այն հատվածը, որ ամենաշատը հուզեց քեզ: Ինչո՞ւ:
5. Երևակայությամբ նկարագրի՛ր մանկատունը, որտեղ ապրում էին տղաները:

4

***

Այդպես ուրեմն, մենք փողոցայիններ ենք:

Մենք միացանք որբանոցից փախած ուրիշ որբերի և կազմեցինք մի 10–12–հոգանոց խումբ:

Թռցնում էինք ձմերուկ, հաց, ինչ–որ հանդիպեր, իսկ գիշերներն հոգնած մեր արշավանքներից և տպավորություններից, հոգնած ու ջարդված՝ քնում էինք փակված խանութների տախտակների վրա:

Ես պարզապես գազանացել էի: Եվ մինչև անգամ մոռացել էի, թե ով եմ ես, որտեղից եմ եկել, ինչպես ընկա փողոց. այս վերջին հանգամանքն այնքան հասարակ էր թվում ինձ, որ կարծես ես ծնվել էի փողոցում, պիտի ապրեի փողոցում ու փողոցում էլ կնքեի իմ **մահկանացուն**:

Կուշոն չկար. անհետացել էր, և այս հանգամանքը Բիլուն ուրախություն էր պատճառում: Նա չէր բաժանվում ինձնից, կատարում էր իմ ցանկությունները և դրա փոխարեն վայելում էր իմ հովանավորությունը:

Ես շուտով կարողացա արժանանալ մեր խմբապետի բարեհաճ ուշադրությանը: Իսկ երբ նա իմացավ, որ ես կարդալ գիտեմ, ինձ ազատեց թռցնելու սև աշխատանքից և ինձ էր հանձնարարում լուծել մանր–մունր **կոնֆլիկտներ** և թյուրիմացություններ, որոնք, թեև անպակաս ու չնչին, բայց կենսական էին և խռովահույզ:

Ես կամաց–կամաց վերածվեցի մի տեսակ դատավորի:

***

Երևաց նա փողոցի ծայրից՝ մաքուր շորեր հագած, սև, փայլուն կոշիկներով, փափախը աջ հոնքի վրա ծռած, ձեռքին **ղամշի**, շուրջը նայելով, ըստ երևույթին սուլելով:

– Կուշո՛...

Նա ինձ նկատեց և մոտեցավ հասարակ և անժպիտ:

– Ի՞նչ կանես:

– Հե՛չ, որբանոցից փախանք:

– Բիլին դո՞ր ի...

– Բոստաններ: Դու դո՞ր ես:

– Էրևան գնացի, էկա... էսօր Բաքու կերթամ:

Խոսում է ու շարունակ նայում է շուրջը:

– Շորեր ո՞րտեղից,– հարցնում եմ ես:

– Տե՛ս...– ու նա զգուշությամբ ցույց է տալիս թղթադրամների բավական հաստ դարս:

– Որտեղի՞ց է....

– Գնանք,– ասում է նա,– Բիլուն գտնենք:

– Մենք խումբ ունենք,– ասում եմ ես՝ խոսքը մի կերպ շուռ տալու համար:

– Խո՞ւմբ:

– Խա՛...

– Քանի՞ հոգի...

– Տասներկու:

Մտածում է:

– Ձեր տեղ որտե՞ղ ի...–

Ես ցույց եմ տալիս մեր տեղը:

Կուշոն առանց ցտեսություն ասելու գնաց, համարյա թե փախավ, և այդ չափազանց տարօրինակ տպավորություն թողեց ինձ վրա:

Եվ երբ երեկոյան մենք՝ իմ և Լեմշիկի ձեռներով թռցրած ծիրանները ոչնչացնելուց հետո համառորեն քնելու նշաններ էինք ցույց տալիս, եկավ Կուշոն:

– Գուրգե՛ն,– ասաց Կուշոն,– խումբն է՞ս ի...

– Էս ի:

– Կերե՛ք:

Ու նա գրպաններից հանեց զանազան կոնֆետներ, մի լիմոն, որը չնայած ինքը կերավ, բայց ինձ վրա մեծ տպավորություն թողեց նրա առկայությունը... այնուհետև մի քանի լավաշ, մի կտոր պանիր, որտեղից որտեղ մի ներկած ձու...

Իսկ ամենից զարմանալին այն էր, որ Կուշոն ոչ մի վերաբերմունք ցույց չտվեց Բիլու հանդեպ: Նա համարյա թե նրան չնկատեց: Գալով Բիլուն, նա, երբ տեսավ Կուշոյին, խռովկանի պես քաշվեց մի քարի վրա և երեսը շուռ տվեց, իսկ երբ նկատեց Կուշոյի սառնությունը դեպի իր ներկայությունը, կամաց-կամաց սկսեց ճշտել իր դիրքը հանդեպ Կուշոյի բերած բարիքները: Իսկ երբ Կուշոն համառորեն շարունակեց նրան չնկատել, Բիլին անցավ իր մասնագիտությանը. նա սկսեց հաչել և դրանով արժանացավ խմբի լիաթոք ծիծաղին և Կուշոյի ներողամիտ, զուսպ ժպիտին:

Փոշեհագ իրիկուն:

***

Կանգնել է մեկը գնացքի պատուհանի մոտ և ժպտում է: Բիլին է այդ:

Վագոնը լիքն է որբերով: Նրանք աղմկում են, լալիս, երգում, կանչում, կանչվռտում, վժվժում:

Բիլին լուռ է, բարակ ժպտում և նայում է ինձ:

– Ի՞նչ ես հիշում, Բիլի՛...

Այդ օրը Կուշոն երկար խոսեց, շատախոսեց, պատմեց Երևանից, ապա ծրագիրներ կազմեց իր Բաքու գնալու մասին, հետո Բիլուն առաջարկեց գնալ միասին ման գալու:

Բիլին մերժեց:

Կուշոն փող առաջարկեց:

Բիլին մերժեց:

Կուշոն սպառնաց:

Այդ էլ չօգնեց:

Կուշոն հայհոյեց, թքեց և հեռացավ:

Ընկանք տախտակների վրա և քնեցինք:

...Տեսա՞ր դու, Բիլի՛, ինչպես անմռունչ հնազանդությամբ ես հետևեցի այն մարդուն, որը եկել էր մեզ որբանոց քշելու համար:

Գնում էր նա, առաջից, ես նրա հետևից՝ գլխիկոր ու հուշերով բեռնավորված, իսկ դու հետևում էիր ինձ, Բիլի...

Մեզ սրբեցին փողոցից, նրա մրից, ախտից, նստեցրին ֆուրգոնների մեջ, ֆուրգոնները շարժվեցին դեպի «Էջմիածին» կայարանը:

Երբ ֆուրգոնները դուրս եկան վանքի դարպասից, ես քեզ ցույց տվի, Բիլի...

Երկու զինված ոստիկաններ տանում էին Կուշոյին. իսկ Լեմշիկը փտած մի խնձոր նետեց մեր ֆուրգոնի հետևից:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Միանալով որբանոցից փախած որբերին՝ ինչպե՞ս էին ընկերներն անցկացնում իրենց առօրյան:
2. Ինչի՞ շնորհիվ Գուրգենը հեռու մնաց «թռցնելու սև աշխատանքից»:
3. Կուշոյի նորից հայտնվելն ինչպե՞ս անդրադարձավ մյուս երեխաների վրա:

4. Ինչո՞ւ փախավ Կուշոն՝ տեսնելով որբերի խումբը:
5. Ի՞նչ պատահեց Կուշոյին: Արտահայտի՛ր կարծիքդ:

ԱՌԱՁԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նկարագրի՛ր Կուշոյին այս հատվածում և համեմատի՛ր նախորդ հատվածների նրա կերպարի հետ:
2. Արտահայտի՛ր քո վերաբերմունքը որբերի պահվածքի նկատմամբ:
3. Ընդգծի՛ր ընթերցածդ հատվածի բանալի բառերը՝ հիմնավորելով ընտրությունդ:
4. Վեպի այս հատվածը կապի՛ր սեփական փորձիդ հետ. ի՞նչ կանեիր, եթե Գուրգենի կամ Կուշոյի փոխարեն լինեիր:
5. Նոր ավա՛րտ գրիր այս հատվածի համար՝ գործողություններին նոր ընթացք հաղորդելով:

5

***

«Ղարաքիլիսա» կայարան:

Մեզ նախաճաշ տվին, ապա թե լցրին ֆուրգոնները, և անտառապատ **շոսեով** շարժվեցինք դեպի Դիլիջան:

Անտառ:

Անցնում ենք գյուղերի միջով, իսկ այդ գյուղերն իմ աչքին փոքրիկ քաղաքներ են թվում, որովհետև տների կտուրները տափակ չեն, և ամեն տուն ունի պատշգամբ:

Անտառը, ապրում է անտառը:

Մտքերս խառնվում են, մտքերս թռչում են ետ՝ Վան և Այգեստան:

Ո՞ւր է տատս, ո՞ւր են Անուշը, Սուրենը, Խորենը:

Ո՞ւր եմ գնում ես, մեզ ո՞ւր են տանում:

Հեռվից երևում է Դիլիջանը: Բիլին ուրախ ծափ է տալիս, և անտառապատ բլուրների գոգից մեզ է նայում փոքրիկ և զվարթ մի ամառանոց:

***

Ռուսական եկեղեցու դիմաց՝ բլուրի վրա, կանգնած է միհարկանի շենք:

Կազարմա են ասում նրան:

Իսկ այդ մեր որբանոցն է:

Ես և Բիլին բռնեցինք կողք կողքի դրած երկու մահճակալները:

Մայրապետներից մեկը մի վիթխարի, առողջ և գեղեցիկ այրի էր. նրան Աքաբի էին ասում: Մի անգամ նա ինձ բարձրացրեց խաղալիքի պես և համբուրեց. ես սպառնացի, որ կհայտնեմ կատարված դեպքի մասին Օրիորդին. նա ծիծաղեց բարձր, հետո ինձ կաշառեց չամիչով, և ես լռեցի:

Մեզ հագցրին նոր շորեր, սպիտակեղեններ և չթից կարված պատ-ռաստի բլուզներ ու շալվարներ բաժանեցին՝ վառ-կարմիր ծաղիկնե-րով: Զգեստավորվելուց հետո ես նայեցի Բիլու վրա և չկարողացա զսպել իմ ծիծաղը: Նա իր մեծ շորերի մեջ չէր երևում:

Առավոտյան ես և Բիլին նստում ենք բարձր բլրին և նայում ենք ամառանոցի վրա: Լսվում է գետի խուլ խշշոցը, իսկ բլրի ստորոտին մի տուն կա՝ միհարկանի, սպիտակեցրած պատերով և կանաչաթիթեղ տանիքով: Դուրս է գալիս մի կին՝ պառավ կին, և ինքնաեռի մեջ կրակ է գցում: Հետո երևում է սպիտակ շորեր հագած մի աղջիկ և օգնում է նրան:

Քիչ հետո մի բարձրահասակ երիտասարդ, որսորդական հրացանն ու պայուսակն ուսին, անտառ է մտնում, իսկ նրան հետևում է շագա-նակագույն մի շուն:

...Մի տղա և մի աղջիկ բարձրացան արահետով դեպի անտառ, բարձ-րացան և նստեցին մեզնից քսան քայլ հեռու: Տղան գիրքը դրեց գլխի տակ և ձգվեց խոտերի վրա, իսկ աղջիկը մնաց նստած: Նա կանաչ խոտ էր քաղում և լեցնում էր տղայի դեմքին և մազերին: Հետո աղջիկը տղայի գլուխը վերցրեց և դրեց իր ծնկներին: Մի ժամ հետո, երբ նրանք շարժվեցին դեպի անտառի խորքը, խոտերի վրա թողին մի գիրք: Բիլին գնաց և բերեց գիրքը: Այդ գիրքը Շիրվանզադեի «Արտիստն» էր:

Բիլին գնաց ծաղիկներ հավաքելու, իսկ ես սկսեցի հափշտակությամբ կարդալ ու քանի կարդում էի, այնքան անտառը, որբանոցը, ծաղիկներ որոնող Բիլին, ամեն ինչ, ուրիշ տեսակ էին թվում:

– Այդ ի՞նչ է,– լսեցի իմ գլխի վերև մի ձայն: Օրիորդ Մարգոն էր: Ես հանցանքի մեջ բռնվածի

պես ոտքի կանգնեցի:

– Դու կարդա՞լ գիտես,– հարցրեց նա սիրալիր:

Ես գլխով արի.

– Այո՛...

– Ապա՞, ինչ ես կարդում... այ-այ-այ,– ժպտաց նա՝ վերցնելով և նայելով գիրքը,– այս քեզ չի կարելի կարդալ, ես քեզ համար գրադարանից հարմար գիրք կբերեմ, լա՞վ...

– Էս լավ է,– կոտրված սրտով ասի ես:

– Չէ՛, ջանի՛կ, ես քեզ համար լավերը կբերեմ...

Այդ «ջանիկ»-ը այնքան ազդեց իմ վրա, որ սիրտս լցվեց արցունքով: Ես անհուն երախտագիտությամբ նայեցի օրիորդ Մարգոյին, և նա ինձ թվաց աշխարհի երեսին եղած աղջիկների մեջ ամենագեղեցիկը, իսկ երբ նա շոյեց իմ գլուխը, ես փաթաթվեցի նրան ու լաց եղա...

Բիլին կանգնել էր հեռու և, անտառային ծաղիկների մի փունջ ձեռքին, նայում էր այս տարօրինակ տեսարանին: Վերջապես նա սիրտ առավ, մոտեցավ կամաց-կամաց և փունջը տվեց ինձ:

Ես վերցրեցի ծաղկեփունջը և պարզեցի օրիորդ Մարգոյին:

Օրիորդ Մարգոն վերցրեց ծաղիկը և ժպտուն հեռացավ: Քիչ հետո եկավ նա՝ օրիորդի, պահեստապետուհի տիկին Վարսենիկի և ինչ-որ երիտասարդի հետ՝ ինձ տեսնելու: Մոտեցան և որբերն ու շրջապատեցին ինձ:

Ինձ մանրամասն գրեթե պատմել տվին իմ կյանքը:

Օրիորդը հուզմունքից արտասվեց, իսկ որբերի մեջ տարածվեցին զանազան սենսացիաներ իմ մասին, ի թիվս որոնց, այն, որ ես տասներկու լեզու գիտեմ...

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Քո կյանքից ինչ դրվագ կամ դրվագներ հիշեցրին վեպի կարդացածդ հատվածները:
2. Որբերն ո՞ւր տեղափոխվեցին այս հատվածում և ի՞նչ ապրումներ ունեցան այնտեղ:
3. Ինչի՞ մասին է այս վեպը:
4. Գ. Մահարու կենսագրության ո՞ր դրվագը հիշեցրեց վեպի այս հատվածը:

ԱՌԱՁԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արտահայտիր քո վերաբերմունքը յուրաքանչյուր կերպարի արարքների վերաբերյալ:
2. Բնութագրիր գլխավոր հերոսին, նրա արարքները մեկնաբանիր սոցիալ-հոգեբանական տեսանկյունից:
3. Մեկնաբանիր հերոսների հույզերն ու ապրումները և դրանց ազդեցությունը քո վրա:
4. Արժևորիր քո ազգային պատկանելիության, հայրենիքի անփոխարինելիության, հայրենազրկման ու կարոտի խորհուրդը՝ ըստ վեպի:
5. Ընտրիր խորհրդանիշ բառը և դրանով կազմի աքրոստիկոս՝ թեմային համապատասխան:
6. Արտահայտիր սեփական կարծիք գրողի կյանքի մասին և նրա կյանքի պատմությունը կապի իրականության և ժամանակաշրջանի անցուդարձի և եղերական իրադարձությունների հետ:
7. Գնահատիր հեղինակի վարքագիծը և արտահայտիր քո վերաբերմունքը նրա հանդեպ:
8. Հատվածի բովանդակությունը ինչ հիշեցրեց քեզ: Ինչ համանման պատմություն ես ընթերցել կամ կինոնկար դիտել:

Ա-Ֆ

Յափնջի – այծենակաճ
փարչ – կուժ
փաշա – զինվորական պաշտոն
Փութկու սուրբ Գևորգ –Մոկաց Գևորգ (վանք)
գյոռնադաբ – գերեզմանի հող
աստվորք – ժամանակավոր, աշխարհ
թառանչելով – հևալով, հոգոց հանելով
հիպնոսված – կախարդված
ասկյարներ – զինվորներ
կութիդ – օրհնություն
կոշմար – մղձավանջ
գյամիներ – նավակներ
քարավաններով – երկար ձգվող խմբերով
թաջիրներ – վաճառականներ
պուպրիկ – տիկնիկ
վարդնոց – վարդերի պարտեզ
հալա – դեռ, ապա
չմբուլ – սանձ
ալուչի – ալոճի
ածուների – մարգերի
լղար – նիհար
գիսախռիվ – գզգզված մազերով

ֆուրգոն – բեռնասայլ
սիլուետ – ուրվապատկեր
բաժա – նոր
ալնախ – թաշկինակ
Գամառ Քաթիպա – Ռաֆայել Պատկանյանի գրական անունը
բազառ - շուկա
սալ – հարթ, ողորկ քար
կնքեի իմ մահկանացուն – մահանայի
շամշի – մտրակ
փոշեհագ – փոշով լցված
շոսեով – խճուղով
կազարմա - զորանոց

Ամփոփում

Գուրգեն Մահարու «Պատանեկություն» վեպը նրա եռապատում հուշագրության երկրորդ գիրքն է (առաջինը կոչվում է «Մանկություն», իսկ երրորդը՝ «Երիտասարդության սեմին»): Ինչպես ստեղծագործության անունն է հուշում, այստեղ Գ. Մահարին պատմում է իր դեռահասության տարիների մասին, որոնք համընկել էին Հայոց ցեղասպանության, Վանի ինքնապաշտպանության և արևմտահայության գաղթի ողբերգական ժամանակաշրջանին: Գեղարվեստական գրականության մեջ միշտ էլ էական է եղել ընթերցողին հուզելու, նրա «սրտին դիպչելու» հատկությունը: Իսկ ինչ-որ իրական հուզիչ պատմություն վավերագրելիս գրողից պահանջվում է շարադրման վարպետություն, որովհետև պատահածն ինքնին սրտառուչ է: Ահա Մահարու այս հուշագրությունը հենց այդպիսի մի երկ է: Թվում է՝ հեղինակն անգամ ջանք չի գործադրում որևէ մակդիրով, որևէ այլաբանությամբ առավել տպավորիչ դարձնելու պատմությունները, որոնք ներկայացնում է: Նա պարզապես շարադրում է այն, ինչ եղել է, միայն թե դա անում է բացարձակ անկեղծությամբ, մի կողմից՝ առանց որևէ պաթոսի ու «գունազարդման», մյուս կողմից՝ չթաքցնելով սեփական հույզերը՝ վիշտը, կարոտը, սերը:

Ինչն է ուշագրավ այս ստեղծագործության մեջ: Գրողը մեզ ներկայացնում է զարմանալիորեն անմիջական, հոգով ազատ ու շիտակ մարդկանց մի աշխարհ, մարդկանց, որոնք արհավիրքի մեջ անգամ մնում են բնական, չեն կորցնում ցավի միջից ժպտալու և ժպիտի մեջ զգայուն լինելու ապշեցնող հատկանիշը: Ամենավառ օրինակը պատանի Գուրգենի և Նազելիի թաքուն սիրո պատմությունն է, նրանց անսեթևեթ, կատարելապես անկաշկանդ երկխոսությունները, ասես մեկն ինքն իր հետ է զրուցում: Սա ստեղծագործության թերևս ամենաբանաստեղծական դրվագներից է, որտեղ

կան և՛ սեր, և՛ կատակ, և՛ ցավ, և՛ պատանեկան անբիծ բերկրանք:

Կամ, ինչպես է մորեղբայրը փախուստից առաջ տնեցիներին շտապեցնելու համար բղավում նրանց վրա: Ինչպես է տատիկը գաղթի ճանապարհին միամիտ-միամիտ խնդրում իրենց հսկող փաշային, որ Սուրեն իր ձիով տանի, քանի որ երեխան հոգնել է: Չես հասցնում ծիծաղել, երբ հոգիդ կսկիծով է լցվում: Ցաված սրտով շարունակում ես կարդալ, մեկ էլ տողերը նորից ժպիտ են գողանում շուրթերիցդ: Սա իսկական գրականության արժանիքն է: